4335

ՀԱՅՆՐԻԽ ՀԱՅՆԵ

ՅԵՐԳԵՐԻ ԳԻՐՔ

ՊԵՏՀՐԱՏ

83
Հ-27

ՀՍԽՀ
ՊԵՏՀՐԱՏ

HEINRICH HEINE

BUCH DER LIEDER

STAATSAUSGABE
ERIVAN 1935

83
Հ-27
այ.

ՀԱՅՆՐԻԽ ՀԱՅՆԵ

28 JUN 2005
02 NOV 2009

ՅԵՐԳԵՐԻ ԳԻՐՔ

Թարգմանություն
Վ. ՆՈՐԵՆՑԻ յեվ Գ. ՍԱՐՅԱՆԻ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1935

06 JUN 2013
28 JUN 2005
02 NOV 2009
4335

Տեխ. խմբ. Տ. Խաչվանքյան
Սրբագրիչ Ս. Շահբազյան

Պետհրատի տպարան
Գլավլիտ 77. Պատվեր 62.
Հրատ. 3214. Տիրաժ 3000.

ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ЗССР-Арм.ССР им. А. МЯСНИКЯНА
N-2935-52

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Հայնեի «Յերգերի գիրք»-ը նրա ընտիր յերկերի հայերեն հրատարակության առաջին հատորն ե: Յերկրորդ հատորն ընդգրկելու յեն Հայնեի քաղաքական բանաստեղծությունները ու պոեմները և յերրորդը՝ արձակը:

Ներկա հատորում զետեղված բանաստեղծությունների բառացի թարգմանությունը բնագրից կատարել ե Ս. Մանուկյանը և չափածոյի վերածել են բանաստեղծներ Վ. Նորենցը և Գ. Սարյանը:

Առաջաբանը գրել ե Ա. Բզնունին:

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀՍԽՀ-Арм. ССР
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

5337 Հ.

Հայնրիխ Հայնե

Յերգերի Գիրք

ՆԱԽԵՐԳ

Անտառում հին, կախարդական՝
Թմրի ծաղկի բույրն էր կաթում.
Լուսնի լույսը հրաշալի
Իմ հոգին էր լուռ կախարդում։

Գնում էյի, առաջ գնում,
Հնչում էր մի յերգ իմ վերից.
Սոխակն էր այդ, վոր յերգում էր,
Յերգում էր սեր, սիրո թախիծ։

Նա յերգում էր սեր, սիրո վիշտ
Ցավ արցունքներ ու ժպիտներ,
Ցնծում տխուր, ուրախ հեծում,
Զարթեցնում հին յերազ ու սեր

Գնում էյի և իմ առաջ
Փռվեց հանկարծ մի լայն բացատ,
Ու բացատի մեջ կար կանգուն
Պերճ մի դղյակ բարձրաճակատ՝

Լուսամուտներն ամբողջ փակված՝
Լռություն էր, սուգ ամեհի.
Թվում էր թե մահն էր ապրում
Պատերի մեջ այդ ամայի

Դարբասի մոտ կար մի սֆինքս,
Խառնուրդ ահի և բաղձանքի.
Թաթերով ու մարմնով՝ առյուծ,
Սակայն գլխով և կրծքով՝ կին.

Միրուն մի կին. հայացքի մեջ
Ուներ վայրի տենչանքներ բյուր,
Նրա շուրթերը կամարված
Դյութում եյին սիրատարփ, լուռ.

Այնքա՜ն քաղցր եր սոխակն յերգում,
Զգլխացա յես դյութանքին,
Յեվ համբույրով մի հովեցի
Այն սֆինքսի չքնաղ դեմքին.

Կենդանացավ արձանն իսկույն,
Հեծեց քարը մի խոր ցավով.
Նա համբույրիս բոցերն ըմպեց
Իր պապակով ու ծարավով.

Նա ծծեց իմ շունչը խոյառ,
Յեվ ցանկությամբ, կրքով արբշիռ,
Իմ խեղճ մարմնի մեջ մխրճեց
Առյուծային ճիրաններն իր.

Բո՜ղջը տանջանք, բերկրալի ցավ.
Անսահման ցավ, անվերջ բերկրանք,
Մինչ համբույրն ինձ կյանք եր տալիս,
Ճիրաններն՝ վերք, տառապանք.

Սոխակն յերգում եր՝ «Ո՜վ սֆինքս,
Ով սեր, ինչո՞ւ համար այդքան
Մահվան տանջանք ես դու խառնում
Ամեն բախտի, յերջանկության.

Չքնա՜ղ սֆինքս, ո՜, դու լուծիր
Հանելուկն այդ հրաշալի,
Վորի մասին մտածում եմ
Արդեն քանի՜ հազար տարի».

ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ՏԱՆՋԱՆՔՆԵՐ

Ա

Տեսիլներ

1

Յերազեցի վայրի սիրտ տենչը վառ,
Ծոպոպլիկներ, մրտենիներ, վարդ ու ցող,
Քաղցր շուրթեր, խոսքեր դառն ու խոցող,
Թախծոտ յերգի մեղեդիներ տրտմալար։

Դժգունեցին անուրջներս, ցնդեցին,
Ցնդեց պատկերն այն տեսլական մշտաթով.
Մնացել է միայն այն, ինչ յես խանդով
Հուսեցրել եմ հանգերի մեջ իմ նրբին։

Մնացիր դու, դու ել գնա, յերգ իմ վորբ,
Փնտրիր կորած այն պատկերը տեսլական,
Յեթե գտնես՝ իմ վողջույնը տուր նրան,—
Թող ստվերին շունչս հասնի անսփոփ։

2

Տեսա յերազ մի անսովոր,
Յեվ հաճելի, և՛ ահավոր.
Աչքերս դեռ ահով են լի,
Սիրտս ալեկոծ զարհուրելի։

Մի պարտեզում հրաշագարդ
Շրջում եյի անհոգ, զվարթ,
Ժպտում եյին ինձ ծաղիկներ,
Սիրտս լցնում ծիծաղ ու սեր։

Թռչունները յերգում եյին
Սիրո յերգեր հեքյաթային,
Արևը վառ վոսկի, քրքում
Ծաղիկներն էր գույն-գույն ներկում։

Բույր էր ծորում ամեն խոտից,
Ոդն էր թեթև ու բուրալից.
Շողշողում էր շուրջս ամեն բան
Դյութիչ փայլով շքեղության։

Ծաղկաստանում այդ բազմաթույր
Կար մարմարե մի ջինջ աղբյուր.
Ու մի աղջիկ չքնաղագեղ
Ճերմակ շոր էր լվանում այնտեղ։

Անուշ աչքեր, մեղուշ այտեր,
Դեղձան վարսեր,—սրբի պատկեր.
Նայում եյի յես ակնապիշ,
Յեվ ծանոթ էր, և՛ խորթ, ուրիշ։

Լվանում էր նա շորն արագ,
Մրմնջում մի քաղցր յեղանակ.—
«Հոսիր արագ, հստակ իմ ջուր,
Ու կտավըս լվա մաքուր»...

Յերբ յես նրա մոտը հասա,
Շշնջացի,—«ո՜, ինձ ասա,
Ով դու աղջիկ, կենդանի վարդ,
Ո՞ւմ համար է զգեստը այդ»։

Պատասխանեց աղջիկն այսպես.
—«Քո պատանն եմ լվանում յես».
Ասաց՝ թե չէ, պատկերը լուռ
Հալվեց, ցնդեց, ինչպես փրփուր։

Դյութված կանգնել եյի մենակ
Մութ անտառում, ծառերի տակ.
Նայում եյի յես տեսլացած
Մեծ ծառերին յերկնասլաց։

Հեռվից լսվում էր խուլ մի ձայն,
Կարծես կացնի զարկից էր այն.
Յես, ճեղքելով թուփ ու մացառ,
Հասա ազատ մի բացավայր։

Կանաչ վայրում այդ գեղանի
Կանգնած էր մի հսկա կաղնի,
Յեվ աղջիկն այն կուռ հարվածով
Կաղնու բունն էր կտրում կացնով։

Հաջորդում էր զարկը զարկին,
Ու աղջիկն էր յերգում կրկին.—
«Շողուն յերկաթ, տախտակներ տուր,
Մի պահարան շինենք ամուր»։

Ցերբ յես նրա մոտը հասա,
Շշնջացի. — «ո՛, ինձ ասա,
Ով դու աղջիկ, կենդանի վարդ,
Ո՞ւմ համար է պահարանն այդ»։

Պատասխանեց նա անհապաղ.
—«Քեզ համար եմ շինում դագաղ»
Ասաց՝ թե չէ, պատկերը լուռ
Հալվեց, ցնդեց, ինչպես փրփուր։

Ընկած եր լերկ և ընդարձակ
Խոպան մի դաշտ իմ վոտքի տակ
Կանգնել եյի այնտեղ շվար
Ցեվ գարհուրած, և՛ դողահար։

Շրջում եյի դաշտում խոպան.
Տեսա հեռվում ճերմակ մի բան.
Առաջացա, տեսա այնտեղ
Նույն աղջկան չքնաղագեղ։

Նա խոպանում այդ ահավոր
Բահով փորում եր փոս մի խոր.
Նայում եյի այդ աղջկան՝
Այնքան սիրուն՝ դաժան ինչքան։

Շարժում եր նա բահը արագ,
Մրմնջում մի քաղցր յեղանակ.
—«Բահ իմ շողուն և սուր, և՛ նուր,
Փորիր փոսը դու լայն ու խոր»։

Ցերբ յես նրա մոտը հասա,
Շշնջացի.—«ո՛, ինձ ասա,
Ով դո՛ւ աղջիկ, կենդանի վարդ,
Ինչո՞ւ համար է փոսը այդ»։

Պատասխանեց դաժան ու սառ.
—«Գերեզման է դա քեզ համար»։
Ցերբ այդ ասեց՝ փոսն ահավոր
Ավելի լայն բացվեց ու խոր։

Ցերբ փոսի մեջ նայեցի լուռ
Զգացի մի ահեղ սարսուռ,
Ցատկեցի յես փոսն այդ խավար.
Ու զարթնեցի. յերազ եր մառ։

Յերբ յես նրա մոտը հասա,
Շշնջացի. — «ո՜, ինձ ասա,
Ով դու աղջիկ, կենդանի վարդ.
Ո՞ւմ համար ե պահարանն այդ»։

Պատասխանեց նա անհապաղ.
—«Քեզ համար եմ շինում դագաղ»
Ասաց՝ թե չե, պատկերը լուռ
Հալվեց, ցնդեց, ինչպես փրփուր։

Ընկած եր լերկ և ընդարձակ
Խոպան մի դաշտ իմ վոտքի տակ
Կանգնել եյի այնտեղ շվար
Յեվ զարհուրած, և՛ դողահար։

Շրջում եյի դաշտում խոպան.
Տեսա հեռվում ճերմակ մի բան.
Առաջացա, տեսա այնտեղ
Նույն աղջկան չքնաղագեղ։

Նա խոպանում այդ ահավոր
Բահով փորում եր փոս մի խոր.
Նայում եյի այդ աղջկան՝
Այնքան սիրուն՝ դաժան ինչքան։

Շարժում եր նա բահը արագ,
Մրմնջում մի քաղցր յեղանակ.
—«Բահ իմ շողուն և սուր, և՛ նոր,
Փորիր փոսը դու լայն ու խոր»։

Յերբ յես նրա մոտը հասա,
Շշնջացի.—«ո՜, ինձ ասա,
Ով դո՜ւ աղջիկ, կենդանի վարդ.
Ինչո՞ւ համար ե փոսը այդ»։

Պատասխանեց դաժան ու սառ.
—«Գերեզման ե դա քեզ համար»։
Յերբ այդ ասեց՝ փոսն ահավոր
Ավելի լայն բացվեց ու խոր։

Յերբ փոսի մեջ նայեցի լուռ
Զգացի մի ահեղ սարսուռ,
Ցատկեցի յես փոսն այդ խավար.
Ու զարթնեցի. յերազ եր մառ։

3

Սև ֆրակով տեսա ես ինձ յերազում,
Թևնոցներով, բաճկոնակով նուրբ բեհեզ,
Գնում էյի իբր շքեղ մի հանդես
Յեվ ինձ մոտ էր սիրականն իմ սիրասուն

Վողջունեցի և ասացի. — «Հա՞րս եք դուք.
Վոր այդպես է, յերջանկություն մաղթեմ ձեզ»
Հանդիսավոր խոսքն այդ դժվար էր այնպես.
Վոր սեղմում էր իմ կոկորդը, ինձ խեղդում։

Հանկարծ արցունք ցայտեց նրա աչքերից,
Յեվ արցունքի կոհակներում նրա լույս
Անհետացավ չքնաղ դեմքը սիրելույս

Ո՜վ քաղցր աչքեր, սիրո աստղեր բերկրալից
Թեպետ խաբում եք յերազում և թե լուրջ՞.
Հավատում եմ սակայն ձեզ անմռունչ։

4

Յերազում տեսա զվարճալի մի մարդ,
Նա մեծ քայլերով, արագ էր քայլում.
Հագուստը մաքուր, ընտիր ու փայլուն,
Իսկ ինքը ներքուստ կոշտ, կեղտոտ ու վատ։

Խեղճ էր նա ներքուստ, դատարկ, անիմաստ,
Սակայն արտաքուստ վայելուչ էր խիստ.
Քաջության մասին բարբառում էր միշտ,
Ինքնահավան էր, խրոխտ ու հպարտ։

«Գիտե՞ս ով է այդ. արի՛ նայելու»
Ասաց յերազի աստվածը հանկարծ
Ու ցույց տվեց ինձ մեջը հայելու.

Սիրածիս կողքին այդ մարդն էր կանգնած,
Խորանի առաջ «այո» ասացին.
Յեվ դևերն՝ «ամեն» նենգ բրբջացին։

5

Ինչո՞ւ արյունս յեռում է խենթ,
Յեվ սիրտս ինչո՞ւ բռնել է տենդ.
Ինչո՞ւ յեմ յես այրվում տապում,
Տապն ինչո՞ւ յե սիրտս լափում։

Յեռում է իմ արյունը վառ,
Քանզի տեսա յերազ մի չար.—
Յեկավ մութի վորդին և ինձ
Առավ, տարավ իր յետևից։

Տարավ ինձ մի լուսավոր տուն,
Ուր խրախ կար, զվարճություն,
Վառվառ ժամեր, շողշողուն ջահ.—
Անցա սրահն ու ներս մտա։

Հանդես եր ճոխ հարսանեկան,
Անթիվ հյուրեր նստած սեղան.
Այնտեղ եյին հարսն ու փեսան,
Ա՜խ, սիրածիս այնտեղ տեսա։

Իմ սիրածն եր, ա՜խ, հարսը այդ,
Իսկ փեսան եր օտար մի մարդ.
Նրանց յետև տխուր, վհատ
Կանգնեցի յես լուռ, աննկատ։

Յերգ է, թրնդյուն. յես լուռ եմ միշտ.
Այդ աղմուկն ինձ առթում է վիշտ.
Յերջանիկ է հարսը այնքա՜ն,
Նրա ձեռքն է սեղմում փեսան։

Մի բաժակ է փեսան լցնում,
Ըմպում, կիսատ՝ հարսին մեկնում.
Նա ժպտում է մեղմ, գոհունակ,
Խըմում, ավա՜ղ, արյունն իմ տաք։

Մի խնձոր է հարսը վերցնում
Յեվ փեսային է մատուցում.
Նա դանակով անում է կես.—
Ա՜խ, իմ սիրտն եր՝ կիսվեց այդպես։

Ծածուկ նայում, ժպտում են լուռ.
Փեսան հարսին գրկեց ամուր,
Համբույր առավ վարդ շրթերից,
Ա՜խ, այդ մահն եր՝ համբուրեց ինձ։

Ա՜խ, իմ լեզվին իջավ կապար,
Ու չասեցի յես վոչ մի բառ.
Սկսվեց պար, յերգ ու աղմուկ,
Նրանք պարող առաջին զույգ...

Մնացի լուռ, վորպես արձան,
Նրանք պարով յեկան, անցան.
Փեսան մի բան ասավ կամաց,
Հարսը կարմրեց, բայց լուռ մնաց։

6

Երազիս մեջ, լուռ գիշերին,
Ինձ մոտ յեկավ իմ սիրելին.
Կախարդական, հեքյաթային
Ուժով յեկավ իմ սիրուհին։

Զքնաղ դեմքին նայում եմ յես,
Նա ժպտում է քնքուշ և հեզ,
Ժպտում այնպես, վոր փոթորկված
Սիրտս այսպիսի խոսքեր պոռթկաց. —

«Ա՛ռ ամեն բան, ինչ ունեմ յես,
Ինչ թանգ ունեմ՝ նվիրեմ քեզ,
Միայն թե կաց հիմա ինձ մոտ
Էս գիշերից մինչ առավոտ»։

Ու ինձ նայեց նա անձկալի
Սիրով, թախծով աչքերը լի.
Ապա ասաց.—«Ի տրխուր,
Յերջանկություն, ո, դու ինձ տուր»։

«Իմ կյանքն անուշ, արյունն իմ տաք
Յես քեզ կտամ, ով հրեշտակ,
Այն՝ վոր չեմ տա դրախտի համար,
Քեզ եմ տալիս սիրահոժար»։

Փոթորկվում եմ յես կատաղի,
Նա ժպտում է, վորպես ծաղիկ,
Ու միշտ կրկնում խոսքերը յուր՝
«Յերջանկություն, ո՛, դու ինձ տուր»։

Իմ հոգու մեջ խոսքն այդ անեղ
Հոսեցնում է բոցի հեղեղ՝
Վորոտալով իմ ականջում.
Յես հազիվ եմ տեսնում, շնչում։

Հրեշտակներ են գալիս հանկարծ՝
Ծածանչավոր, ճերմակ հագած,
Հետո մի խումբ՝ ճիվաղների
Սև մի խուժան, գարշ, ահռելի։

Սկսվեց մի կռիվ դաժան,
Հրեշտակները պարտված փախան.
Իսկ սև խումբը, այդ կռվից վերջ,
Լուծվեց, կորավ մշուշի մեջ։

Տենչում էյի յես սիրո հուր,
Պահել էյի գրկումս ամուր
Այծյամի պես սիրականիս,
Վոր ինձ փարվում էր ու լալիս։

Հասկանում եմ յես լացը այդ.
Համբուրում եմ բերանը վարդ. —
«Հերիք, հոգյակ, արցունք ու լաց,
Տուր իմ սրտին նոր բոց ու կայծ։

Տուր իմ սիրույն նոր բոց ու կայծ».
Իմ արյունն է սառչում հանկարծ. —
Դղրդում է յերկիրն հիմքից,
Մի բաց անդունդ նայում է ինձ։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՍՍ-Арм.-ССР
им. А. МЯСНИКЯНА
№-2333-52

Այդ անդունդից յելնում են վեր
Ահռելի, գարշ սև ճիվաղներ.
Անհետացավ սերս դժգույն,
Յես մնացի մենակ, նկուն։

Ճիվաղները ինձ պաշարում
Ու շրջան են կազմում, պարում.
Մոտենում են, բռնում են ինձ
Ու քրքջում գոռ, թունալից։

Նեղանում է շրջանը խիստ,
Նույն բզզյունն եմ յես լսում միշտ. —
«Յերջանկությունըդ հանձնել ես,
Հիմա մերն ես դու մշտապես»։

7

Արյունոտ ընկեր, դու ինչու համար
Վարանում ես դեռ, յերբ վարձն ստացար.
Այս կես գիշերին, արդեն անհամբեր
Իմ նշանածին սպասում եմ դեռ։

Գերեզմանից գարշ հովեր են սուլում.
Զտեսա՞ք, հովեր, դուք իմ սիրելուն.
Ու անթիվ դեմքեր դժգույն, մահաշունչ՝
«Այո՛» ասելով խոնարհվում են լուրջ։

Ի՞նչ լուր ես բերել, ասա ինձ արագ,
Հրե հագուստով դու սև խեղկատակ.
«Իմ մեծ տերերս շուտով պիտի գան՝
Կառքին լծած խոլ վիշապներ հսկա»։

Ի՞նչ կա սիրելի, գորշադեմ մարդուկ,
Մեռած մագիստրոս, ի՞նչ եք ուզում դուք.
Նայում է նա լուռ, տխուր, ակընդետ,
Գլուխը շարժում, վերադառնում յետ։

Ագին շարժելով նա ի՞նչ է հեծում։
Ինչու՞ յեն կատվի աչքերն առկայծում.
Ինչու՞ յեն վոռնում կանայք հերարձակ։
Օրորի յե՞րգ ես մրմնջում, դայա՛կ։

Այդ յերգով տանը նստիր դու, տիկին.
Իմ մանկությունը յետ չի գա կրկին.
Չե՞ վոր իմ տանն է, հարսանյաց հանդես,
Զուգված հյուրեր են գալիս, ահա, տե՛ս։

Ահա, ձեր ձեռքին, ազնիվ պարոններ,
Վոչ թե գլխարկ է, այլ՝ գլուխն է ձեր
Դո՛ւք, հագած կախաղանի հանդերձանք
Բամին անցել է, ինչքա՞ն ուշացաք։

Ահա ավելի կոթ պառավն. ո՛, դու,
Որհնիր ինձ, մայրիկ, որհնիր քո վորդուն.
Նրա շուրթերը դժգույն դողում են,
Ու նա ասում է «հավիտյանս ամեն»։

Մտնում են վեց զույգ յերաժիշտներ, տես,
Մի կույր յերգչուհի սողոսկում է ներս.
Հայլիան է ասես, զույնզգույն հագած,
Մեռել թաղողին բերում շալակած։

Տասներկու կույսեր պարում են շեմքին,
Նրանց բերում է կավատ մի՝ շիլ կին.
Ապա տասներկու ցանկասեր պատոր
Լիրբ յերգ են սուլում, քանց յերգ հոգևոր։

Դո՛ւ, հնավաճառ, իզուր ես դոռում,
Մուշտակդ պետք չե ինձ քավարանում.
Այնտեղ շատ տաք է. — վառում են ձրի
Կմախք հարուստի, մուրացիկների։

Ծաղիկ վաճառող կուզիկ աղջիկներ
Սենյակի շուրջը թավալվում են դեռ.
Ե՛յ, բուքի դեմքեր, մարախի վոտներ.
Հերիք ճարճատեն վոսկորները ձեր։

Ամբողջ դժոխքն է թնդում սանձակոծ,
Վխտում, աղմկում ահեղ, բազմահոծ։
Դատապարտության վալ՛սն է ցընցում.
Լո՛ւռ, կգա, ահա և իմ հարսնացուն։

Լռի՛ր, հեռացի՛ր, ամբոխ խաժամուժ.
Հազիվ լսում եմ յես իմ ձայնն անուժ.
Ահա՛, կառքը չե՞՝ այդպես դղրդաց,
Խոհարարուհի, գնա՛, դուռը բա՛ց։

Բարի գալուստ, իմ սիրական, իմ գանձ,
Բարի գալուստ ձեզ, պատառ՝ ոժտված
Ջխու ագիով, ձիու վոտներով.
Յես ձեր մեծության ծառան եմ սիրով։

Ո՛վ իմ թանգագին, ինչքա՞ն յես դժգույն,
Պսակելու յե մեզ պատառն իսկույն.
Նրան վարձ կտամ թանգ, արյունս վառ,
Բայց այդ էլ քիչ է քո սիրո համար։

Ծունր իջիր կողքիս, սիրական, ահա.
Նա ծունկ է իջնում, ո՛, յերջանիկ պահ.
Նա ընկնում է իմ բարձրացող կրծքին.
Գրկում եմ նրան՝—գերի հաճույքին։

Մեր գանգուրները հյուսվում են իրար,
Իմ սրտի վրա՝ ջերմ սիրտն է նրա.
Ու բաբախում են յերկուսն էլ սիրով.
Մենք վեր ենք ճախրում սիրո թևերով։

Ծփում ենք, լողում խնդության ծովում,
Աստծո բարձունքին, այնտեղ վերևում.
Սակայն մեր գլխին, վորպես պատիժ մեծ,
Ահռելի դժոխքն իր ձեռքը գրեց։

Խավարի վորդի մեր պաստորն եր դա,
Վոր արնոտ գիրքը սկսեց կարդալ.
Հնչում ե նրա լեզուն սրբապիղծ,
Կարդում ե որենք, նզովում ե ինձ։

Շուրջը աղմուկ ե, յեռ ու զեռ, շփոթ,
Ասես մրրիկ ե, կայծակ ու վորոտ.
Հանկարծ շողշողաց մի կրակ հանդարտ,
Ցեվ «ամեն» ասաց պառավը կախարդ։

8

Հրաժեշտ տված սրտիս տիրուհուն,
Սարսող գիշերով մռայլ ու խոհուն
Անցնում եյի յես գերեզմանոցից.
Շիրիմները լուռ կանչում եյին ինձ։

Մի յերաժշտի շիրմաքար մենակ
Ինձ եր միշտ նայում լուսնի լույսի տակ
«Գալիս եմ, յեղբայր» շշնջաց մի ձայն,
Ու շիրմից կարծես դեմքեր բարձրացան։

Ցես տեսա նրան, կիթառահարին,
Բարձրացավ նստեց իր շիրմաքարին
Ցեվ հնչեցրեց հին լարերը լաված,
Ձգված իր ձայնով ձայնակցեց նրանց։

«Հին յերգս եք դուք դեռևս հիշում,
Վոր իմ սիրտն եր սիրով կիզում—
Դուք, խուլ լարեր, տխուր լարեր։

Հրեշտակները՝ յերկնային խինդ,
Սատանան՝ ցավ դժոխային,
Մարդիկ նրան կոչում են սեր»։

Հազիվ ասաց նա այդ բառը վերջին,
Բոլոր դամբաններն իսկույն բացվեցին,
Ու դուրս խուժեցին մշուշված դեմքեր
Շրջան կազմեցին, սկսեցին յերգել—

«Սեր, սեր հզոր, որ ուժդ մեզ
Այստեղ խոնավ տակը հողի
Տվեց և՛ նինջ և՛ անկողին,
Ի՞նչ ես ճչում գիշերն այսպես»։

Այսպես խաժամուժ ճչում են, կանչում,
Հեծում, հեկեկում, հառաչում, շաչում,
Կիթառահարին խեղճ՝ առած մեջտեղ,
Որ նվագում է խենթ ու խելահեղ։

«Բրավո, բրավո, այդպես զվարթ,
Բարի գալուստ,
Դուք այդպես շուտ
Լսեցիք իմ խոսքը կախարդ։
Տարիներով պառկում ենք մութ
Սենյակներում, լուռ՝ որպես մուկ.
Այսօր յեկեք լինենք զվարթ,
Ձեր ուզածով թող լինի այդ։
Տեսե՛ք, չկա՛ լսող, լրտես,
Տխմար էյինք կյանքում,—քանզի
Մոլի մի սեր
Գրել էր մեզ,
Այսօր ժամանց թող չպակսի։
Ասեք, ասեք ճիշտը հիմա,
Ի՞նչը տվեց ձեզ վիշտ ու մահ.
Ինչպե՞ս հասցրեց
Ձեզ դագաղի
Սիրո մոլուցքը կատաղի»։

Մի վտիտ էակ, թեթև ինչպես հով,
Վազում է մեջտեղ, յերգում խուլ ձայնով.

«Դերձակ էյի յես, բանվոր՝
Ասեղով ու մկրատով,
Բանում էյի ամեն որ

Ասեղով ու մկրատով,
Յեկավ աղջիկն իմ տիրոջ
Ասեղով ու մկրատով,
Անխիղճ խոցեց սիրտս առողջ՝
Ասեղով ու մկրատով»։

Խումբը քրքջաց ուրախ, խելահեղ.
Յերկրորդը շատ լուրջ կանգնեցավ մեջտեղ

«Ռինալդո Ռինալդինին,
Շինդրեհաննո, Որլանդինին,
Յեվ Կարլ Մոորին հատկապես
Ինձ որինակ ընտրեցի յես։

Պատիվ ունեմ հայտնելու ձեզ,
Սիրում էյի յես նրանց պես,
Կնոջ պատկերն ամենազեղ
Դարձրել էր ինձ խենթ, խելահեղ։

Կրում էյի մեծ տառապանք,
Սերը հասցրեց ինձ խորտակման,
Ու կոխեցի ձեռս դատարկ
Մի շատ հարուստ մարդու գրպան։

Ու նկատեց մի ոստիկան,
Որ արցունքներն իմ անձկության
Յես ուզում եմ սրբել գաղտնի՝
Թաշկինակով այն գրպանի։

Ոստիկաններն իսկույն յեկան,
Վարժ իրենց մեղմ սովորության,
Ինձ տարան բանտ. նա մայրաբար
Ընդունեց ինձ գրկում իր սառ։

Այնտեղ, արբած անուշ սիրով,
Նստեցի յես բուրդ մանելով.
Մինչև հոգիս գնաց հավետ
Ռինալդոյի ստվերի հետ»։

Խումբը քրքջաց ուրախ, խնդահեղ,
Երրորդն շպարված՝ կանգնեցավ մեջտեղ.
«Բեմի արքա էյի, հարմար
Սիրահարի դերի համար.
«Դո՛ւք տե՛ր» գոռում էյի խիզախ,
Ու մրմնջում շատ քնքուշ «մե՛խ»։

Մորտիմերն էր դերն իմ հաջող.
Ջքնաղ Մարիան էր ինձ տանջող.
Հակառակ իմ խաղին շատ լավ,
Չեր հասկանում նա ինձ բնավ։

Հույսս կտրած՝ կոչեցի—«Ա՜հ
Իմ սրբուհի, ո՜վ Մարիա»
Եվ կուրծքս արի դաշունահար՝
Ավելի, քան իրոք հարկ կար»։

Խումբը քրքջաց ուրախ, խնդահեղ,
Գանգրահեր մեկը կանգնեցավ մեջտեղ։
«Պրոֆեսորս էր անհամ խոսում,
Քնում էյի, չէյի լսում.
Դուր էր գալիս ինձ ավելի
Նրա դստրիկը նայելի։

Ժպտում էր ինձ նուրբ, խաղաղիկ,
Կյանքիս լույսն այդ, ծաղկանց ծաղիկ,
Վորին, ավա՜ղ. քաղեց ագահ
Կոշտ ու հարուստ մի սրիկա։

Կին ու հարուստ անիծեցի,
Իմ գինու մեջ թույն ածեցի
Մահը ինձ հետ խմեց կենաց,
«Ես բարեկամ Հայնն եմ»—ասաց»։

Խումբը քրքջաց ուրախ, խնդահեղ.
Մի պարան վզին՝ մեկն յեկավ մեջտեղ։

«Շատ գոհ էր կոմսը—բաժակը ձեռքին,
Հպարտ՝ դստրիկով, քարերով անգին.
«Ով կոմս, չեմ ուզում քարերդ անգին
Տենչում եմ միայն քո լույս դստրկին»

Երկուսն էլ պահվում էյին փակի տակ.
Ծառաներ ուներ իշխանն՝ անքանակ.
Սակայն ինձ ինչ հոգս փականք ու ծառա,
Ես վոտքս դրի սանդուխի վրա։

Մագլցում էյի ու վերև նայում,
Լսում եմ հանկարծ՝ ինձ են հայհոյում.
«Այդ ինչ ես անում, տղաս, առանց ինձ,
Չե՞ վոր յես եմ հենց տերը այդ գանձի»։

Այսպես ասաց ինձ կոմսը ծաղրելով.
Շրջապատվեցի յես ծառաներով.
«Խուժա՛ն, հեռացեք, յես գող չեմ գանձի,
Գողանում էյի յես իմ սիրածին»։

Ամեն խոսք արդեն իզուր էր, պարապ.
Բերեցին իսկույն պատրաստի պարան.
Ու յերբ արևը կրկին տեսավ ինձ,
Ես ճոճվում էյի իմ կախաղանից»։

Խումբը քրքջաց ուրախ, խնդահեղ.
Գլուխն իր ձեռքին՝ մեկն յեկավ մեջտեղ։
«Ես վորսորդ դարձա սիրո տանջանքից,
Թափառում էյի լուռ, անկարեկից։
Մի ագռավ գլխիս կռավում էր հար՝
«Գլուխը վար առ, գլուխը վար առ»։

Ես խորհում էյի՝ «վո՜հ, մի ագռավի
Սիրականիս լավ նվեր կլինի».
Ու վորսորդական աչքով սրատես
Ամեն թուփ, մացառ զննում էյի յես։

Խումբը քրքջաց ուրախ, խելահեղ,
Յերրորդն շպարված՝ կանգնեցավ մեջտեղ.
«Բեմի արքա էի, հարմար
Սիրահարի դերի համար.
«Դո՛ւք տե՛ր» գոռում էի խիզախ,
Ու մրմնջում շատ քնքուշ «ա՜խ»։

Մորտիմերն էր դերն իմ հաջող.
Զքնաղ Մարիան էր ինձ տանջող.
Հակառակ իմ խաղին շատ լավ,
Չէր հասկանում նա ինձ բնավ։

Հուսաս կտրած՝ կոչեցի—«Ա՜հ
Իմ սրբուհի, ո՜վ Մարիա»
Յեվ կուրծքս արի դաշունահար՝
Ավելի, քան իրոք հարկ կար»։

Խումբը քրքջաց ուրախ, խելահեղ,
Գանգրահեր մեկը կանգնեցավ մեջտեղ.
«Պրոֆեսորս էր անհամ խոսում,
Քնում էի, չէի լսում.
Դուր էր գալիս ինձ ավելի
Նրա դստրիկը նազելի։

Ժպտում էր ինձ Նուրը, խաղաղիկ;
Կյանքիս լույսն այդ, ծաղկանց ծաղիկ.
Վորին, ավա՜ղ. քաղեց ագահ
Կոշտ ու հարուստ մի սրիկա։

Կին ու հարուստ անիծեցի,
Իմ գինու մեջ թույն ածեցի
Մահը ինձ հետ խմեց կենաց,
«Յես բարեկամ Հայնն եմ»—ասաց»։

Խումբը քրքջաց ուրախ, խելահեղ.
Մի պարան վզին՝ մեկն յեկավ մեջտեղ.

«Շատ գոհ էր կոմսը—բաժակը ձեռքին,
Հպարտ՝ դստրիկով, քարերով անգին.
«Ով կոմս, չեմ ուզում քարերդ անգին
Տենչում եմ միայն քո լույս դստրիկին»։

Յերկուսն էլ պահվում էին փակի տակ.
Ծառաներ ուներ իշխանն՝ անքանակ.
Սակայն ինձ ինչ հոգս փականք ու ծառա,
Յես վոտքս դրի սանդուխի վրա։

Մագլցում էի ու վերև նայում,
Լսում եմ հանկարծ՝ ինձ են հայհոյում.
«Այդ ինչ ես անում, տղաս, առանց ինձ,
Չէ՞ վոր յես եմ հենց տերը այդ գանձի»։

Այդպես ասաց ինձ կոմսը ծաղրելով.
Շրջապատվեցի յես ծառաներով.
«Խուժա՛ն. հեռացեք, յես գող չեմ գանձի,
Գողանում էի յես իմ սիրածին»։

Ամեն խոսք արդեն իզուր էր, պարապ.
Բերեցին իսկույն պատրաստի պարան.
Ու յերբ արևը կրկին տեսավ ինձ,
Յես ճոճվում էի իմ կախաղանից»։

Խումբը քրքջաց ուրախ, խելահեղ.
Գլուխն իր ձեռքին՝ մեկն յեկավ մեջտեղ.
«Յես վորսորդ դարձա սիրո տանջանքից,
Թափառում էի լուռ, անկարեկից.
Մի ագռավ գլխիս կռավում էր հար՝
«Գլուխը վար առ, գլուխը վար առ»։

Յես խորհում էի՝ «վո՜հ, մի աղավնի
Սիրականիս լավ նվեր կլինի».
Ու վորսորդական աչքով սրատես
Ամեն թուփ, մացառ զննում էի յես։

Խումբը քրքջաց ուրախ, խելահեղ,
Յերրորդն շպարված՝ կանգնեցավ մեջտեղ.
    «Բեմի արքա էյի, հարմար
    Սիրահարի դերի համար.
    «Դո՛ւք տե՛ր» գոռում էյի խիզախ,
    Ու մրմնջում շատ քնքուշ «մե՛խ»։

    Մորուքներն էր դերն իմ հաջող.
    Չքնաղ Մարիան էր ինձ տանջող.
    Հակառակ իմ խաղին շատ լավ,
    Չեր հասկանում նա ինձ բնավ։

    Հույսս կտրած՝ կոչեցի—«Ա՜հ
    Իմ սրբուհի, ո՜վ Մարիա»
    Յեվ կուրծքս արի դաշունահար՝
    Ավելի, քան իրոք հարկ կար»։

Խումբը քրքջաց ուրախ, խելահեղ,
Գանգրահեր մեկը կանգնեցավ մեջտեղ։
    «Պրոֆեսորս էր անհամ խոսում,
    Քնում էյի, չէյի լսում.
    Դուր էր գալիս ինձ ավելի
    Նրա դստրիկը նայելի։

    Ժպտում էր ինձ նուրբ, խաղաղիկ,
    Կյանքիս լույսն այդ, ծաղկանց ծաղիկ.
    Վորին, ավա՜ղ. քաղեց ագահ
    Կոշտ ու հարուստ մի սրիկա։

    Կին ու հարուստ անիծեցի,
    Իմ գինու մեջ թույն ածեցի
    Մահը ինձ հետ խմեց կենաց,
    «Յես բարեկամ Հայնն եմ»—ասաց»։

Խումբը քրքջաց ուրախ, խելահեղ.
Մի պարան վզին՝ մեկն յեկավ մեջտեղ։

    «Շատ գոհ էր կոմսը—բաժակը ձեռքին,
    Հպարտ՝ դստրիկով, քարերով անգին.
    «Ով կոմս, չեմ ուզում քարերդ անգին
    Տենչում եմ միայն քո լույս դստրկին»։

    Յերկուսն էլ պահվում էյին փակի տակ.
    Ծառաներ ուներ իշխանն՝ անքանակ.
    Սակայն ինձ ինչ հոգս փականք ու ծառա,
    Յես վոտքս դրի սանդուխի վրա։

    Մագլցում էյի ու վերև նայում,
    Լսում եմ հանկարծ՝ ինձ են հայհոյում։
    «Այդ ինչ ես անում, տղաս, առանց ինձ,
    Չէ՞ վոր յես եմ հենց տերը այդ գանձի»,

    Այսպես ասաց ինձ կոմսը ծաղրելով.
    Շրջապատվեցի յես ծառաներով.
    «Խուժա՛ն, հեռացե՛ք, յես գող չեմ գանձի,
    Գողանում էյի յես իմ սիրածին»։

    Ամեն խոսք արդեն իզուր էր, պարապ·
    Բերեցին իսկույն պատրաստի պարան.
    Ու յերբ արևը կրկին տեսավ ինձ,
    Յես ճոճվում էյի իմ կախաղանից»։

Խումբը քրքջաց ուրախ, խելահեղ.
Գլուխն իր ձեռքին՝ մեկն յեկավ մեջտեղ։
    «Յես վորսորդ դարձա սիրո տանջանքից,
    Թափառում էյի լուռ, անկարեկից։
    Մի ագռավ գլխիս կռավում էր հար՝
    «Գլուխը վար առ, գլուխը վար առ»։

    Յես խորհում էյի՝ «վո՜հ, մի ագռավի
    Սիրականիս լավ նվեր կլինի».
    Ու վորսորդական աչքով սրատես
    Ամեն թուփ, մացառ զննում էյի յես։

Շշուկ եմ լսում, համբույրների ձայն,
Ո՞վքեր են, անշուշտ թռչնակներ միայն.
Մոտենում եմ յես պատրաստ կայծհանով,
Հանկարծ տեսնում եմ, ո՞վ էր, այն ո՞վ։

Իմ ադամխյակն էր, իմ հոգյակն էր այն.
Մի անծանոթ մարդ գրկել էր նրան.
Դե՜, հին հրացա՛ն, նշանդ լավ առ.
Ու, ահա, ընկավ այդ մարդը ոտար։

Հետո դահիճներ ինձ մեջ տեղ առան
Ու թափոր կազմած անտառից տարան.
Ագռավը գլխիս կռավում էր հար՝
«Գլուխը վա՜ր առ, գլուխը վա՛ր առ»։

Խումբը քրքջաց ուրախ, խելահեղ.
Կիթառահարն այժմ ինքն յեկավ մեջտեղ.
«Յերբեմն յերգել եմ յես մի յերգ,
Վերջացավ այժմ իմ յերգն այդ հեզ.
Յերբ կրծքի տակ սիրտն է խորտակ,
Մեռնում է յերգն այն ժամանակ»։

Բրբիջն աճում է, գոռում ու գոչում.
Անգույն ամբոխը շարժվում է, ճոճվում.
Գմբեթից հնչեց մեկ ժամը հանկարծ,
Վռնացին, մտան հողի տակ անդարձ։

9

Քնել էյի անուշ ու խոր,
Կորել էյին թախիծ ու ցավ.
Յերազի մեջ իմ լուսավոր
Մի գեղուհի ինձ մոտեցավ։

Դժգույն էր նա, վորպես մարմար,
Չքնաղագեղ, հեքյաթային,
Մարգարիտներ աչքերում վառ,
Վարսերն անուշ ծփում էյին.

Այնքան մեղմ է քայլը նրա
Ու թովչանքը այնքան վառ է.
Ու հանգչում է կրծքիս վրա
Չքնաղ աղջիկն այդ մարմարե։

Բորբոքվում է սիրտս, դողում
Բաղձանքներից, այրվում սիրուց,
Նրա կուրծքը չի բաբախում,
Ու նա պաղ է, վորպես սառույց։

«Չի բաբախում կուրծքս՝ կարծես,
Ու սառույց է կարծես քո դեմ,
Բայց սիրո ուժն զգում եմ յես,
Յեվ հաճույքը նրա գիտեմ։

Շուրթերս չեն ծաղկում կարմիր,
Սրտիցս արյուն չի հոսում սրդ,
Բայց դու յերբեք մի կարկամիր,
Ցես քո հանդեպ բարի յեմ շատ։

Ցեվ ինձ գրկեց այնպես ամուր,
Վոր զգացի մի անուշ ցավ.
Աքաղաղը կանչեց, և յուռ
Դժգույն աղջիկն անեացավ։

10

Խոսքիս ուժով կոչեցի կյանք
Ցես՝ մեռյալներ շատ դժգույն.
Ցետ չեն ուզում դառնալ նրանք՝
Դեպի խավար, դեպի տուն։

Ցես՝ մոռացա զարհուրանքից
Սանձահարող խոսքը մեծ,
Ու քաշում են մեռյալներն ինձ
Դեպի խավար տունն իրենց։

Թողեք դուք ինձ, ինձ մի նեղեք,
Չար վոգիներ դիվական.
Վերև, կյանքում այս լուսեղեն
Դեռ շատ խինդ ու սերեր կան

Չե՞ վոր պիտի ձգտեմ տիրել
Ծաղկին չքնաղ, գեղանի,
Ցեթե նրան յես չսիրեմ,
Ել ինչ իմաստ կյանքն ունի։

Մահից առաջ գեթ մի անգամ
Կրծքիս կրեմ ծաղիկն այդ,
Ցերանության ցավը զգամ
Շրթունքներից նրա վարդ։

Իր շուրթերը թաց շշնջան
Գեթ մի անգամ միայն «սեր»,
Ձեզ հետ մռայլ, մութ գերեզման
Կիջնեմ, ով դուք, վոգիներ։

Մեռյալները զարհուրելի
Ինձ գլխով են անում, տես,
Ահա, յեկա, իմ սիրելի,
Աստ՛, աստ, սիրո՞ւմ ես

Բ

ՅԵՐԳԵՐ

1

Առավոտյան վեր եմ կենում
Հարցնում—կգա՞ իմ սիրելին,
Ցերեկոյան նկուն ընկնում—
Վոչ, չեկավ նա այսօր էլի։

Գիշերը իմ վշտերի հետ
Պառկում եմ յես արթուն, անքուն.
Ու յերազկուն՝ կես քնի մեջ
Թափառում եմ յես որն ի բուն։

2

Դես ու դեն եմ ընկնում շտապ
Ժամեր... ու կտեսնեմ նրան՝
Գեղեցկագույն այն աղջկան.
Սիրտ, ինչո՞ւ ես բախում անթափ։

Ժամերը, մեկ — ծույլ ժողովուրդ,
Քարշ են գալիս ծույլ քայլերով,
Ճամբան սողում հորանջելով,
Շտապիր, դու, ծույլ ժողովուրդ։

Բուռն ըշտապելն ինձ մղում է,
Բայց Հոռերը այդ չեն սիրում.
Դաժան գալով միշտ ծաղրում են
Սիրահարի աճապարումն։

3

Թափառում եյի ծառերի տակ,
Իմ վիշտերի հետ, թախծոտ, մենակ,
Ահա յեկավ իմ յերազը հին
Ու սողաց սրտիս խորքը կրկին։

Ով ուսուցանեց այս խոսքը ձեզ,
Եյ դուք թռչուններ բարձրում օդի,
Լռեցեք, թե վոր սիրտս լսի,
Նա վշտից դարձյալ կխոցոտի։

«Մի աղջիկ յեկավ, սիրուն աղջիկ,
Նա յերգում եր այդ, յերգում անվերջ,
Մենք, թռչուններս այդ բռնեցինք,
Պահեցինք վոսկի խոսքը մեր մեջ»։

Ել մի կրկնեք այդ խոսքը նորից,
Թռչուններ ճարպիկ ու սրտագավ,
Ուզում եք վիշտս գողնալ ինձնից,
Յես այդ վոչ վոքի չեմ հավատա։

4

Ձեռքդ դիր կրծքիս, քաղցր իմ սիրելի,
Լսո՞ւմ ես ինչպես բախում է ելի,
Ապրում է այնտեղ փայտագործ մի չար,
Շինում է նա հար դագաղ ինձ համար։

Գիշեր ու ցերեկ բախում է, թակում,
Վաղուց է անքուն աչքս չեմ փակում.
Ա՜խ, շտապեցեք, փայտագործ վարպետ,
Վորպեսզի շուտով քուն մտնեմ հավետ։

5

Իմ վշտերի սիրուն որրան,
Սիրուն դամբան իմ հանգստի,
Ասում եմ քեզ մնաս բարյավ,
Սիրուն քաղաք, գնամ պիտի։

Մնաս բարյավ քեզ, Սուրբ Սյամ,
Ուր շրջում է իմ սիրելին,
Քեզ մոտ եմ ես տեսել նրան,
Մնաս բարյավ, վայր սրբազան։

Չտեսնեյի ընավ ես քեզ,
Սրտիս չքնաղ թագուհի իմ,
Չեր պատահի ընավ, վոր ես
Այսպես թշվառ, խեղճ լինեյի։

Սիրտդ շարժել չեյի ցանկա,
Չեյի խնդրի ընավ ես սեր,
Կուզենայի ես լուռ մի կյանք,
Ուր քո շունչը ոգում բուրեր։

Բայց վանում ես այստեղից ինձ,
Շրթունքներդ խոսում են դառ,
Միտքս հուզված մի ցնորքից,
Սիրտս հոգնած, սիրտս տկար։

Անդամներս անուժ, հոգնած,
Շրջում եմ ես ձեռքիս մի ցուպ,
Մինչև դնեմ գլուխս ցած
Հեռու մի տեղ, դամբան մի ցուրտ։

6

Կաց, կաց, դաժան դու նավավար,
Նավահանգիստ կգամ ահա,
Վողջերթ են մաղթում յերկու կույս՝
Մեկ՝ Յեվրոպան ու մեկ ել՝ Նա՛։

Արյան հեղեղ, հոսիր արագ,
Իմ մարմընից, իմ աչքերից,
Վորպեսզի յես արյունով տաք
Ցավս ու վիշտըս գրեմ նորից։

Ա՜խ, սիրելիս, ինչո՞ւ հենց նոր
Սարսափում ես իմ արյունից,
Չե՞ վոր գունատ, արյունասիրտ
Շատ տարիներ տեսել ես ինձ։

Գիտես դու չե՞ յերգը այն հին
Դրախտի այն ոձի մասին,
Վոր պարգևեց խնձոր մի չար,
Ու Ադամին դարձրեց թշվառ։

Խնձորներն են չարիք բերում,
Դըրանով մահ բերեց Յեվան,
Իրիսը՝ բոց Տըրոյային,
Դու բերեցիր և՛ այս և՛ այն։

7

Լեռ ու դըղյակ նայում են վար,
Հըռենոսի ջինջ հայելուն,
Իմ մակույկն է սահում կայտառ,
Արևի լույսով վողողուն։

Նայում եմ յես վոսկեզանգուր
Կոհակների խաղը՝ հանդարտ,
Արթնանում են հույզերն իմ լուռ՝
Պահված խորունկ իմ կրծքի տակ։

Գետը շքեղ՝ մտերմաբար
Դյութում է ինձ խորքը իջնել,
Գիտեմ նրան՝ յերեսին փայլ,
Խորքում՝ թագուն մահ ու գիշեր։

Յերեսին խինդ, կրծքի մեջ ցավ,
Գե՛տ, պատկերն ես իմ սիրելու,
Գիտե նա ել ժպիտներ տալ
Քեզ պես բարի ու քաղցրալուր։

6

Կաց, կաց, դաժան դու նավավար,
Նավահանգիստ կգամ ահա,
Վողջերթ են մաղթում յերկու կույս՝
Մեկ՝ Յեվրոպան ու մեկ էլ՝ Նա՛։

Արյան հեղեղ, հոսիր արագ,
Իմ մարմընից, իմ աչքերից,
Վորպեսզի յես արյունով տաք
Ցավս ու վիշտը գրեմ նորից։

Ա՜խ, սիրելիս, ինչո՞ւ հենց նոր
Սարսափում ես իմ արյունից,
Չէ՞ վոր գունատ, արյունասիրտ
Շատ տարիներ տեսել ես ինձ։

Գիտես դու չէ՞ յերգը այն հին
Դրախտի այն ոձի մասին,
Վոր պարգևեց խնձոր մի չար,
Ու Ադամին դարձրեց թշվառ։

Խնձորներն են չարիք բերում,
Դըրանով մահ բերեց Յեվան,
Իրիսը՝ բոց Տըրոյային,
Դու բերեցիր և՛ այս և՛ այն։

7

Լեռ ու դղյակ նայում են վար,
Հըռենոսի ջինջ հայելուն,
Իմ մակույկն է սահում կայտառ,
Արևի լույսով վողողուն։

Նայում եմ յես վոսկեզանգուր
Կոհակների խաղը՝ հանդարտ,
Արթնանում են հույզերն իմ լուռ՝
Պահված խորունկ իմ կրծքի տակ։

Գետը շքեղ՝ մտերմաբար
Դյութում է ինձ խորքը իջնել,
Գիտեմ նրան՝ յերեսին փայլ,
Խորքում՝ թագուն մահ ու գիշեր։

Յերեսին խինդ, կրծքի մեջ դավ,
Գե՛տ, պատկերն ես իմ սիրելու,
Գիտե նա էլ ժպիտներ տալ
Քեզ պես բարի ու քաղցրալուր։

8

Սկզբում յես հույսս կտրած
Կարծում եյի չեմ գիժանա,
Բայց և այնպես գիժացա յես,
Սակայն ինչպես—միք խմանա․

9

Նոճիներ, վարդեր, թելեր վոսկեման
Կուզեյի՝ վորպես մահվան ցուրտ դամբան՝
Զարդարեն գիրքն այս սիրուն, հաճելի,
Ցեվ իմ յերգերը այնտեղ թաղեյի․

Ա՛խ, սերս այնտեղ թաղել կարենամ...
Սիրո շիրիմին ծաղիկն հանգստյան
Աճում է, այնտեղ քաղում են նրան,
Ինձ համար կաճի՝ յերբ իջնեմ դամբան․

Այստեղ հանգչում են իմ յերգերը, վոր
Իմ հոգու խորքից ժայթքեցին մի որ
Վորպես Ետնայից ժայթքող մի լավա,
Ցեվ շուրջս կայծեր ցայտում են ահա․

Այժմ ընկած են մունջ, վորպես դիակ,
Սառած, կարծրացած, մեգի պես գունատ,
Սակայն հին բոցից նրանք կհառնեն.
Յերբ նրանց վրա սերը սավառնե․

Սիրտս զգում է, վոր սիրո վոգին
Մի որ պետք է վոր իջնի իմ յերգին,
Քո ձեռը ընկնի այս գիրքը մի որ,
Ո՛, իմ սիրելի, յերկրում հեռավոր․

Ցեվ կախարդական կապանքից ազատ
Դեմքից կնայեն տառերը գունատ,
Աչքերից գամված նրանք կաղերսեն,
Ցեվ կշշնջան թախծաշունչ մի սեր․

Գ.

ՌՈՄԱՆՍՆԵՐ

1

ՎՇՏԱՀԱՐԸ

Վիշտ է առթում ամենքին՝
Ով տեսնի այդ պատանուն,
Դրոշմված են իր դեմքին
Վիշտ ու ցավեր խոր, անհուն։

Զեփյուռներն են հովհարում
Նրա ճակատն այնքան տաք,
Գոռոզ կույսն է ցանկանում
Սրտին բերել սփոփանք։

Քաղաքների աղմուկից
Փախչում է նա դեպ անտառ,
Ուր ջերգում են անկսկիծ
Թռչունները, թուփ ու ծառ։

Բայց լռում է ջերգն խայտառ՝
Երգը թռչնի ու ծառի,
Երբ պատանին վշտահար
Մոտենում է անտառին։

2

ԼԵՌՆԱՅԻՆ ՁԱՅՆ

Մի հեծյալ է անցնում ձորից
Մտախոհ և անձայն.
«Արդյոք սե՞րն է սպասում ինձ,
Թե՞ դժնդակ, մութ գերեզման»։
Ձայնը տալիս է պատասխան.
«Մութ գերեզման»։

Հեծյալն առաջ է ընթանում,
Հառաչում շարունակ.
«Այդքան վաղ եմ ես մահանում,
Հող չէ, հանգիստ կա՝ հողի տակ»։
Ձայնը տալիս է արձագանք.
«Կա՝ հողի տակ»։

Արցունքներն են գլորվում վար
Դեմքից ձիավորի.—
«Եթե այնտեղ կա ինձ համար
Հանգիստ, ուրե՞մն հողն է բարի»։
Կրկնում է խուլ ձայնը սարի,
«Հողն է բարի»։

3

ՅԵՐԿՈՒ ՅԵՂԲԱՅՐ

Լերան գլխին կա մի ամրոց՝
Մութով պատած, անուղի.
Սակայն ձորում՝ շողք, կայծկլտոց,
Սրի շառաչ կատաղի։

Յեղբայրներ են մարտնչում անդ,
Մոլեգնաբար դեմ դիմաց.
Ասա, ինչո՞ւ յեղբայրներն այդ
Սուր են իրար դեմ հանած։

Լաուրայի աչքի հրով
Վառվեց նրանց մեջ պայքար,
Ազնվական աղջկա սիրով
Այրվում են սիրավառ։

Դեպի վո՞րն է հակված արդյոք
Նրա սիրտը կենսատու,
Այդ չի կարող վճռել վոչ վոք.
Սո՛ւր, դուրս շողա, վճռիր դու։

Ու կռվում են քաջ, անվեհեր,
Հարվածներն են ճարճատում.
Զգուշացե՛ք, ով դյուցազներ,
Կախարդանք կա չար մութում։

Ավա՜ղ, յերկու արնոտ յեղբայր
Ավաղ, ավա՜ղ, արնոտ ձոր.
Յերկու կռվողն ընկնում են վար
Իրար սրով արնածոր։

Դարերն անցնում, ու սերունդներ
Հանձնվում են սև մահին,
Լերան գլխից նայում է դեռ
Ամրոցն այն լուռ ամայի։

Սակայն ձորը այն մեկուսի
Այլակերպվում է անլուր.
Մռայլ ժամին տասներկուսի
Յեղբայրներն են հանում սուր։

4

ԽԵՂՃ ՊԵՏԵՐԸ

I

Հանսն ու Գրետան ցնծության մեջ.
Պար են դառնում պերճ, գրավիչ,
Տրտում կանգնած Պետերը խեղճ
Դժգունել է, ինչպես կավիճ։

Հանսն ու Գրետան շքեղ զարդով
Հարս ու փեսա, գոհ են, ցնծում,
Խեղճ Պետերը հին հագուստով
Եղունգներն է լուռ կրծում։

Պետերը լուռ, սրտամորմոք
Նրանց դիտում, ասում է հեզ
«Չլինեյի, ախ, թե խելոք,
Ինձ փորձանքի կտայի ես։

II

Կրծքիս տակ մի ցավ անհատնում
Անքուն կիզում է ինձ, մխում.
Ուր գնում եմ, ուր որ կանգնում,
Այդ ցավն է ինձ առաջ մղում։

Գնում եմ դեպի իմ սիրականն,
Կարծես Գրետան ցավս է վանում,
Երբ դեմքին եմ նայում, սակայն,
Արագ թողնում եմ, հեռանում։

Բարձրանում եմ սարը արագ,
Գոնե այնտեղ մենակ եմ, լուռ.
Երբ կանգնում եմ այնտեղ մենակ,
Լաց եմ լինում հոնգուր-հոնգուր»։

III

Խեղճ Պետերն է յերկչոտ անցնում
Դանդաղ, ինչպես դիակ՝ դժգույն,
Անցորդները նրան տեսնում
Զարմանում են, կանգնում իսկույն։

Աղջիկներն են միմյանց ասում
«Դագաղի՞ց է դուրս յեկել, ախ...»,
Վոչ, որիորդներ մեր սիրասուն,
Նա դեռ նոր է մտնում դագաղ։

Կորցրել է նա գանձն իր միակ,
Գերեզմանն է լավագույն՝ տեղ,
Պետք է հանգիստ նա հողի տակ
Քնի, մինչև որը ահեղ։

5

ՅԵՐԳ ԲԱՆՏԱՐԿՅԱԼԻ

Իմ մեծ մայրը յերբ Լիզային կախարդեց,
Դատապարտվեց հուր-մահվան.
Դատավորը ինչքան թանաք ել վատնեց
Չեղավ զղջման պատասխան։

Յերբ ձգեցին նրան կաթսան մշտայեռ,
Ավա՜ղ, ա՜խ ու վա՜խ արավ,
Ու յերբ շոգին բարձրանում եր դեպի վեր,
Նա վեր թռավ, իբր ագռավ։

Ախ, փետրավոր իմ մեծ մայրիկ, լսիր ինձ,
Այցելիր ինձ բանտում փակ,
Շուտո՜վ թռի՛ր ներս վանդակի ճաղերից,
Բեր ինձ պանիր, կարկանդակ։

Ախ փետրավոր, իմ մեծ մայրիկ, դու հոգ տար,
Ա՜խ, յերանի՛ հսկես դու,
Վոր քույրերդ աչքս չհանեն կտցահար,
Կախված ճոճվեմ յերբ ոդում։

6

ԳՐԵՆԱԴԵՐՆԵՐԸ

Յերկու գերի ֆրանսիացի
Գրենադերներ Ռուսաստանից
Գերմանիայով վերադարձին
Դարձան տխուր, տրտմաթախիծ։

Լսեցին շատ տխուր մի լուր,—
Թե Ֆրանսիան է խորտակված,
Յեվ մեծ բանակն է ջարդ փշուր.
Յեվ կայսրն իրենց՝ գերի ընկած։

Զինվորները լացին կամաց,
Յերբ տխուր լուրն այդ լսեցին.
«Յես տանջվում եմ,—մեկը ասաց,—
Ինչպես մխում է վերքս հին»։

Մյուսը ասաց մեղմ, տխրագին,
«Քեզ հետ մեռնել կուզեմ հիմա,
Բայց յես ունեմ յերեխա, կին,
Վոր առանց ինձ կգտնեն մահ։

Ի՞նչ փույթ, սակայն, կինն, յերեխան,
Հանդերձ իմ լավ բաղձանքների,
Քաղցած լինեն՝ թող հաց մուրան.
Կայսրն է, կայսրն է ընկած գերի։

Յեթե ժեռնեմ, լսիր, յեղբայր,
Ունեմ միայն յես մի խնդիր,—
Իմ դիակը Ցրանսխա տար,
Հայրենական հողում թաղիր։

Պատվո խաչը՝ կարմիր ու կաս-
Ժապավենով կախես կրծքիս,
Ձեռքս պետք է հրացան տաս,
Փայլուն սուրը կապես մեջքիս։

Կամենում եմ պառկել աննինջ
Գերեզմանում, վորպես պահակ,
Մինչև լսեմ վորոտ, խրխինջ,
Ձիերի վազք քառասմբակ։

Գերեզմանիս վրա այն ժամ
Պիտի շողան, շաչեն սրեր,
Գերեզմանից յես դուրս կգամ,
Վորպես զինվոր պաշտպան կայսեր»։

7

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Տառա՛, վեր կաց, թամբիր իսկույն,
Հեծիր նժույգն անվանի,
Անտառ ու դաշտ թող, սլացիր
Դեպի բերդը Դունկանի։

Գաղտնի մտիր գոմն, սպասիր,
Ձիապանին տուր հարցում,
Թե «Դունկանի աղջիկներից
Վո՞րն է արդյոք հարսնացուն»։

«Թխաչյան է»—յեթե ասաց,
Դարձիր ու լուր բեր արագ,
Յեթե ասաց՝ «շեկավարսն է»—
Շտապելու չկա հարկ։

Այդ ժամանակ դու վարպետից
Ինձ համար առ մի պարան,
Արի դանդաղ ու հանձնիր ինձ
Առանց խոսքի, անվարան։

8

ԼԵԿՑՈՒԹՅՈՒՆ

Յես չեմ գնա այդպես մենակ,
Պետք է ինձ հետ գաս, իմ հոգյակ.
Դեպի խուցը հին, սիրելի,
Մեր տունը ցուրտ, զարհուրելի,
Շեմքին նստած մայրս առանձին,
Սպասում է վորդու դարձին։

«Թող, հեռացիր, դու մթին մարդ,
Քեզ ով կանչեց, վոր յեկար արդ.
Ձեռքդ՝ սառույց, շունչդ՝ կրակ,
Աչքերդ՝ հրուտ, դեմքդ՝ ճերմակ,
Իսկ յես կյանք եմ ուզում գվարթ,
Արևի փայլ, բուրալից վարդ»։

Վարդը բուրի, արևն ելի
Թող շողշողա, իմ սիրելի,
Նետիր ճերմակ, փողփող շղարշ,
Ու նվագիր քնարդ վարժ,
Մի յերգ յերգիր հարսանեկան,
Թող ձայնակցի հովը նրան։

9

ԴՈՆ ՌԱՄԻՐՈ

„Դոննա Կլարա, դոննա Կլարա.
Սրտիս սիրած հին սիրական,
Դու վճռել ես կործանել ինձ,
Դու վճռել ես անգթաբար։

Դոննա Կլարա, դոննա Կլարա,
Կյանքի պարգևն անհուն քաղցր է,
Սոսկալի յե սակայն ցածում՝
Գերեզմանում խավար ու ցուրտ։

Դոննա Կլարա, առավոտյան
Ֆերնանդոն քեզ խորանի մոտ
Պիտ վողջունի իբր ամուսին,—
Ինձ հարսանիք պիտի կանչե՞ս»։

«Դոն Ռամիրո, դոն Ռամիրո,
Քո խոսքերը ինձ խոցում են
Դառն՝ ավելի քան աստղերի
Հեգնանքը իմ կամքի հանդեպ։

Դոն Ռամիրո, դոն Ռամիրո,
Ժանտ թախիծդ թոթափիր դու,
Աղջիկ շատ կա յերկրիս վրա,
Բայց մեզ աստվածն է բաժանել։

Դոն Ռամիրո, դու քաջությամբ
Այնքան մարտեր վոր հաղթեցիր.
Այժմ հաղթիր և ինքդ քեզ,—
Առավոտյան յեկ՝ հարսանիք»։

«Դոննա Կլարա, դոննա Կլարա,
Այո, յերդվում եմ, վոր կգամ.
Քեզ հետ պիտի առավոտյան
Պարեմ շուրջպար, բարի գիշեր»։

«Բարի գիշեր»։ Դուռը փակվեց.
Պատուհանի տակ Ռամիրոն
Հառաչում է, արձան կտրած,
Ապա կորչում խավարի մեջ։

Վերջապես, մեծ պայքարից վերջ,
Գիշերն որվան պիտի տեղի տա.
Գույն-գույն ծաղկանց պարտեզի պես
Տոլեդոն է ահա փռված։

Շքեղ շենքեր և պալատներ
Շողշողում են արևի տակ.
Գմբեթները տաճարների
Ցոլում են պերճ ու վոսկեզօծ։

Մեղվապարսի բզզյունի պես,
Զանգակների ձայնն է հնչում.
Բարձրանում են աղոթք ու յերգ
Տաճարներից դեպի յերկինք։

Բայց, դու նայիր դեպի այնտեղ,
Ուր մատուռն է հրապարակի,
Դուրս է հորդում՝ յեռ ու զեռով
Ամբոխը հոծ, խայտաբղետ։

Պալատական սպասավորներ;
Ասպետ, տիկին շողշողում են.
Զանգակների ձայների հետ
Յերգեհոնն է մեղմ մրմնջում։

Բայց առանձին՝ և հարգալից
Ընթանում է բազմության մեջ
Նորապսակ զույգը՝ զուգված,—
Դոննա Կլարան և Ֆերնանդոն։

Մինչև պալատը փեսայի
Թավալվում է ամբոխը հոծ.
Հարսանեկան հանդեսն այնտեղ
Սկսվում է հնավանդ կարգով։

Սեղան ու խաղ ասպետական
Հաջորդում են միմյանց ցնծուն.
Ժամերն անցնում են խելահեղ,
Ու գիշերն է խոնարհում վար։

Յեվ հյուրերը պարի համար
Հավաքվում են մեծ դահլիճում.
Հագուստները նրանց շքեղ
Շողշողում են լույսերի մեջ։

Աթոռների վրա բարձր
Նորահարսն ու փեսան նստած,
Դոննա Կլարան, դոն Ֆերնանդոն,
Շշնջում են քաղցր խոսքեր։

Յեվ դահլիճում ծփծփում են
Ալիքները շքեղ մարդկանց.
Թմբուկներն են թնդում ուժգին,
Շեփորներն են ուժեղ շաչում։

«Բայց ինչո՞ւ, ո՛վ իմ տիրուհի,
Քո հայացքը հառել ես դու
Դեպի անկյունը դահլիճի».—
Ասպետն ասաց խիստ զարմանքով։

«Դու չե՞ս տեսնում, դոն Ֆերնանդո,
Այնտեղ մարդուն այն սևազգեստ».
Ու ժպտում է ասպետը մեղմ,—
«Ա՛խ, դա միայն մի ստվեր է»։

Բայց ստվերը մոտենում է,
Մի մարդ էր սև վերարկուով.
Ճանաչելով Ռամիրոյին՝
Վողջունում է Կլարան հուզված։

Սկսված է պարը արդեն,
Ու դառնում են զույգերն աշխույժ
Վալսի յեռուն պտույտներով.
Ու հատակն է թնդում, դողում։

«Ես շատ սիրով, դոն Ռամիրո,
Ցանկանում եմ հետդ պարել,
Սակայն այս սև վերարկույով
Դու չպետք է այստեղ գայիր»։

Նայելով խիստ խորաթափանց՝
Գեղեցկուհուն, դոն Ռամիրոն
Թևածում է, թախծոտ ասում,—
«Չե՞ վոր դու ինձ ասացիր՝ գամ»։

Ցեվ պարող խուռն ամբոխի մեջ
Զույգն առաջ է մղվում պարի,
Թմբուկներն են թնդում ուժգին,
Շեփորներն են ուժեղ շաչում։

«Դեմքդ է ճերմակ ձյունի նման»
Մրմնջում է Կլարան դողով.
«Չե՞ վոր դու ինձ ասացիր՝ գամ»,—
Խուլ ձայնում է դոն Ռամիրոն։

Ցեվ մոմերն են ցոլում, վառվում
Կոհակընթաց ամբոխի մեջ.
Թմբուկներն են թնդում ուժգին,
Շեփորներն են ուժեղ շաչում։

«Ձեռքերդ սառն են ձյունի պես»,—
Մրմնջում է Կլարան դողով.
«Չե՞ վոր դու ինձ ասացիր՝ գամ»։
Ու մղվում են դարձյալ առաջ։

«Թո՛ղ ինձ, թող ինձ, դոն Ռամիրո,
Դիակի հոտ կա շնչիդ մեջ»։
Դարձյալ նույնն են խոսքերը մութ՝
«Չե՞ վոր դու ինձ ասացիր՝ գամ»։

Հատակն այրվում է և ծխում,
Հնչում ջութակ և թավջութակ.
Մի խոլական կախարդանքում
Որորվում է դահլիճն ամբողջ։

«Թող ինձ, թող ինձ, դոն Ռամիրո»—
Այս մրմունջն է լսվում կրկին.
Ու կրկնում է դոն Ռամիրոն,—
«Չե՞ վոր դու ինձ ասացիր՝ գամ»։

«Գնա՛ ուրեմն, աստված քեզ հետ»,
Կոչեց Կլարան խիստ վճռական.
Այս խոսքն ասաց թե չէ, իսկույն
Անհետացավ դոն Ռամիրոն։

Ու սառում է Կլարան, դեմքին
Մահն է իջնում խավար ու ցուրտ.
Ու սուզվում է սև աշխարհում
Անհուշ՝ նրա դեմքը լուսե։

Փարատվում են մշուշ, մրափ,
Նա թարթում է աչքերը թույլ.
Բայց զարմանքը պիտի նորից
Փակե նրանց, այդ աչքերը.

Բանգլի պարի սկզբից դեռ
Չի շարժվել նա իր տեղից.
Ցեվ Ֆերնանդոն մոտը նստած
Խոսում է մեծ հոգածությամբ։

«Ինչո՞ւ այդպես դժգունեցիր,
Հայացքդ ինչու մութ է այդպես».
«Իսկ Ռամիրո՞ն». հարցրեց Կլարան
Ցեվ սարսափից կապվեց լեզուն։

Ու կնճիռներն ակոսում են
Ֆերնանդոյի ճակատը լուրջ.
«Արնոտ լուրը թող, սիրուհի,
Այսօր մեռավ դոն Ռամիրոն»։

10

ԲԱԼՏԱՍԱՐ

Կես գիշեր է լուռ ու անդորր.
Բաբելոնն է նիրհում շատ խոր։

Արքայական պալատում սոսկ
Դեռ աղմուկ կա, լույս, փայլ ու ցոլք

Մեծ դահլիճում արքայական
Բալտասարն է նստել սեղան։

Ծառաները նստած շարքում,
Գինու թասեր են դատարկում։

Թասի հնչյուն, հրճվանքի ձայն,
Բորբոքվում է դաժան արքան։

Դեմքն այրվում է, գինին վառման
Հանդգնություն տվեց նրան։

Ցեվ կուրաբար առաջ մղվում,
Աստվածությունն է հայհոյում։

Պարծենում է լիրբ ու վայրի,
Գոչն է թնդում ծառաների։

Հրամայում է արքան մեկին,
Վոր գնում է, բերում վոսկի

Անոթները ճաճանչալից
Յեհովայի մեծ տաճարից։

Արքան վերցնում է մի բաժակ
Լցնում գինին հրակայլակ։

Արագ ըմպում գինին ամբողջ,
Փրփրած գոռում է բարձրագոչ.—

«Թքում է քեզ, ով Յեհովա,
Բաբելոնի արքան ահա»։

Զարհուրելի խոսքն յերբ ասաց,
Սրտում յերկյուղ ընկավ հանկարծ։

Լռեց ամեն ծիծաղ, հնչյուն.
Կարծես իջավ մահ դահլիճում։

Յեվ, տես, ճերմակ պատի վրա
Կարծես մի ձեռք պարզվեց ահա։

Գրեց տառեր հուր, հրագույն,
Ու չքացավ ձեռքն այդ իսկույն։

Ակնասեվեռ դողաց արքան,
Նստեց, դեմքին՝ գույնը մահվան։

Ծառաները սարսափահար
Նստեցին լուռ ու անբարբառ։

Յեկան մոգեր, շատ յերկնեցին
Բայց գիրը չմեկնեցին։

Բալտասարն այդ գիշերը հենց
Ծառաների ձեռով սպանվեց։

11

ՄԻՆՆԵԶԵՆԳԵՐՆԵՐԸ

Գնում են յերգով մրցելու
Միննեզենգերները ելի.
Պայքար է հիմա լինելու,
Մրցություն մի զարմանալի։

Մտքի թռիչքն է փրփրարաշ
Նժույգը միննեզենգերի,
Արվեստն է վահանը իր վարժ,
Յեվ խոսքը՝ փոխանակ սրի։

Գորգազարդ մեծ պատշգամբից
Նայում են կանայք շարունակ,
Բայց այնտեղ չէ չքնաղն ամենից
Ընտրյալը դափնե պսակ։

Ուրիշները միշտ ասպարեզ
Քաջառողջ են իջնում, զենքով.
Բայց միննեզենգերները վեր
Յեկել են մահացու վերքով։

Յեվ ում սրտից՝ կրակի հանգույն՝
Յերգի արյունն է հորդ հոսում.
Նա յե հաղթող, չքնաղագույն
Շուրթեր նրան են գովք ասում։

12

ՊԱՏՈՒՀԱՆԻ ՄՈՏ

Դժգույն Հայնրիխն անցավ վարից,
Իսկ Հեդվիգը պատուհանի
Ծոցից ասաց՝ «տեր, հասիր ինձ,
Նա նման է ուրվականի»։

Աչքերն ուղղեց Հայնրիխը վեր՝
Դեպ՝ աղջիկը պատուհանի.
Հեդվիգն զգաց սիրո ցավեր,
Դարձավ նման ուրվականին։

Հեդվիգն ամեն օր սուր վշտով
Սպասեց ծոցում պատուհանի,
Հայնրիխի գիրկն ընկավ շուտով
Մութ ժամերին՝ ուրվականի։

13

ՎԻՐԱՎՈՐ ԱՍՊԵՏԸ

Յես գիտեմ շատ հին մի զրույց,
Տխուր է նա, սրտակեղեք.
Մի ասպետ կար՝ զարկված սիրուց,
Բայց սիրուհին՝ խաբող ու նենգ։

Արհամարհեր պիտի նա ինք
Սրտի սիրած սիրուհուն թանգ,
Ու համարեր սև նախատինք
Սիրո ամեն վիշտ ու տանջանք։

Յեթե իջներ հրապարակ,
Հրավեր կարդար ասպետներին,—
«Թող կռվի գա, ով մի արատ
Կասի՝ ունի իմ սիրուհին».—

Կմնային ամենքը լուռ,
Միայն վոչ իր վիշտն անպատում.
Այն ժամանակ նիզակը սուր
Պիտի խրեր նա իր սրտում։

14

ՆԱՎԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Հենված կայմին յես սրտադող
Դիտում եմ ալիք-կոհակ,
Մնաս բարով, հայրենի հող,
Սուրում ե նավն իմ խիստ արագ։

Սիրածիս տունն ահա,—ծովափ,—
Լուսամուտներն են ճաճանչում.
Յես դիտում եմ շշմելու չափ,
Բայց վոչ մի ձեռք ինձ չի կանչում։

Հերիք թափվեք, ով արցունքներ,
Յեվ աչքերս պատեք մութով.
Մի խորտակվի, սիրտ կարեվեր,
Լցված ծանր, ահեղ վշտով։

15

ԶՂՋՄԱՆ ՅԵՐԳ

Ուլրիխն անցնում ե թավուտով,
Տերևներն են շրշում զվարթ.
Նա տեսնում ե մի դեմք դյութող՝
Ճյուղերի մեջ բազմաստղարթ։

Ասպետն ասում ե,—«յես գիտեմ
Ծաղկող վառվող շող դեմքը այն.
Նա յե դյութում, շողում իմ դեմ
Ամբոխի մեջ և մենության։

Շրթունքներն են վարդի նման,
Այնքան հրուտ, թարմ, հյութալից,
Վորքա՜ն գարշ խոսքեր, սակայն,
Դուրս են սողում այդ շուրթերից։

Դրա համար բերնակն այն գեղ
Շատ նման ե վարդանոցի,
Ուր՝ թփերում փարթամ, շքեղ՝
Շչում ե մի վտառ օձի։

Այն փոսիկը՝ կարմրրաթույր
Այտի վրա՝ չքնաղ ու վառ,
Դա այն փոսն ե, մղում ե ուր
Ինձ ցանկությունն իմ խելագար։

Դանգուրների մի փունջ շքեղ
Յես տեսնում եմ դեմքի շուրջ այն,
Դա այն ցանցն է հրաշագեղ,
Վորով բռնեց ինձ սատանան։

Յեվ աչքերը բիլ ծովաթույր,—
Ալյակն այդքան ջինջ կլինի,—
Կարծել եյի յերկնքի դուռ.
Բայց դա դուռն է բարկ գեհենի»։

Ուլրիխն առաջ է ընթանում,
Տերևներն են խարշափում հար,
Մի այլ դեմք է նա նկատում
Տխրադալուկ և վշտահար։

Ասպետն ասում է,— «տխրատես
Այն իմ մայրն է սիրագորով,
Վորի կյանքը դառնացրի յես
Իմ գործերով և խոսքերով։

Ո՛, յերանի յես սրբեյի
Ցավիս բոցով աչքերդ թաց,
Տժգույն դեմքդ յես ներկեյի
Իմ արյունով՝ սրտից բղխած»։

Յեվ գնում է Ուլրիխն առաջ.
Անտառի մեջ մութն է իջնում,
Զարթնում հազար ձայն անճանաչ.
Իրիկվա հովն է շշնջում։

Լսում է նա, խոսքերն իր հար
Կրկնվում են, արձագանգում.
Թռչնիկներն են, վոր մեղմարար
Ծվողում են, անուշ յերգում.—

«Պարոն Ուլրիխն յերգում է խեղճ
Սիրուն մի յերգ, յերգը զղջման.
Յեվ յերգն յերգեց նա մինչև վերջ,
Ու կրկնում է նորից յերգն այն»։

16

Մի յերգչուհու

Մի հին ռոմանս յերգելու առթիվ.

Այն թովչուհուն հիշում եմ դեռ
Այնպես, ինչպես տեսա նրան։
Նրա ձայնը քաղցր հնչում եր
Յեվ թափանցում սրտերը մեր։
Թափում եյի յես արցունքներ՝
Հոգեխռով լույս պահին այն։

Պատմել եր ինձ մի քաղցր անուրջ.
Ինձ թվում եր մանուկ եմ դեռ
Ու նստել եմ յես լուռ ու մունջ,
Լամպի լույսով կարդում եմ լուրջ
Առասպելներ հին, վոգեշունչ.—
Մինչդեռ դուրսը ցուրտ ե, գիշեր։

Առասպելներ կյանք են առնում.
Ասպետներն են հառնում ահա.
Ահա մարտ ե Ռոնցեսվալում,
Ահա Ռոլանդն ե սլանում,
Ասպետներ են հետն ընթանում,
Յեվ Գանելոն այն սրիկա։

Դավով Ռոլանդն ե սեգ ընկնում,
Հազիվ շնչում արյան մեջ լերդ.
Միայն փողի ձայնն ե գնում
Մեծ Կարլոսի ականջն ընկնում,
Ու ասպետն ե անդարձ մեկնում,
Ու մեռնում ե յերազս իր հետ։

Մի թնդյուն եր աղմկաձայն,
Վոր վերջ տվեց այդ յերազիս,
Ավարտված եր լեգենդը այն.
Ծափում եյին մարդիկ համայն
Անվերջ «կեցցե» գոռում միայն,—
Ու յերգչուհին գլուխ եր տալիս

17

ՅԵՐԳ ԴՈՒԿԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Իմ դուկատներ փայլուն, վոսկյա,
Ասացեք ինձ, ո՞ւր եք հիմա։

Վոսկե ձկնիկների մո՞տն եք,
Վոր ջրերում ջինջ առվակի
Խաղ են անում գվարթագին։

Վոսկե ծաղիկների մոտն եք,
Վոր մարգերում կանաչ ու զով
Փայլփլում են գոհար ցողով։

Վոսկե թռչնիկների մոտն եք,
Վոր յեթերում կապույտ՝ թեթև
Ծածանվում են միշտ լուսաթև։

Վոսկե աստղիկների մոտն եք,
Վոր յերկնքում՝ հեռու և վեր,
Ժպտում են մեզ ամեն գիշեր։

Ա՜խ, դուկատներ փայլուն, վոսկյա,
Դուք չեք լողում ջինջ ջրերում,
Դուք չեք շողում կանաչ մարգում,
Չեք ծածանվում լուրթ յեթերում,
Դուք չեք ժպտում վեր՝ յերկնքում —
Մանիքեցիներն իմ այնպե՜ս
Մագիլներով պահել են ձեզ։

18

ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՊԱԴԵՐԲՈՐՆԻ ՀԱՆԴՈՒՄ

Դու չե՞ս լսում ձայներն հեռվում՝
Ջութակի և թավջութակի.
Սիրուններն են այնտեղ պարում
Թեթև մի պար շուրջանակի։

«Ա՜խ, բարեկամ, սխալվում ես,
Ջութակի ձայն յես չեմ լսում.
Խոճկորներն են ճղղում այնպես,
Խոզերի ձայնն է մեզ հասնում»։

Դու չե՞ս լսում վորսորդական
Փողի ձայնը անտառում թավ.
Կամ գառների հովիվը և այն՝
Յերգ սրնգում հոգեթաթավ։

«Ա՜խ, ինչ սրինգ, ինչ փողի ձայն.
Դու չես լսել և վոչ մեկին.
Խոզարածն է այնտեղ միայն,
Վոր քշում է իր խոզերին»։

Դու չե՞ս լսում ձայները մեղմ
Այնքան քաղցր, անուշ դայլայլ,
Վոր վոգիները յերկնաճեմ
Լսում են գոհ ու հոգեզմայլ։

«Ա՜խ, ինչ վոր դու լսում ես, այդ
Մեղեդի չէ, իմ սիրելի,
Սագարածն է սուլում զվարթ
Ու տուն քշում իր սագերին»։

Դու չե՞ս լսում զանգակների
Ղողանջները ախորժալուր.
Ցեվ աղոթող խմբեր հիմի
Ընթանում են դեպի ժամատուն։

«Զանգակներն են դրանք, ավաղ,
Վոր շարժելով յեզներ, կովեր
Գնում են հեզ ու գլխակախ
Դեպի ախոռ, դեպի գոմեր»։

Դու չե՞ս տեսնում ծածան մի քող,
Ցեվ հայացքներ մեղմ, գրավիչ,
Սիրելիս է այնտեղ՝ դյութող
Ու թախծոտ է հայացքը ջինջ։

«Ա՜խ, բարեկամ, տես, անտառի
Պառավն է այդ, Լիզան նիհար,
Վոր հենակով կանգնած՝ լռին
Մեզ կանչում է դեպի անտառ»։

Ե՛հ, բարեկամ, ծաղրում ես դու
Ցնորական հարցերս այսպես.
Միթե՞ պատրանք է՝ ինչ տրտում
Իմ սրտի մեջ կրում եմ յես։

19

ԿՅԱՆՔԻ ՎՈՂՋՈՒՅՆ

Ալբոմում

Աշխարհը մեր մի փողոց է ընդարձակ,
Մենք՝ մարդիկս՝ անցորդներ,
Վորպես հեծյալ կամ հետիոտն սուրհանդակ
Արագընթաց թղթաբեր։

Մենք անցնում ենք, ակնարկում ենք, վողջունում,
Կառքից շարժում թաշկինակ.
Համբուրվելու մեզ ժամանակ չի մնում,
Կառքն է թռչում խիստ արագ։

Պատահեցինք այս կայանում մենք հիմի,
Ալեքսանդր, դու և յես,
Բայց և ահա փողն է կանչում մեկնումի,
Տարբեր կողմեր քշում մեզ։

20

ՀԻՐԱՎԻ

Յերբ վառ արևով գալիս է գարուն,
Բողբոջում են բյուր ծաղիկներ, ծաղկում.
Յերբ լուսինն է վեր շողշողում, փաղփում,
Իր հետ բյուրավոր աստղեր է վարում.
Յերբ յերգչին յերկու աչքեր են դյութում,
Նա այնքան խորին յերգեր է կերտում։

Վորքան էլ սակայն աստղեր, ծաղիկներ,
Աչքեր, լուսնի փայլ, արև հրաշեր
Ու յերգեր դյութեն մեր սիրտը,—Նրանք
Վողջ աշխարհը չեն, վոչ էլ ամբողջ կյանք։

Գ.

ՍՈՆԵՏՆԵՐ

ՍՈՆԵՏՆԵՐԻ ՊՍԱԿ Ա. Վ. ՇԼԵԳԵԼԻՆ

1

Վատթար ճճին՝ սուր դաշույնն է կասկածի,
Վատթար թույնը՝ կասկածն իր ույժի վրա.
Սրանք ահա իմ կյանքի հյութը կերան,
Ու յես՝ մի տունկ, նեցուկից զուրկ մնացի։

Այն ժամանակ դու խեղճ ճյուղին գթացիր,
Բարի խոսքդ նեցուկ արիր անվարան.
Քեզ, մեծ վարպետ, յես մնում եմ պարտական,
Յեթե ճյուղն այդ ծաղկած՝ թևեր տարածի։

Ա՜խ, յերանի նորից այնքա՜ն սպասես,
Վոր իբրև ծառ նա զարդարի պարտեզն այն
Ըղձանույշի, վոր սիրական ընտրեց քեզ։

Իմ դայակի հին պատմության համաձայն,
Խորհրդավոր ձայներ կան այդ պարտիզում,
Ուր ծաղիկ, ծառ քաղցր յերգում են ու խոսում։

2

Կրինոլին հագած, զուգված ծաղկավոր,
Գեղեցկության դեղին այտերին, շպարված
Սրածայր կոշիկ հագած, փարթամ զարդարված,
Գանգուրները դեզ-դեզ գլխին, ինչպես բոռ.—

Փողոցային մուսան էր այդ, վոր մի օր
Քեզ գրկելու յեկավ սիրով, գրկաբաց,
Բայց նրանից դու խույս տվիր, ու մղված
Թափառելու գնացիր ափեր հեռավոր։

Դու գտար հին անապատում մի դղյակ,
Ուր պառկած էր, վորպես պատկեր հողեթով,
Զքնաղ կույսը կախարդական խոր քնով։

Քո վողջույնից չքվեց ամեն կախարդանք,
Գերմանիայի մուսան զարթնեց ժպտերես
Ու սիրավառ բազուկներով գրկեց քեզ։

3

Դու գոհ չես քո ունեցվածքից, քեզ կազդույր
Պիտ տար գանձը Նիբելունգյան՝ Հռենոսի,
Պարգև վերցրիր դու ափերից Թայմզի,
Ու Թայոյի ափից՝ ծաղիկ մեղրաբույր։

Տիբերից դուրս բերիր գանձեր ակնակուռ,
Խոնարհվեց Սենն, փառքդ յերգեր վորպեսզի.
Մարգարիտներն ուզեցիր դու Գանգեսի,
Թափանցեցիր նույնիսկ Բրահման սրբաջուր։

Ո՛վ ագահ մարդ, դու նրանով գոհացիր,
Ինչ քեզ մարդուց հարուստ բաժին է ընկել.
Վոչ թե դիզել, այլ շռայլել մտածիր։

Գանձը վոր դու հավաքել ես, կուտակել
Անխոնջ կերպով չորս կողմերից աշխարհքի,
Այժմ տուր քո աշակերտին, ժառանգին։

ՄՈՐՍ Բ. ՀԱՅՆԼԵՅՆ

(Ծնյալ Ճոն Գեյզերն)

1

Յես սովոր եմ գլուխս բարձր պահել,
Միտքս նույնպես համառ, հաստատ է այնքան.
Իմ յերեսին նույնիսկ նայի թե արքան,
Չեմ ցանկանա աչքերս վար խոնարհել։

Բայց, սիրելի մայրիկ, կասեմ քեզ այն էլ,
Ինչքան գոռոզ լինի միտքս, առնական,
Քո անձկալի ներկայության յես, սակայն,
Հեզանում եմ և սկսում վարանել։

Քո հոգին է սանձահարում ինձ թագուն,
Քո մեծ հոգին միշտ թափանցող, աննըկուն,
Վոր ցոլում է դեպի յերկինք լուսազեռ։

Ինձ տանջում են հիմա հուշերն այն անեղծ,
Վոր յերբեմն վշտացրել եմ սիրտդ մեծ,
Չքնաղ սիրտդ, վոր սիրել է ինձ այնպես։

2

Յերբեմն քեզ լքեցի յես մոտակույր,
Վոր թափառեմ աշխարհն արար, ծայրեծայր
Յեվ տեսնեմ թե սեր կըգտնեմ ինձ համար,
Վոր ընդգրկեմ սերը սիրով իմ մաքուր։

Սեր փնտռեցի փողոցներում, դռնե դուռ,
Ձեռք մեկնեցի դռներից ներս ու խոնարհ
Սեր մուրացի, բայց ժպտալով մարդիկ հար
Ատելություն տվեցին ինձ ու մրմուռ։

Սիրո համար թափառեցի մշտաբար,
Բայց վոչ մի տեղ յես չգտա ընավ սեր,
Ու տուն դարձա թախծոտ, հիվանդ, վշտահար։

Սակայն այդտեղ ինձ ընդառաջ դու յեկար,
Յեվ, ախ, այն՝ ինչ քո աչքերում ծփում եր,
Դա եր սերը՝ փնտռված շատ, շատ յերկար։

Հ. ՍՏՐ.—ԻՆ

Նրա՝ "Գերմանական արվեստի զարթնումի համար" գիրքը կարդալուց հետո:

Յերբ յես շտապ քո գրքույկը բաց արի,
Ինձ ժպտացին շատ հարազատ պատկերներ,
Վոր յերբեմն դիտում եյի, վաղուց, դեռ
Յերազային իմ մանկության օրերին։

Գերմանական հավատքի այն տաճարի
Շենքն եմ կրկին տեսնում ձգված դեպի վեր.
Յեվ լսում եմ զանգակների բյուր ձայներ,
Քաղցր սիրո արտասունքների պես բարի։

Տեսնում եմ թե ինչպես ճարպիկ թզուկներ
Տաճարն ի վեր մագլցել են հանդգնում,
Քանդակները խորտակել են միշտ ճգնում։

Բայց, թող անեն տերևազուրկ կաղնին մեր,
Զրկեն նրան շքեղ, կանաչ զարդերից,
Կգա գարուն,—կզարդարվի նա նորից։

ՖՐԵՍԿՈ–ՍՈՆԵՏՆԵՐ ԽՐԻՍՏԻԱՆ ԶԵԹԻՆ.

1

Չեմ խնկարկում յես կուռքերին այն հիմար,
Վոր վոսկի յեն տեսքով, ավաղ՝ հոգեպես,
Ստահակի մեկնած ձեռքն եմ մերժում յես,
Նա անունս հոշոտում ե զազրաբար։

Չեմ խոնարհում պոռնիկներին անափառ,
Ամոթալի իրենց գործով գոհ ու վեհ.
Յես չեմ լծվի ամբոխի հետ լուռ ու հեզ
Սին կուռքերի շքեղ կառքին քմավար։

Գիտեմ, կաղնին պիտի ընկնի խորտակված,
Առվի ափին մինչ յեղեգնը դյուրաթեք
Փոթորկի մեջ ճկալու յե դեռ կանգնած։

Սակայն վերջը վո՞րն ե նրա բախտը հեգ,—
Պիտի դառնա գավազան մի հիմարի,
Կամ նրանով ծառան հագուստ պիտ մաքրի։

2

Տուր, ուզում եմ հիմա կրել յես դիմակ,
Դառնամ աղքատ, վորպեսզի պերճ ու բեհեզ
Հագած ամեն մի խաբեբա ժպտերես
Չկարծե թե իրենցից եմ՝ խեղկատակ։

Տուր ինձ խոսքեր, սովորույթներ հասարակ,
Վոր յերևամ յես պարզամիտ ռամիկի պես,
Հոգու բոլոր պչրանքներն եմ թաղնում յես,
Վորով զուգվում է ամեն մի ստահակ։

Պիտի պարեմ յես հանդեսում քողարկված,
Ասպետներով, արքաներով, տերերով
Շրջապատված, հավլիաներից միշտ հարգված։

Ինձ կծեծեն նրանք փայտե սրերով,
Դա կատակ է, քանզի դիմակս առնեմ վար՝
Վոճրագործներն այդ կմնան ապշահար։

3

Ծիծաղում եմ տխմարների վրա յես,
Վոր նոխազի դեմքով ինձ են միշտ նայում,
Աղվեսների, վոր իմ վրա յեն պահում
Աչքերն իրենց նենգ, խորամանկ մշտապես։

Ծիծաղում եմ կապիկների վրա վես,
Վորոնք մտքի հսկաներ են ձևանում,
Վոճրագործի վրա յեմ յես ծիծաղում,
Վոր իր թունոտ զենքն է հանում ասպարեզ։

Քանզի բախտի գեղեցկությունն յերբ համակ
Ճակատագրի հարվածներով փշրված
Ցեխ նետված է այդպիսով մեր վոտքի տակ,

Ու յերբ սիրտը մեր կրծքի տակ բզկտված,
Խոցոտված է և հոշոտված է, ավաղ,
Մեզ մնում է հնչուն, շքեղ մի ծիծաղ։

4

Իմ ուղեղում կա մի չքնաղ հեքյաթ,
Յեվ այդ հեքյաթում մի յերգ ե հնչում,
Յեվ այդ յերգի մեջ ծաղկում ե, շնչում
Մի քնքուշ աղջիկ, հրաշագեղ մի վարդ։

Մի փոքրիկ սիրտ կա աղջկա մեջ այդ,
Բայց այդ սրտի մեջ սերը չի աճում,
Այդ անսեր սրտում, ուր ցուրտն ե փչում,
Վստահությունն ե համառել հպարտ։

Լսում ես ինչպես հեքյաթն ե հնչում,
Յերգն ե մրմնջում մեջն այդ հեքյաթի,
Յեվ այն աղջիկն ե մեղմիկ քրքջում։

Վախենում եմ, վոր գլուխս պայթի,
Ո՛, այդ կլիներ սոսկալի, դժվար,
Յեթե միտքս իր հին ուղուց դուրս գար։

Տխուր, թախծոտ ու լուռ պահին իրիկվան
Հնչում են իմ շուրջը յերգեր մոռացված,
Աչքերիցս արցունքներ են ցայտում ցած,
Սրտիս վերքից թափվում ե ցայտքն իմ արյան։

Նորից, ինչպես հայելու մեջ դյութական,
Յես տեսնում եմ սիրուհուս դեմքն իմ սիրած,
Կարմիր հագած, սեղանի մոտ իր նստած,
Շուրջն յերջանիկ լռությունն ե տիրական։

Ահա հանկարծ տեղից նա վեր ե վոստնում,
Տալիս ե իր գանգուրներից ինձ մի փունջ.
Ինձ պատում են ուրախություն ու սոսկում։

Մեֆիստոն իմ խինդը դարձրեց սև տրտունջ.
Նա հյուսեց մի ամուր պարան այն փնջից
Յեվ դրանով հավետ քաշ ե տալիս ինձ։

6

„Մի տարի սպաս՛, դու ինձ, սիրելիս,
Չհամբուրեցիր տեսության պահին»,
Այդպես ասացի, և իմ սիրուհին
Կարմիր շուրթերով հպվեց շուրթերիս։

Ապա ժպտալով նա տվեց ձեռքս
Մրտենու մի ճյուղ թաղարից իր հին,—
«Ապակու տակ միշտ թաց հողում պահիր»,
Ու գլխով արավ նա բաժանվելիս։

Տարիներ անցան և իմ թաղարում
Մրտենին թոշնեց, սիրուհիս չկա,
Բայց համբույրը դեռ գլխումս է այրվում։

Ու հեռուներից դարձյալ յետ յեկա,
Մնացի վողջ գիշեր յես դռան ցրտում,
Ու լուսաբացին հեռացա տրտում։

7

Զգույշ յեղիր սատանայից, իմ ընկեր,
Բայց հրեշտակն ավելի յե նենգ ու լուռ.
Հրեշտակը ինձ տվեց մի ջերմ համբույր,
Բայց սթափված տեսա միայն սուր ճանկեր։

Զգուշացիր կատուներից սև ու ծեր,
Բայց ավելի վատ է ձագը ձյունաթույր.
Իմ սիրուհին այդպիսին եր և իր սուր
Ճանկերով էլ սիրտս արեց արնավեր։

Ո՛վ իմ քաղցր անուշ աղջիկ, այդ ինչպես
Խարում են քո աչքերը ջինջ, գեղանի,
Ու թաթիկդ սիրտս է անում արնակեղ։

Ո՛վ իմ կատվի քնքույշ թաթիկ, յերանի
Շրթունքներով քեզ սեղմեյի յես հիմա,—
Թող իմ սրտից արյուն հոսեր մինչև մահ։

8

Աղքատությունս այնպես պիտի վերջանար,
Թե լինեյի յես մի վարպետ նկարիչ՝
Զարդարեյի պատկերներով գրավիչ
Հպարտ ամրոց, դղյակ, պալատ ու տաճար։

Ոսկու պարգև պիտի հոսեր ինձ համար,
Թե սրնգով կամ ջութակով հմայիչ
Յես նրբությամբ նվագեյի ամոքիչ,
Որ դահլիճը ծափից թնդար անդադար։

Ավաղ, ժամոնն ինձ չի ժպտում այնքան հեշտ,
Քանզի քեզնով եմ զբաղված, ո՛, ափսոս,
Դու անպտուղ քերթողական իմ արվեստ։

Յեվ, ավաղ, մինչ ուրիշները կարմրահոս
Գինին աստծու կենացն են միշտ դատարկում,—
Յես կամ ծարավ, կամ խեղդվում եմ իմ պարտքում։

9

Կյանքն ինձ համար փակ սենյակ եր, տանջարան.
Կախել եյին ինձ սենյակում գլխիվայր,
Տանջում եյին իմ մարմինը խիստ տկար
Ողակներով, ունելիքով հուրհրան։

Գոռում եյի յես մոլեգին, և արյան
Ցայտքն եր բղխում իմ բերանից մշտաբար,
Ու մոտեցավ ինձ մի աղջիկ մրճահար,
Ոսկե մուրճով տվեց մի զարկ գթության։

Ու դիտում է այդ աղջիկը գեղեցիկ
Թե ինչպես եմ յես մահվան դեմ կռվում զուր,
Բերանս արնոտ և լեզուս կախ, ջղաձիգ։

Ուշի ուշով նա լսում է ճիչս սուր,
Հոնդյունս նրան նվագ է թվում.—
Նայում է նա և սառնորեն հրճըվում։

10

Հաճախ դու ինձ տեսար կռվում, անգուրված
Կատուների, ակնոցավոր շների
Դավերի դեմ, վոր անունիս անթերի
Ցանկանում են արատ նետել, բերել ցած։

Տեսար հաճախ դու կռվի մեջ ինձ պարտված,
Ընդդեմ թունոտ այն խեղկատակ անձերի,
Տեսար շուրջս վտառը իժ-ոձերի,
Յեվ արյունս՝ իմ վերքերից՝ լերդացած։

Կանգնած էիր դու, վորպես մի աշտարակ,
Քո գլուխն էր միայն փարոս ինձ համար,
Յեվ քո սիրտը նավահանգիստն իմ միակ։

Ալիքներն են կոծում ափերն անդադար,
Քիչ նավեր են նավահանգիստն այդ ընկնում,
Բայց վորն ընկավ,—ապահով է նա քնում։

11

Յես կուզեյի լալ, անզոր եմ սակայն,
Կուզեյի յելնել բարձրունքները վեր,
Սակայն մնում եմ գետնին կպած յես,
Շուրջս գարշելի գեռուններ համայն։

Յես կուզեյի վոր սերս աննման
Իմ կյանքի լույսով մնար մշտակեզ,
Նրա շունչը ինձ կյանք տար, բախտի պես,
Բայց յես անզոր եմ ու մոտ եմ մահվան։

Իմ խոցված սրտից հոսում է վարար
Արյունս այնքան տաք. ընկնում եմ հոգնած,
Յեվ իմ աչքերը պատում է խավար։

Յեվ լուռ սարսուռով դեպի միգամած
Աշխարհն եմ գնում, ու քնքույշ թեվեր
Ինձ մեղմ գրկում են, տանում դեպի վեր։

ԼԻՐԻԿԱԿԱՆ ԻՆՏԵՐՄԵՑՑՈ

ԼԻՐԻԿԱԿԱՆ ԻՆՏԵՐՄԵՑՑՈ

Յես թափել եմ իմ գրում այս
Տրտունջներս, ցավ ու հառաչ,
Իմ այս գիրքը յերբ դու բանաս,
Կբացվի սիրտն իմ քո առաջ:

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Ժամանակով մի լավկյաց ասպետ կար՝
Դեմքն ակոսված, ձյունաթույր,
Թափառում եր նա դողդոջուն ու տկար,
Գերված յերազներով բյուր։
Նա այնքան կոշտ, այնքան անտաշ, ձախլիկ եր,
Ծաղրում եյին աղջիկներ ու ծաղիկներ,
Յերբ անցնում եր մոտից լուռ։

Նստում եր տան մի՝ անկյունում մթագին,
Վոր աննկատ միշտ մնար.
Բազուկներն եր նա տարածում անձկագին,
Բայց չեր ասում վոչ մի բառ։
Սակայն հետո, յերբ գիշերն եր սկսվում,
Տարօրինակ յերգ ու նվագ եր լսվում,
Դուռն եր ծեծվում մշտաբար։

Ահա ներս է մտնում նրա սիրուհին
Հագած փրփուր ու կոհակ.
Ծաղկում, վառվում է վարդի պես գարնային,
Քողն է շողում այնքան թանգ.

Մեջքն է ծեծվում զանգուրների ծփանքով
Ու աչքերն են փողփողում վառ դյութանքով.
Ու զրկվում են լուռ նրանք։

Ու զրկում է նրան ասպետն այն տրտում
Հիմա դարձած վառ կրակ.
Դժգույնը՝ ալ, ու անրջողն է զարթնում,
Ու յերկչոտն է համարձակ։
Յեվ սիրուհին շատ խորամանկ մի խաղով
Նրա գլուխն է լավ ծածկում իր քողով
Ադամանդյա սպիտակ։

Ջրհատակյա մի բյուրեղյա պալատում
Տեսավ իրեն նա հանկարծ,
Շլանում է, աչքերն հազիվ է թարթում
Ճաճանչներից բռնկված։
Նրան գրկել է ջրհարսը՝ համակ սեր,
Փերին հարսն է, ինքը՝ փեսան, նաժիշտներ
Նվագում են խմբըված։

Նվագում են, յերգում այնտեղ ու պարում
Բազում զույգեր մոլեգին.
Յեվ ասպետին խինդությունն է պարուրում.
Հարսն է սեղմում իր կրծքին.—
Հանկարծ հանգչում է ամեն լույս ու կրակ.
Ու նստած է պոետ-ասպետը մենակ
Իր սենյակում տրտմագին։

1

Հրաշագեղ մայիս ամսին
Կոկոնները յերբ բացվեցին,
Այն ժամանակ իմ սրտի մեջ
Բռնկեց սերը անշեջ։

Հրաշագեղ մայիս ամսին
Թռչուններն յերբ յերգեցին,
Այն ժամանակ բացի նրան
Իմ իղձերը հուրհուրան։

2

Արցունքներից իմ հորդուն՝
Շատ ծաղիկներ են փթթում,
Յեվ իմ հառաչներից հեգ՝
Սոխակների մեծ խմբերգ։

Թե ինձ սիրես, սիրունի,
Ծաղիկներս կտամ քեզ,
Յեվ քո պատուհանի տակ՝
Սոխակի յերգ կլսես։

3

Վարդը վառ, շուշանը, աղավնին ու արև
Ինձ յերբեմն սիրո բերկրանքով են վառել։
Ել չեմ սիրում նրանց, սիրում եմ մի եյակ՝
Յեվ փոքրիկ, և նրբին, և մաքուր ու միակ։
Նա ինքն է վողջ սիրո աղբյուրը վարարեղ,
Յեվ վարդ է, շուշան է, աղավնի ու արև։

4

Յերբ աչքերիդ մեջ եմ նայում՝
Վողջ վշտերս են անհետանում.
Յերբ բերանն եմ համբուրում քո՝
Առողջ եմ յես ամբողջ հոգով։

Յերբ հենվում եմ յես քո կրծքին՝
Հաճույքի մեջ եմ յերկնքի.
Յերբ ասում ես—«Սիրում եմ քեզ»․․
Արդ՝ դառնորեն լալիս եմ յես։

5

Տեսա դեմքդ անուշ, սիրուն
Վերջերս յես իմ յերազում.
Հրեշտակային, գողարիկ, արդար,
Սակայն դժգույն ու վշտահար։

Բայց շուրթերիդ՝ վոր ալ եյին՝
Մահի համբույր կիջնի դեղին,
Ու յերկնի լույսն ել կմարի,
Վոր ցոլքն է քո սուրբ աչերի։

6

Հենիր քո այտը իմ այտին՝
Արցունքը թող մեկտեղ հոսի,
Սեղմիր ամուր սիրտդ սրտիս՝
Ձուլվեն բոցերը միասին։

Երբ հոսում է բոցի մեջ մեծ
Արցունքների հեղեղը մեր,
Երբ թևերս գրկում են քեզ՝
Սիրո տենչից մեռնում եմ յես։

7

Ցանկանում եմ հոգիս հանգչի
Բաժակի մեջ շուշանի,
Սիրուս մասին նա իր շնչի
Հնչյունից յերգ կհանի։

Կդողա յերգն ու կյանք կառնի
Բերնի համբույրը ինչպես,
Վոր մի անգամ, հրաշալի
Քաղցր ժամին նա տվեց։

8

Կանգնած անշարժ յերկնքում
Դարեր ու դարեր,
Սիրո թախծով են նայում
Իրար բյուր աստղեր։

Փարթամ լեզվով են խոսում
Նրանք իրար հետ,
Վոր չի կարող հասկանալ
Վոչ մի լեզվագետ։

Սովորել եմ սակայն յես,
Չեմ մոռանա այն,
Սիրածիս դեմքն եր ձեռնարկ
Քերականության։

9

Յերգի թևով քեզ հեռու
Կտանեմ յես, սիրահա՛ր,
Ուր Գանգեսի ափերում
Գիտեմ չքնաղ յես մի վայր։

Ուր ալ ծաղկող մի պարտեզ
Լուսնի շողերում հանդարտ,
Լոտոսներն են մնում քեզ՝
Քրոջն իրենց հարազատ։

Մանուշակներն են ժպտում,
Դիտում յերկինքն աստղալի,
Վարդերն պատմում են թագուն
Իրար հեքյաթ բուրալից։

Վոստնում են մոտ, ունկնդրում
Վիթերն խելոք ու բարի,
Ու հեռում է անդադրում
Սուրբ հոսանքը բյուրալիք։

Քեզ հետ այնտեղ կիջնենք վար,
Արմավենու մի ներքո,
Կխմենք սեր ու դադար՝
Քաղցր, յերազուն հոգով։

Լոտոս ծաղիկն է նեղվում
Պերճությունից արևի,
Ցավ գլխահակ, յերազուն,
Սպասում է գիշերին։

Իր սիրահար լուսնկան
Արթնցնում է լույսով,
Ցույց է տալիս նա նրան
Իր ծաղիկ դեմքը սիրով։

Ծաղկում, վառվում է, փայլում,
Նայում է լուռ դեպի վեր.
Բուրում, լալիս է, դողում
Սիրուց, վշտից կարեվեր։

11

Հռենոսի հոսանքում վառ,
Կոհակների հայելում,
Իր տաճարովը մեծափառ՝
Սրբազան Քյոլնն է ցոլում։

Տաճարի մեջ մի պատկեր կա
Կաշվի վրա վոսկեհուռ,
Կյանքիս շփոթության մեջ՝ նա
Սիրով լույս է տվել լուռ։

Ցավ սիրելի մեր տիկնոջ շուրջ
Հրեշտակ ու ծաղկունք ծածան,
Աչքերն իրա, այտեր ու շուրթ՝
Ճիշտ սիրուհուս են նման։

12

Չես սիրում ՚ինձ, չես սիրում ինձ,
Այդ քիչ վիշտ է ինձ համար,
Միայն դեմքդ տեսնեմ նորից՝
Արքա՛ կլինեմ խինդով վառ։

Նույնիսկ ատում, ատում ես ինձ,
Քո վարդ բերանն է ասում,
Բերանդ ալ՝ բեր, համբույրից
Կամոքվեմ յես, սիրասուն։

13

Ո՛, մի յերդվիր, համբույր միայն,
Չեմ հավատում կանանց յերդման.
Խոսքդ քաղցր է, բայց ավելի
Տված համբույրդ է քաղցրով լի.
Այն իմն է լոկ, խաբուսիկ չի,
Խոսքը՝ փոշի ու գոլորշի։

* * *

Յերդվիր, հոգյա՛կ, դու շարունակ,
Հավատում եմ խոսքիդ մենակ.
Խոնարհվում եմ յես կրծքին քո,
Յերջանկանում եմ հավատով.
Հավատում եմ, վոր մշտապես,
Յեվ ել յերկար ինձ սիրում ես։

14

Իմ սիրուհու աչիկներին
Կանցոններ եմ գրում սիրուն,
Իմ սիրուհու շրթունքներին՝
Տերցինները իմ լավագույն·
Իմ սիրուհու այտիկներին
Ստանսներ եմ գրում անմահ,
Կգրեյի վրան սոնետ՝
Թե մի սրտիկ ունենար նա։

15

Աշխարհը կույր, աշխարհն անմիտ,
Անհրապույր օրեցոր,
Ասում է քո մասին, մանկիկ,
Նկարագիր չունեցող։

Աշխարհը կույր, աշխարհն անմիտ
Չի ճանաչի յերբեք քեզ,
Ծանոթ չի քո համբույրներին
Այնքան քաղցր, սիրակեզ։

16

Հոգյա՛կ, այսօր ասես պիտի,
Թե չես արդյոք մի ուրու
Ծնված մորից դու պոետի
Ամռան ծանր մի որում։

Բայց վոչ, յերբեք նման բերան,
Աչքերի լույս կախարդուն,
Այդպես սիրուն, քաղցրիկ մանկան
Բանաստեղծը չի կերտում։

Բազիլիսկներ ու վամպիրներ,
Յեվ ճիվաղներ ու սողուն,
Նման տգեղ, սուտ հրեշներ
Պոետի հուրն է ծնում։

Բայց քեզ, հոգին քո նենգավոր,
Ու քո դեմքը գեղեցիկ,
Հեզ հայացքներդ կեղծավոր
Պոետը չի ստեղծի։

17

Կարծես ծնված փրփրից ջրի,
Դարձել է նա գեղափայլ,
Վորովհետև մի ոտարի
Հարսնացուն է ընտրյալ։

Սիրտ իմ, սիրտ իմ համբերատար,
Այս դավը դու թող անվոխ,
Խենթ սիրունի գործն անարդար
Ներող յեղիր, համբերող։

18

Սիրտս էլ խորտակվի, վոխ չեմ պահի յես,
Վոխ չեմ պահի յես, հավետ կորած սեր,
Վորքան էլ ալմաստ պերճությամբ փայլես՝
Գիշեր սրտիցդ շող չի մտնի ներս։

Այդ գիտեմ վաղուց։ Չե՞ վոր քո սրտում,
Տեսա յերազիս, իջել եր գիշեր,
Յեվ ոձը տեսա, քո սիրտն եր ուտում,
Տեսա քեզ, ինչքան թշվառ ես, իմ սեր։

19

Այո, թշվառ ես դու և չեմ զայրանում յես,
Իմ սեր, մենք պետք ե վոր լինենք թշվառ,
Մինչ խորտակի մահը մեր սրտերը տկար,
Իմ սեր, մենք պետք ե վոր լինենք թշվառ։

Թեկուզ տեսնեմ ծաղրդ բերանիդ շուրջ շարժուն,
Յեվ աչքերդ փայլեն հանդգնաբար,
Հպարտությունդ տեսնեմ, վորից կուրծքդ ե ուռչում,
Սակայն թշվառ ես դու, ինձ պես թշվառ։

Պղտորվում ե աչքդ արցունքներից թաքուն,
Շուրթիդ՝ վիշտը շարժուն ու աննշմար,
Հպարտ կուրծքդ գաղտնի վերք ե բովանդակում,
Իմ սեր, մենք պետք ե վոր լինենք թշվառ։

20

Նվագում են փող, ջութակ,
Շեփորները՝ խմի,
Հարսնեպարի յեղանակ
Հնչեց իմ սիրելին։

Թմբուկի թինդ ու հնչյուն
Սրինգների հարիր,
Հեծկլտում են, հառաչում
Հրեշտակները բարի։

21

Ահա մոռացար այդպես իսպառ,
Վոր տիրել եմ յես սրտիդ յերկար,
Սրտին քո քաղցր ու կեղծ այնքան,
Վոր կեղծ ու քաղցր չկա մի բան։

Մոռացար և՛ վիշտ, և՛ սեր այդպես,
Վոր ճնշում եյին սիրտս հրկեզ.
Չգիտեմ սերը, թե՞ վիշտն եր մեծ,
Մեծ եյին դույզն եյ այդ գիտեմ յես։

22

Ծաղիկները թե իմանային
Խոցոտված է իմ սիրտը վորքան,
Նրանք ինձ հետ լաց կլինեյին,
Վոր խորունկ ցավիս բուժումը տան։

Սոխակները թե իմանային
Ինչքան տխուր եմ, ինչքան տկար,
Նրանք էլ ուրախ կհնչեյին
Իրենց յերգերը հոգեպարար։

Վոսկե աստղերը իմանային
Իմ ցավը, յեթե խորունկ այնքան,
Իրենց բարձունքից վար կգային.
Վորպեսզի հոգուս սփոփանք տան։

Նրանք բոլորը չեն իմանա,
Ցավըս ծանոթ է միայն մեկին,
Չե՞ վոր խոցել է հենց ինքը, նա,
Խոցելի սիրտս այնքան դյուրին։

23

Վարդերն ինչու յեն դժգունակ,
Ասա՛, հոգյակ, ինչու
Մանուշակները կապուտակ
Համր են սեզի միջում։

Ինչու յե յերգում վողբաձայն
Արտուտիկը արտում,
Շուշանից ինչու բարձրացավ
Դիակի հոտ ոդում։

Յեվ ինչու յե արևն այդքան
Թախծոտ նայում հանդին,
Յերկիրն ինչու վոնց գերեզման՝
Նման անապատի։

Ինչու յեմ յես տխուր, տկար,
Ասա՛, հոգյակ, ինչու,
Ասա, դու ինձ, իմ սիրահա՛ր,
Ինչու թողիր, ինչու։

24

Նրանք գանգատ են արել,
Պատմել են քեզ շատ բան,
Հոգիս ինչն է տանջել,
Նրանք քեզ չեն ասել այն։

Աղմկեցին նրանք շատ,
Գլուխներն վողբով շարժեցին,
Անվանեցին ինձ չար,
Հավատացիր ասածին։

Սակայն բանը վատագույն
Չգիտեցան նրանք,
Այդ վատ բանը թագուն
Կրում եյի կրծքիս տակ։

25

Ծաղկում եր թմբին, սոխակն յերգում,
Ուրախ խինդով եր ժպտում արփին,
Համբուրեցիր դու, թևդ է գրկում
Ու սեղմում ինձ քո փարթամ կրծքին։

Տերևներն ընկան, կանչեց ագռավ,
Վողջունեց արփին թույլ ու ձանձիր,
Ասինք սառն իրար — Մնաս բարյավ —
Դու պատշաճ ձևով հրաժեշտ տվիր։

26

Շատ, շատ ենք սիրել մենք մեկս մեկին,
Ու հաշտ ենք յեղել իրար հետ այնքան,
Մենք խաղացել ենք հաճախ «մարդ ու կին»,
Իրար չենք ծեծել, քաշկրտել սակայն։
Մենք կատակել ենք, հրճվել իրար հետ,
Իրար համբուրել, գգվել սիրավետ։
Յեվ ի վերջո մենք հաճույքով մանկան
«Պահմտուք» խաղով ընկանք ձոր, անտառ,
Այնպես թագնվել սովրեցինք սակայն,
Վոր մենք այլևս չենք գտնի իրար։

27

Յեղար ամենքից յերկար
Հավատարիմ, հոգատար,
Նեղ օրերում իմ անծիր
Ինձ սփոփանք բերեցիր։

Տվիր ուտեստ, խմելիք
Ու պարտք տվիր ինձ դրամ,
Ճերմակեղեն՝ հագնելիք,
Յեվ անցագիր՝ վոր գնամ։

Ո՜, սիրելիս, քեզ աստված
Պահի տաքից ու ցրտից,
Ու չտա քեզ քո տված
Բարիքը՝ վոր տվիր ինձ։

28

Յերկիրը՝ մլատ յերկմը, յերկար,
Ցեխավ մայիսը, դարձավ շռայլ,
Ամեն ինչ ցնծում, ժպտում ե վառ,
Զունեմ յես սակայն ցնծության փայլ։

Ծաղկունքն են ծլում, հնչում զանգեր,
Հավքերն են խոսում՝ վոնց հեքյաթում,
Անդուր ե քաղցր նրանց խոսքն էլ,
Ամեն ինչ տհաճ, զուր եմ գտնում։

Զանձրալի յեն ինձ մարդիկ բոլոր,
Բարեկամն անգամ մերթ տանելու,
Այդ նրանից ե, նրանից, վոր
«Տիկին» են կոչում իմ սիրելուն

29

Ուշացա յերր այդպես յերկմր ու յերկմր,
Յերկրներում ոտար՝ յերազուն, թափառ,
Իմ սիրածին թվաց՝ պահը յերկարեց
Յեվ հարսնեկան իր հագուստները կարեց,
Յեվ գրկեց նա թեերովը իր քնքուշ
Մի փեսացու՝ ապուշներից էլ ապուշ։

Իմ սիրուհին սիրուն, քնքուշ ե այնքան,
Ծփում ե դեռ պատկերն իմ դեմ դուրեկան,
Այտերը վարդ ու աչքերը մանուշակ,
Վոր վառվում են ու ծաղկում են շարունակ,
Վոր այդ սիրո հանդեպ յեղա սիրադուրժ,
Այդ իմ ապուշ գործերից էլ եր ապուշ։

30

Աշխիկները լուրթ մանուշակ,
Այտիկները վարդեր կարմիր,
Թաթիկները շուշան ճերմակ
Բողբոջում են միշտ, շարունակ,
Սրտիկն է լոկ չոր ու ցամաք։

31

Աշխարհն այնպես սիրուն, յերկինքը կապույտ,
Ցել շնչում է oդը մեղմ ու գուրեկան,
Ցել ծաղկունքն են ժպտում մարգում ծաղկաբույր,
Փայլում, շողշողում են ցողում վաղորդյան,
Ցել ցնծում են մարդիկ, ուր նայում եմ յես,
Ցես կուզեյի սակայն իջնել գերեզման՝
Մեռած մի սիրունու փարվել սիրակեզ։

32

Իմ սիրելի, երբ դամբանում,
Մութ դամբանում դու պառկես,
Արդ, կուզեմ ես հողի խորքում
Իջնել այնտեղ, փարվել քեզ։

Սեղմեմ, գրկեմ, համբուրեմ քեզ,
Դու լուռ, դու սառ, դժգունակ,
Ցնծամ, դողա՛մ, լաց լինեմ ես,
Դառնամ ես էլ մի դիակ։

Դիերն յելնեն, կես գիշերում
Ողեղեն խմբով պար գան,
Պառկեմ ես քո բազուկներում,
Ու մնանք մենք մի դամբան։

Դիերն յելնեն. ա՛հեղ օրին
Տանջանքի ու խնդության,
Մենք անտարբեր այդ բոլորին
Հանգիստ պառկենք հավիտյան։

33

Կանգնած է մենակ մի յեղևնի՝
Հյուսիսում մի մերկ բլրի վրա.
Ննջում է նա լուռ, սառցի, ձյունի
Ճերմակ ծածկույթն է պատել նրան։

Յերազում է մի արմավենի,
Վոր արևելքում այն հեռավոր,
Կիզիչ ժայռի մի կողին հիմի
Թախծում է լուռ ու մենավոր։

34

(Գլուխն ասում է)

Լինեյի յես, ախ, մի աթոռ,
Ուր սիրուհուս վոտներն հանգչեն,
Ու կոխկրտի ինձ վորքան վոր՝
Ու յես վոչ մի տրտունջ չանեմ։

(Սիրտն ասում է)

Լինեյի յես, ախ, մի բարձիկ,
Ուր ասեղներ է խրում նա,
Յեվ յեթե ինձ ծակծկե իսկ՝
Դըրանով ինձ ցնծություն տա։

(Յերգն ասում է)

Լինեյի յես, ախ, թղթիկ մի,
Վորով հյուսերը փաթթեր նա,
Շշնջայի նրան գաղտնի
Բոլորը ինչ իմ հոգում կա։

35

Սիրուհիս ինչ հեռացավ,
Ծիծաղը յես մոռացա,
Վոմանք փորձեցին կատակ՝
Ծիծաղ չկար կրծքիս տակ։

Նրան կորցնելուց ի վեր
Նույնպես և լացն եմ թողել․
Վշտից իմ սիրտը խորտակ՝
Բայց լաց չկա կրծքիս տակ։

36

Իմ մեծ, իմ մեծ վշտերով
Փոքրիկ յերգեր եմ շինում,
Նրանք հնչուն թևերով
Սիրուհուս սիրտն են թռչում։

Ճամբան գտնում են նրա,
Յետ են դառնում, գանգատվում.
Գանգատվում են, չեն ասում՝
Ինչ տեսան նրա սրտում։

37

Փիլիստրներն հագած տոնական,
Շրջում են դաշտում, անտառում,
Վողջունում են սիրուն բնությանն,
Ուլերի պես հրճվում, ցատկռտում։

Նայում են շլացած՝ թե ինչպես
Ռոմանտիկ է վողջը՝ փթթում,
Յերկար ականջներով կլլում ներս՝
Ծիտերի յերգը ունկնդրում։

Սակայն յես ծածկում եմ սև գույնի
Պատուհանին իմ վարագույրը։
Յեվ այցելում են ինձ նույնիսկ
Ուրուներն իմ՝ ցերեկով։

Հին սերս հայտնվում է կրկին,
Մեռելոց աշխարհից յելնում,
Նա նստում, լալիս է իմ կողքին
Ու սիրտս դարձնում զգայուն։

38

Շատ պատկերներ հին օրերի
Շիրիմներից յելնում,
Ցույց են տալիս—յերբեմն քեզ մոտ
Ինչպես՝ եյի ապրում։

Շրջում եյի որն լերագուն
Փողոցներով բոլոր,
Դիտում եյին մարդիկ ապշած,
Յես լուռ, տրտում, մոլոր։

Գիշերը լավ եր ավելի,
Փողոցները թափուր,
Ստվերիս հետ շրջում եյինք
Մեր շուրջը համր ու լուռ։

Քայլս տալիս եր արձագանք
Այն կամուրջի վրա,
Ամպի տակից լուսինն յելավ
Լուրջ նայվածքով իրա։

Յես կանգնեցի քո տան առաջ՝
Աչքերս հառած դեպ վեր,
Նայեցի քո պատուհանին՝
Սիրտս կարծես հալվեր։

Լուսամուտից քո՝ գիտեմ յես
Շատ ես նայել դու ցած,
Տեսել ես ինձ լույսում լուսնի՝
Արձանի պես կեցած։

39

Սիրում է ջահելն աղջկա,
Աղջիկը ընտրել է մյուսին,
Այդ մյուսն էլ մեկ ուրիշին
Ու դարձել նրան ամուսին։

Յեվ այս աղջիկն էլ զայրացած
Իրեն ամուսին է ճարում
Մեկին՝ ում հանդիպում է ճամբին,
Տղին այս վիշտ է պատճառում։

Պատմությունը այս շատ է հին,
Մնում է սակայն նա միշտ նոր,
Խորտակում է սիրտը նրա,
Պատահում է նոր ում հետ որ։

40

Յերբ լսում եմ յերգն այն, վոր
Յերբեմն հոգյակս եր յերգում,
Սիրտս իմ ցավից ահավոր
Խորտակվել ե սկսում։

Մթին մի տենչ ե մղում
Ինձ բարձունքը անտառի,
Ուր հալչում ե արցունքում
Անհուն վիշտս այդ պահին։

41

Յերազումս մի արքայադստեր
Տեսա դժգույն, թաց այտերով,—
Կանաչ թմբենու տակ եյինք նստել՝
Իրար գրկած անհուն սիրով։

«Չեմ ուզում,—ասի,—քո հոր գահը թանգ.
Չեմ ուզում վոսկե գավազան.
Չեմ ուզում յերբեք ադամանդյա թագ.—
Քեզ եմ ուզում յես, քեզ միայն»։

«Անհնար ե այդ,—ասաց,—խմացիր,
Գերեզմանումն եմ չե՞ վոր յես.
Միայն գիշերն եմ քեզ գալիս այցի,
Քանզի շատ եմ սիրում յես քեզ»։

42

Սիրուհիս, յերկուսով մենք լռին
Մի թեթև մակույկով
Սահում եյինք մենակ գիշերին,
Մեր ճամփան՝ ջուր ու ծով։

Մի կղզի գեղեցիկ, դյութական
Շողում եր լուսնի տակ,
Ուր հնչում եյին բյուր յերգ ու ձայն,
Մշուշով քողածածկ։

Հնչում եր այն կղզին հրճվալից,
Կանչում եր ու թովում,
Բայց անհույս լողում եյինք մոտից
Լայնարձակ բաց ծովում։

43

Կանչում ե հեքյաթից հին
Սպիտակ մի ձեռք.
Մի դյութիչ յերկրի մասին
Լսում եմ մի յերգ,—

Ծաղկունքն են հյուծվում այնտեղ
Ցոլքերում լույսի,
Նայում են իրար անմեղ
Հայացքով հարսի։

Այնտեղ ծառերն են խոսում,
Յերգում են խմբով.
Յեվ աղբյուրներն են հոսում
Պարերգ հնչելով։

Սիրո յերգեր են թռչում
Զլված մինչ արդ,
Ու հեշտագին անրջում
Արբենում ե մարդ։

Ա՜խ, յերանի լինեյի
Յես աշխարհում այդ,
Տանջանքից ազատվեյի,
Լինեյի ազատ։

Ա՜խ, յերջանիկ աշխարհն այն
Յերազում եմ միայն,
Հալվում ե առավոտյան,
Փրփուրի նման։

44

Յես քեզ եմ սիրել, սիրում եմ դարձյա՛լ.
Աշխա՛րհն յեթե կործանվի մեր,
Նրա՛ փլատա՛կներից սիրույս ա՛լ
Բոցերը պիտի ցոլա՛ն վեր։

45

Զով պարտեզում յես շրջում եմ.
Ամառնային պայծառ որ,
Ծաղիկները շշնջում են,
Բայց յես լուռ եմ, գլխիկոր։

Ծաղիկները շշնջում են,
Նայում գթոտ ու հանդարտ,—
«Բարի յեղիր մեր քրոջ հանդեպ,
Ո՛վ դու տխուր, դժգույն մարդ»

46

Փայլում է իր մթամած
Գերճանքով սերն իմ վես,
Ամառ գիշերը պատմած
Մռայլ հեքյաթի պես։

«Շրջում են դյութիչ այգում
Յերկու սիրող անձայն,
Սոխակներն են անուշ յերգում,
Ցոլում է լուսընկան։

Կանգնած է աղջիկն՝ արձան,
Ասպետը՝ ծնկաչոք.
Ահա գալիս է հսկան,
Փախչում է կույսն յերկչոտ։

Ասպետն ընկնում է՝ դիակ,
Հսկան տուն է գնում»։
Յերբ մեռնեմ, այն ժամանակ
Հեքյաթն է վերջ գտնում։

47

Ինձ տանջեցին նրանք՝
Դարձրին դալուկ ու խեղճ,
Վոմանք սիրով, վոմանք
Ատելությամբ անվերջ։

Թույն թափեցին նրանք
Հացիս, բաժակիս մեջ,
Վոմանք սիրով, վոմանք
Ատելությամբ անվերջ։

Բայց նա, վոր առավել
Ինձ տվել է վիշտ, ցավ,
Յերբեք ինձ չի ատել,
Ինձ չի սիրել բնավ։

48

Վառված է բորբ ամառը
Քո այտերի վրա.
Ձմեռվա բուքն ու սառը
Քո սրտումն է հիմա։

Սակայն այդ փոխվելու է,
Հոգյա՛կ, ձմեռը սառ
Քո դեմքին փռվելու է.
Ցավ սրտիդ մեջ ամառ։

49

Յերկու հոգի յերբ զատվում են,
Ձեռք են տալիս մեկ-մեկու,
Հառաչում են, արտասվում են,
Հեծեծում են, հեկեկում։

Բաժանվելիս չլացինք մենք,
Չարեցինք սուգ ու կական.
Արցունք, հառաչ սրտակեղեք
Անջատումից վերջ յեկան։

50

Նստած էյին նրանք թեյի,
Խոսում էյին սիրո շուրջ,
Պարոնները՝ եստետ էյին,
Տիկինները՝ քնքույշ, լուրջ.

«Իդեալական սերը լինի»—
Խորհրդականն ասաց, չոր,
Ու ժպտալով հեգնանքով մի
Կինն «ա՜խ» քաշեց հառաչով.

Կանոնիկոսն ասաց՝ «միայն
Պետք է սերը լինի հեզ,
Վոր նպաստե առողջության».
Որիորդն ասաց՝ «այդ ինչպես».

Կոմսուհին էլ թախծով ասաց
«Սերը կիրք է, ու խանդ է».
Ու հրամցրեց դեմը նստած
Կոմսին նա մի բաժակ թեյ։

Սեղանի մոտ ազատ տեղ կար,
Այն քո տեղն էր, սիրելիս,
Ինչքա՜ն պիտի խոսեյիր՝ վառ
Սիրուդ մասին պատմելիս։

51

Թունավորված են յերգերս,
Ուրիշ ինչպե՞ս լիներ ելի,
Չէ՞ վոր ծաղկող իմ կյանքը քո
Թափած առատ թույնով է լի։

Թունավորված են յերգերս,
Ուրիշ ինչպես լիներ ելի.
Իմ սրտում կան ոձեր անթիվ
Յեվ կաս, դու կաս, իմ սիրելի։

52

Տեսա յես հին մի յերազ՝ կրկին
Նստած եյինք գարնան գիշերով,
Բույր եր թափում մեր վրա թմբրին,
Յերդվում եյինք մշտատև սիրով։

Յերդվում եյինք թմբրենու ներքո,
Ծիծաղ եր, զրույց եր և համբույր.
Վորպեսզի հիշեմ յերդումը քո՝
Իմ ձեռքը դու խածեցիր ամուր։

Ո՜վ դու հոգյակ, աչքերով վճիտ,
Ով սիրելի սիրուն և խածան,
Յերդումը սովորական է խիստ,
Սակայն խածնելդ՝ ավելորդ բան։

53

Յես կանգնած եմ լերան գլխին,
Անրջային և զգայուն,
«Ախ մի թռչնակ յես լինեյի,—
Խորհում եյի թախծով անհուն.

Յեթե ծիծառ յես լինեյի,
Կթռչեյի քեզ մոտ, հոգյակ,
Յեվ իմ բույնը կշինեյի
Լուսամուտիդ սովերի տակ։

Յեթե սոխակ յես լինեյի,
Կթռչեյի քեզ մոտ այնպես,
Յեվ գիշերով վարդենու վրա
Իմ երգերը կերգեյի քեզ։

Հիմար թռչնիկ թե լինեյի,
Դեպի սիրտդ կառնեյի թև.
Չե՞ վոր ցավը հիմարության
Դու բուժում ես այնքան թեթև»։

54

Իմ կառքը գնում է դանդաղ
Կանաչ անտառի միջով,
Ջրով մի՝ ծաղկած դյութական,
Բույրի, լույսերի մի ծով։

Կառքում անրջում եմ, խորհում,
Սիրույս մասին յերազում.
Ահա ինձ յերեք ստվերներ
Գլխով վողջույն են տասում։

Վոստնում են նրանք, ծամածռում
Դեմքով հեգնում, ծիծաղում,
Ապա մշուշի պես ձուլված՝
Ճչում են, առաջ սահում։

55

Յերազիս մեջ լացի յես,
Մեռած եյիր. լքած ինձ,
Յես արթնցա, թափվում եր
Դեռ արցունքն իմ այտերից։

Յերազիս մեջ լացի յես,
Տեսա՝ թողնում եյիր ինձ,
Յես արթնցա, լաց յեղա՝
Սրտումս ահ ու կսկիծ։

Յերազիս մեջ լացի յես,
Տեսա՝ սիրում եյիր ինձ,
Յես արթնցա, արցունքն է
Հեղեղվում իմ աչքերից։

56

Յերազում միշտ տեսնում եմ քեզ
Դեպի ինձ սիրով ու կարեկից,
Ու լալիս եմ յես դառնապես,
Վոտներիդ մոտ նետելով ինձ։

Դու նայում ես ինձ թախծալից
Ու շեկ գլուխդ յերերում ես,
Գլորվում են քո աչքերից
Արցունքները մարգարտի պես։

Գաղտնի մի խոսք շշնջում ես,
Նոճու մի ճյուղ տալիս ես ինձ.
Յես զարթնում եմ,—ճյուղն է անտես,
Յեվ թռել է խոսքդ իմ մտքից։

57

Վոռնում է գոռ և զարհուր
Աշնան գիշերն անձրևոտ,
Ո՞ւր է հիմա, արդյոք, ո՞ւր,
Մանկիկն իմ խեղճ ու յերկչոտ։

Յես տեսնում եմ՝ նա կռթնած
Պատուհանին, մենավոր,
Հառել է իր աչքը թաց
Մութ գիշերին ահավոր։

58

Քամին ցնցում է ծառերը,
Աշնան՜ գիշեր է թաց,
Հագած գորշ վերարկուս, ձիով
Թռչում եմ սրընթաց։

Գնում եմ յես, իմ մտքերը
Ինձնից առաջ թռչում,
Տանում են ինձ, հոգյակ, տունդ,
Թեթև, վորպես թռչուն։

Շներն հաչում, ծառաները
Բերում են դուրս ժամեր.
Զնգացնելով խթաններս,
Արագ յելնում եմ վեր։

Գորգով պատած սենյակում իր՝
Բույրով, լույսով լի, տաք,
Սիրուհիս ինձ սպասում է,
Ընկնում եմ գիրկն արագ։

Քամին սուլում, շառաչում է.
Կաղնին հետս է խոսում,—
«Հեծվո՛ր, անմիտ յերազովդ
Ի՞նչ ես, ի՞նչ ես ուզում»։

59

Մի աստղ ցոլաց, ընկավ վար
Իր շողշողուն բարձունքից,
Սիրո աստղն եր, վոր ընկավ՝
Այնպես պայծառ ու անբիծ։

Անձրևնուց թափվում են
Ծաղիկ, տերև խիստ տրտում,
Հովն է խաղում նրանց հետ,
Այս կողմ, այն կողմ շպրտում։

Լճում կարապն է լողում,
Որորվում է ու յերգում,
Կերկեր ձայնով յերգելով
Սուզվում ջրի տարերքում։

Լուռ է, խավար, ու՜ քամին
Ծաղիկ, տերև է ցրել.
Աստղն է կորել շառաչով,
Կարապի յերգն է լռել։

60

Տարավ Մորփեոսն ինձ վիթխարի մի դղյակ
Լուսավառված, կախարդական, բուրալից,
Խայտաբղետ մարդիկ եյին շարունակ
Հոսում՝ միմյանց միախառնված դեմերից.
Յելք եր փնտրում այդ ամբոխը դժգունակ
Գալարվելով, դեմքին յերկյուղ և թախիծ։
Բազմության մեջ կային այնքա՛ն կույս, ասպետ,
Խառնվեցի այդ ժխորում, նրանց հետ։

Բայց մնացի հանկարծ մենակ, սոսկալով,
Թե ամբոխը այդքա՛ն արագ ու՛ր գնաց,
Յեվ շրջում եմ մենակ, արագ քայլերով
Սենյակներում, վոր հյուսված են միմյանց.
Վոտքս՝ կապար, սիրտս դարձավ վշտի ծով,
Ու հուսահատ յես չեմ գտնում յելքը բաց։
Ահա վերջին դրանն եմ հասնում վարանոտ,
Յեվ, ով աստված, ո՛վ է կանգնած դրան մոտ։

Դրան առջև իմ սիրուհին եր կանգնած՝
Ցավը շրթին, հոգսը ճակտին, տխրադեմ,
Յետ դառնալու նշան արեց նա հանկարծ.
Զգուշացնո՛ւմ է, թե՞ բարկանում, չգիտեմ,
Բայց աչքերում տեսա մի հուր բռնկած,
Վոր ինձ ցնցեց, շողշողալով աչքիս դեմ։
Յերբ նայեց խիստ, տարորինակ, բայց սիրով,
Յես արթնցա ալեկոծված ու խռով։

61

Ցուրտ գիշերին յես անտառում
Վողբում եյի ու թափառում,
Լացից զարթնած ամեն մի ծառ
Գլուխ շարժեց կարեկցաբար։

62

Քարուղու վրա կթաղվի
Նա՝ ով կլինի անձնասպան,
Այնտեղ աճում ե բիլ ծաղիկ,
Մահապարտի ծաղիկն ե այն։

Քարուղուն կանգնած յես լացի.
Ցուրտ գիշեր եր համր, անձայն,
Լուսնի լույսում շարժվեց դանդաղ
Մահապարտի ծաղիկը այն։

63

Ուր ել լինեմ, շրջապատում
Խեղդում ե ինձ թանձր խավար,—
Քանի վոր ինձ ել չի ժպտում,
Հոգյակ, լույսը աչքերիդ վառ։

Մնում ե ինձ համար հանգած
Սիրո աստղի փառքը անբիծ.
Վոտքերիս տակ անդունդն ե բաց,
Հավերժ գիշեր, ընդունիր ինձ։

64

Մութն էր պատել աչքերիս,
Ու շուրթերիս կար կապար.
Հանգած սրտով եկի յես
Գերեզմանի խորքում սառ։

Ինչքան յերկար, չգիտեմ,
Թնած եկի դագաղում.
Ցես արթնցա, լսեցի,—
Վոր գերեզմանս են բաղխում։

«Վեր չե՞ս կենում դու, Հայնրիխ,
Որն է ծագում հարության.
Մեռյալները հարյա՜ն վեր.
Սկիզբն է մեծ խնդության»։

Սիրականս, չեմ կարող,
Ձե՞ վոր կույր եմ, յես դեռ կույր,
Արցունքներից աչքերս
Հիմա_հանգած են, անհուր։

«Կհամբուրեմ քեզ, Հայնրիխ,
Մութն աչքերից վանեմ դուրս,
Հրեշտակները կտեսնես
Ու յերկնքի փառքը լույս»։

Սիրականս, չեմ կարող,
Դեռ արյունս է վառ հոսում
Իմ սրտից, վոր խոցեցիր
Դու մեկ խոսքով սայրասուր։

«Կդնեմ ձեռքս յես, Հայնրիխ,
Սրտիդ վրա մեղմաբար,
Այլևս արյուն չի հոսի,
Կբժշկվի վերքդ վառ»։

Սիրականս, չեմ կարող,
Գլխիցս արյուն է կաթում,
Նրան գնդակ պարպեցի,
Ցերբ խլվեցիր ինձնից դու։

«Խոպոպներով իմ, Հայնրիխ,
Քո գլուխը կծածկեմ,
Փակեմ արյան հոսանքը,
Գլխիդ վերքը լավացնեմ»։

Նա խնդրում եր ջերմ սիրով.
Չեյի կարող դիմանալ.
Ու ցանկացա յելնել վեր,
Սիրականիս մոտ գնալ։

Այդ ժամանակ բացվեցին
Իմ վերքերը, ուժգնապես
Արյան հոսանք դուրս ժայթքեց,
Ցեվ արթնցա,—ահա՛, տե՛ս։

65

Բոլոր հին, չար յերգերը,
Յերազներն անհապաղ
Յեկեք, թաղենք հիմա մենք.
Բերեք մի մեծ դագաղ։

Այնտեղ պիտի լեցնեմ յես
Շատ բան՝ հիմա անհայտ,
Հայդելբերգյան տակառից
Խոշոր լինի թող այդ։

Տախտակները լինեն թող
Ամուր ու հաստ և լայն.
Մայնցի կամուրջից էլ թող
Նրանք լինեն յերկայն։

Բերեք վեց զույգ հսկաներ,
Ույժը շատ թող լինի
Քան սուրբ Քրիստափորինը
Մեծ տաճարում Քյոլնի։

Նրանք թող իմ դագաղը
Ծովը իջեցնեն անել.
Այդքան մեծ այդ դագաղին
Մեծ շիրիմ է վայել։

Ի՞նչու լինի դագաղը
Ծանր այդքան ու մեծ,
— Վոր նա տանե վշտերս
Յեվ իմ սերը իր մեջ։

ՎԵՐԱԴԱՐՁ

(ԴԵՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ)

1

Իմ անսահման խավար կյանքում
Փայլեց յերբեմն մի պատկեր,
Քաղցր պատկերն էլ չի փայլում.
Շուրջս գիշեր ու գիշեր։

Մանուկները մտած խավար—
Հոգին նրանց ահաբեկ,
Ահից ազատվելու համար՝
Բարձր յերգում են մի յերգ։

Յես էլ անմիտ մանուկ եմ մի,
Հիմի յերգում եմ մթնում,
Յերգս յեթե ուրախ էլ չի՝
Բայց ահից է ինձ փրկում։

2

Ինչ նշան է, վոր յես կրկին
Տխուր եմ վշտալից՝
Մտքիս միջից հեքյաթ մի հին
Կարծես դուրս չի գալիս։

Ոդը թարմ է, որն է մթնում,
Հռենոսը՝ խաղաղ,
Վերջալույսի ջինջ շողերում
Սարը լուսաշաղաղ։

Ամենագեղ կույսն է նստած,
Այնտեղ, չքնաղ վերում,
Վոսկի զարդերը փայլ առած,
Նա վարսերն է սանրում։

Վոսկի սանրով սանրում է նա
Ու յերգում է մի յերգ,
Այդ յերգն ունի մի յեղանակ՝
Քաղցր, սրտակեղեք։

Նավավարին իր մակույկում
Պատճառեց բուռն վշտեր
Ու ժայռերին նա չի նայում,
Նայում է լոկ դեպ վեր։

Կարծում եմ յես կկլանի
Ջուրը՝ նավորդ, նավակ,
Լորելայը, ո՛, այդ կանի
Իրա յերգով համակ։

3

Տխուր, տխուր է սիրտն իմ.
Մայիսն ուրախ է, սակայն,
Հենվել եմ յես թմբին՝
Հին մարտկոցի վրա այն։

Ցածում հոսում է կապույտ
Գետակը լուռ ու հանդարտ՝
Տղան վարում է մակույկ,
Սուլում է ու նետում կարթ։

Դենը՝ յելնում են զվարթ,
Պատկերներով գունավառ,
Ամառանոց, պարտեզ, մարգ,
Մարգիկ, յեզներ ու անտառ։

Կանայք լվացք են անում,
Թռչկոտում են խոտերում,
Ջրաղացը ակի տակ
Ադամանդներ է փշրում։

Աշտարակին մերձակա
Կա մի պահնորդական տուն,
Ուր ալ հագած մի տղա
Ցետ ու առաջ է քայլում։

Նա խաղում է զենքի հետ,
Վոր շողշողում է ահա,
Մերթ նշանի, ուսին մերթ,
Ա՜խ, կրակեր ինձ վրա։

4

Շրջում, լալիս եմ անտառում,
Վերում՝ սարյակն է նստած,
Վստոստում է, քնքուշ ջերգում.
«Ի՞նչ ես այդպես վշտացած»։

Մանկիկ սիրուն, քույրերը քո՝
Ծիծեռները սահն թող,
Որ ապրում են գողտրիկ բնում,
Սիրուս պատուհանի քով։

5

Գիշերը թեն, փոթորկոտ.
Ցերկինքն աստղեր չունի,
Ծառերի տակ անտառի
Լուռ շրջում եմ հիմի։

Հեռվում վառել է մի լույս
Որսորդական մի տուն,
Գրավիչ չի ինձ համար,
Ինձ տհաճ է թվում։

Կույր մեծ մայրիկը նստած
Կաշվե բազկաթոռին,
Աչքերն անթարթ, քարացած՝
Տխրադեմ ու լռին։

Անտառապահի շեկ որդին
Հայհոյում է, շրջում,
Կախում է զենքը պատին՝
Զարախինդ քրքջում։

Սիրուն ժանողն է լալիս,
Վուշն արցունքով թրջում,
Ոտների մոտ հոր վարսի
Շունն է պառկած փնչում։

Յերբ ճամբորդելիս՝ պատահաբար,
Գտա ընտանիքն իմ սիրածի,
Նրա քույրիկը, և հայր ու մայր
Ինձ ուրախությամբ ճանաչեցին։

Հարցրին ինձ նրանք վիճակը իմ,
Նույնիսկ ասացին անմիջապես,
Վոր չեմ փոխվել յես ամենևին,
Միայն դարձել եմ դժգուներես։

Հարցրի մորքուրների, հորքուրների,
Անհետաքրքիր մի շարք անձանց,
Շնիկի մասին յես հարցրեցի,
Վոր հաչում եր այդպես մեղմ ու կամաց.

Հարցրեցի նաև յես, միջանկյալ,
Սիրուհուս մասին ամուսնացած,
Յեվ նրանք սիրով ինձ ասացին,—
Յերկունքի մեջ է արդեն պառկած։

Բարի մաղթեցի յես հաճույքով,
Ու շշնջացի յես սիրակամ
Վոր նրան ինձնից՝ վառ, սրտագին,
Շատ բարևներ ու վողջույններ տան։

Քույրը միջանկյալ բացականչեց—
«Փնքուշ շնիկը մեր սիրասուն
Մեծացել է ու խելագարվել,
Խեղդամահ յեղել Հռենոսում»։

Նա՝ առանձնապես ժպտում է յերբ,
Այնքան նման է իմ սիրուհուն,
Նույն աչքերն ունի, աչքերը այն,
Վորոնք տվին ինձ թշվառություն։

Է

Ձկնորսատան առաջ նստած
Մենք ծովն եյինք դիտում,
Իրիկնային մշուշն յելավ
Ու տարածվեց ոդում։

Յեվ փարոսի աշտարակին
Լույսերը վառվեցին,
Ու հայտնվեց ծովի վրա
Հեռու մի նավ կրկին։

Խոսում եյինք մենք փոթորկի,
Ծովայինի մասին,
Վոր ապրում է յերկնի, ջրի,
Խինդի, ահի միջին։

Ու հեռավոր յերկրների՝
Հարավ ու հյուսիսի,
Տարորինակ շատ ազգերի
Շատ բարքերի մասին։

Շողում է ափը Գանգեսի,
Մեծ ծառեր են ծաղկում,
Սիրուն, լուռ մարդիկ՝ լոտոսի
Առջև ծունկ են չոքում։

Լապլանդիայում կան կարճ, կեղտոտ
Տափակ գլխով մարդիկ,
Ձուկ են յեփում կրակի մոտ
Ու ճչում են սաստիկ։

Աղջիկները լսում եյին.
Յերբ ամեն մարդ լռեց,
Չեր յերևում նավը ծովում,
Չորս կողմը մութ տիրեց։

8

Զկնորսի սիրուն աղջիկ,
Մակույկով սահիր ցամաք,
Մոտ արի, զրույց անենք՝
Ձեռներս՝ իրարու ափի։

Գլուխդ դիր իմ կրծքին,
Ու յերկյուղ մի ունենա,
Չէ՞ վոր միշտ հանձնում ես քեզ
Կատաղի ծովին՝ անահ։

Իմ սիրտը ծովի նման
Տեղի յե տալիս, յելնում
Յեվ սիրուն մարգրիտ վորքան
Հանգչում են նրա խորքում։

9

Բարձրացել ե լուսնկան,
Ալիքներն ե ճառագում,
Յես գրկել եմ իմ մանկան,
Մեր սրտերն են տրոփում.

Սիրելուս բազուկներում
Հանգչում եմ յես ծովափին.–
«Ինչո՞ւ յես ձեռքդ ցնցում,
Ականջում հողմի թափին»։

Այդ մրմունջը չե հողմի,
Ծովի հարսերն են յերգում,
Իմ քույրերը, վոր որ մի
Խլեց ծովը, իր խորքում։

10

Բազմած լուսինն ամպերին
Հսկա նարինջի նման
Լույս է սփռում գորշ ծովին
Փայլուն շերտով վոսկեման։

Ափին շրջում եմ մենակ,
Ալիքներն են փշրվում,
Քաղցր խոսքեր եմ լսում,
Վորոնք հնչում են ջրում։

Գիշերը, ախ, ինչ յերկար,
Սիրտս լսել չի կարող—
Ծովի հարսեր, դուրս յեկեք
Դյութիչ յերգով ու պարով։

Գլուխս ձեր գիրկն առեք,
Ձեզ՝ մարմինս ու հոգիս.
Կյանքը՝ յերգով, գգվանքով
Դուրս հանեցեք իմ կրծքից։

11

Գորշ ամպերի մեջ փաթաթված՝
Աստվածներն են քնում հիմի,
Խռմփոցն եմ լսում նրանց—
Փոթորիկ է մեծ, ամեհի։

Մեծ փոթորիկ. գայրույթն հողմի
Ուզում է նավն անել խորտակ—
Ո՞վ պիտի այս հողմը մեղմի,
Ջրերն անտեր լեռնակուտակ։

Անզոր եմ յես հողմի դեմ՝ վոր
Շարժում է կայմ, տախտակամած.
Փաթաթվում եմ վերարկույով
Քուն մտնելու՝ ինչպես աստված։

12

Հողմը վարտիքներն է հագնում,
Ջրի ճերմակ վարտիքներ,
Մտրակում է ջուրը, թակում,
Մռնչում են ալիքներ։

Մութ բարձունքից թափով ուժգին
Տեղատարափ ու անձրև,
Ցեվ ուզում է գլխերը հին,
Վոր կլանի ծովը ծեր։

Մագլիներով՝ կայմին ահա
Ճայն է փարվում, աղմկում,
Թռչկոտում է սարսափահար՝
Ու փորձանք է գուշակում։

13

Հողմը պարի յերգ է հնչում,
Շաչում, արձակում ճիչեր։
Հայդե՜, նավը վոնց է թռչում —
Զվարթ, մոլեգին գիշեր։

Ջրի հսկա լեռան նման
Մռնչում է ծովը դեռ,
Այստեղ մի սև վիհ անսահման,
Այնտեղ ջուրը դեպի վեր։

Խցիկից դուրս ահա ձայներ՝
Անեծք, աղոթք. հարհատյուն,
Իսկ յես կայմն եմ ամուր բռնել,
Ա՜խ, ընկնեյի հիմի տուն։

14

Տարածվում է գիշերը խոր,
Ծովը մնում մուժի տակ,
Ալիքները խորհրդավոր
Կուտակվում են սպիտակ։

Ծովահարսը վեր է ելնում,
Ինձ մոտ նստում է ափին,
Ճերմակ ստինքներն են ցցվում
Նրա քողի տակ նրբին։

Գրկում է ինձ, սեղմում է նա,
Պատճառում համարյա ցավ,
— Չէ՞ վոր պինդ ես սեղմում ահա,
Դու, ծովանուշ իմ պայծառ։

— Բազուկներիս մեջ յես սեղմում
Ցեվ ուժով եմ գրկում քեզ,
Քեզ մոտ տաքանալ եմ ուզում,
Գիշերը ինչ ցուրտ է, տես։

Մութ ամպերից նայում է ցած
Լուսինը միշտ դալկահար,
— Աչքըդ դառնում է պղտոր, թաց.
Դու, ծովանուշ իմ պայծառ։

— Նա չի դառնում պղտոր ու թաց,
Աչքս թաց է ու պղտոր,
Չէ՞ վոր նրա մեջ շիթ մնաց,
Ջրից յելա յես յերբ վոր։

Շառաչում է ծովը կրկին,
Ու ճայերն են վողբաձայն.
— Բաբախում է սիրտդ ուժգին
Դու, ծովանուշ իմ պայծառ։

— Բաբախում է սիրտն իմ ուժգին
Բախում ուժգին ու անհագ,
Զի սիրում եմ քեզ, ով անգին,
Ո՛վ մարդկային դու եյակ։

15

Առավոտյան յերբ քո տան
Մոտով անց եմ կենում յես,
Մանկիկ, ուրախ եմ այնքան,
Վոր դու պատուհանին ես։

Աչքերով քո սև ու թուխ
Դիտում ես ինձ զննաբար,
«Ի՞նչ ես ուզում, ով ես դու,
Դու, անծանոթ ու տխուր»։

«Գերմանական պոետ եմ,
Յերկրում ունեմ յես հռչակ,
Հիշեն թե լավ անուններ,
Կհիշվի իմ անունն էլ։

Գերմանիայում շատերը
Ուզում են այն, ինչ վոր յես,
Թե հիշվեն վատ ցավերը,
Կհիշվի իմ նույնպես»։

16

Հեռվում ծովն էր՝ իրիկնային
Վերջալույսից փայլ առած,
Մենք լուռ, մենակ նստած էյինք
Ձկնորսական տան առաջ։

Մեգը իջավ, յելան ջրեր,
Ճայը ճախրում է ոդում,
Աչքերիցը քո լիասեր
Ջինջ արցունքներ են հորդում։

Տեսա, ձեռքիդ ընկան նրանք,
Քո դեմ ծունկի իջա յես,
Խմեցի քո ձեռքից ճերմակ՝
Արցունքներդ սիրակեզ։

Ու այդ պահից հալվում եմ յես,
Տենչից մեռնում եմ հոգով։
Թշվառ կինն ինձ թունավորեց,
Թունավորեց արցունքով։

17

Այնտեղ, բարձր լեռան վրա
Շքեղ դղյակ է կանգնել,
Ուր ապրում են յերեք աղջիկ,
Վորոնց սերն եմ ճաշակել։

Շաբաթ իրիկուն՝ ինձ հետ Յեստեն,
Կիրակի որ՝ Հուլիան,
Յերկուշաբթի՝ Կունիգունդը,
Վոր խեղդում եր համարյա։

Յերեքշաբթի տոն եր սակայն
Աղջիկների դղյակում,
Գալիս եյին կին ու պարոն,
Յեվ ձիավոր և կառքում։

Բայց հրավեր չունեյի յես—
Հիմարություն արիք դուք․
Փսփսում են հորքուր-մորքուր,
Նկատում են ու ժպտում։

18

Հորիզոնում հեռու, հեռու.
Մշուշային պատկեր վորպես,
Քաղաքն ահա բազմաշտարակ՝
Իրիկնային մշուշի մեջ։

Հողմի խոնավ հոսանքն ահա
Կնճռոտում է ճամբան ջրի,
Մակույկավարն տխուր չափով
Ուժ է տալիս իր թիերին։

Վերջալույսը շողաց մեկ էլ,
Փռեց լույսերն իրա փայլուն,
Ու ցույց տվեց ինձ վայրը այն,
Ուր կորցրել եմ իմ սիրուհուն։

19

Վողջույնս քեզ, քաղաք դու
Խորհրդավոր ու մեծ,
Վորը յերբեմն իր գրկում
Իմ սիրուհուն պահեց։

Աշտարակներ, դարպասներ,
Ո՞ւր է իմ սիրելին.
Նրան ձեզ եմ վստահել,
Յերաշխավոր եյիք։

Աշտարակներն անմեղ են,
Շարժվել չեյին կարող,
Յերբ սիրելիս այդպես շուտ
Գնաց իր տուփերով։

Այն դարպասներն են տխմար,
Վոր թույլ տվին փախչի,
Յերբ ուզում է մի հիմար՝
Մյուսը կընդառաջի։

20

Այսպես շրջում եմ յես հին ճամբով,
Յեվ փողոցներով ծանոթ այնքան,
Գալիս եմ սիրած մի տան առաջ՝
Նա ամայի յե ու անկենդան։

Յեվ փողոցները թվում են նեղ,
Սալահատակը անտանելի,
Տներն ընկնում են գլխիս կարծես,
Յես շտապում եմ շուտ ավելի։

21

Մտա դարձյալ դահլիճներն այն.
Ուր խոսք տվեց հավատարմի,
Ուր վոր նրա արցունքն ընկան
Սև ոձերն են սողում հիմի։

22

Գիշեր է լուռ. փողոցներն խաղաղ.
Այս տանն ապրում էր սիրածս անգին։
Թողել է վաղուց նա քաղաքն ահա,
Տունը նույն տեղում կանգուն է կրկին։

Ցել կանգնած մի մարդ. ձեռներն գալարում
Վերև է նայում, ցավից վշտահար,
Սարսափում եմ յերբ դեմքին եմ նայում,
Լուսինն իմ դեմքն է ցույց տալիս ահա։

Դու, որինակն իմ, դժգույն բարեկամ,
Ինչու՞ յես կապկում սիրո վիշտը այն,
Վոր շատ գիշերներ, բազմաթիվ անգամ,
Այս նույն վայրում ինձ տանջել է այնքան։

23

Ինչպես քնես հանգիստ—
Յերբ ապրում եմ, գիտես,
Հին գայրույթս է գալիս,
Լուծս քանդում եմ յես։

Գիտե՞ս յերգը այն հին
Մեռած այն պատանու—
Գիշերով սիրածին
Իր դամբանն է տանում։

Հավատա ինձ, մանկիկ.
Մանկիկ հըրաշագեղ,
Վոր ավելի յեմ յես
Մեռելներից ուժեղ։

24

Սենյակի մեջ կույսն է քնած,
Ներս է նայում լուսընկան,
Նվագում է, յերգում հանկարծ՝
Հին վա՛լսի այն մելոդիան։

«Պատուհանից նայեմ մի ցած,
Ո՞վ է քունս խանգարում»։
Մի կմախք է այնտեղ կեցած՝
Նվագում է և յերգում։

«Խոստացել ես պարել ինձ հետ,
Բայց դըժել ես՝ ինչ ասիր.
Յեկ, հանդես կա դամբաններում,
Գնանք, պարենք միասին»։

Աղջիկն ուժեղ հափշտակվում,
Գնում է դուրս, դեպի դուռ,
Այնտեղ կմախքն է նվագում,
Հետևում է նրան լուռ։

Նվագում ու պարում է նա,
Վոսկորները ճարճատում,
Գանգը շարժում չարագուշակ,
Լուսնի պայծառ ճաճանչում։

25

Սուզված խառն յերազներում
Նրա պատկերն էյի դիտում,
Յեվ կերպարանքը սիրելի
Կենդանացավ կարծես Թագուհու։

Շրթունքների շուրջը նրա
Զգվեց ժպիտ հրաշագեղ,
Յեվ թախիծի արցունքներից
Սկսեցին աչքերն փայլել։

Իմ արցունքներն էլ հոսեցին,
Այտերից իմ թափվեցին ցած,
Ա՜խ, չեմ կարող յես հավատալ,
Վոր կորցրել եմ յես քեզ անդարձ։

26

Դժբախտ Ատլասս՝ յես, վողջ մի աշխարհ։
Ցավի վողջ մի աշխարհ պիտի կրեմ.
Կրում եմ յես ահա անտանելին,
Յեվ լուռ խորտակվում է սիրտս իմ մեջ։

Զե՞ վոր այդ եյիր ուզում, սիրտ իմ,
Դու բախտ եյիր ուզում, անսահման բախտ,
Կամ էլ անսահման լինել անբախտ
Յեվ անբախտ ես այժմ, սիրտ իմ հպարտ։

27

Տարիներ են գալիս գնում,
Սերունդներ են իջնում դամբան,
Սակայն սերը, որ իմ սրտում
Ունեմ՝ յերբեք չունի վախճան։

Տեսնեյի քեզ գեթ մի անգամ,
Ծնկի գայի առջեդ յես՝
Մահանալով առեյի քեզ՝
Ո՜ տիկին, յես սիրում եմ ձեզ։

28

Տեսա յերազում՝ լուռ լուսինն եր նայում,
Փայլում եյին հեզ աստղերը տխրամած,
Դարձա քաղաքն, ուր սիրելիս ե ապրում,
Հարյուր մղոններ հեռուներըն ընկած։

Դարձա, գնացի դեպի տունը նրա,
Համբույր թողեցի սանդուխքի քարերին,
Ուր նա դրել ե փոքրիկ վոտքը իրա,
Յեվ ուր քսվել են փեշերը շորերի։

Գիշերն յերկար եր, գիշերը ցուրտ ու թեն,
Խոնավ եյին և քարերը ու սառած,
Դեմքը դժգունած, փեղկերի դեմ ու դեմ,
Դիտում եր լուսնի լույսերով վողողված։

29

Ի՞նչ է ուզում շիթն արցունքի,
Չէ՞ որ նայվածքս է պղտորում,
Իմ աչքի մեջ նա մնաց լետ,
Նա մնաց լետ հին օրերում։

Նա ուներ շատ փայլուն քույրեր,
Որ հասել են բոլորն արդեն
Իմ տանջանքի, խնդության հետ,
Գիշերվա մեջ ու հոգմի դեմ։

Ցավ աստղերն են հասել կապույտ
Ու հասել են մշուշ ինչպես,
Որոնք խինդն ու տանջանքն այդ
Թափանցեցին սրտիցս ներս։

Ա՜խ, իմ սերը հասեց նույնիսկ,
Հասեց՝ ինչպես դատարկ մի շունչ,
Արցունք իմ հին ու մենավոր,
Հասիր նույնպես դու՝ անմռունչ։

30

Ամպի տակից դուրս է նայում
Աշնան լուսինը դժգունակ,
Դամբանատանն ահա՝ մեռած
Պաստորի լուռ տունն է մենակ։

Մայրը իր սուրբ գիրքն է կարդում,
Որդին անթարթ նայում լույսին,
Մեծ աղջիկը քնկոտ ձգվում,
Փոքրն ասում է մոր լերեսին.

«Ա՜խ, աստված իմ, օրերն ինչպես
Ձանձրալի յեն այստեղ անցնում,
Միայն յերբ մի մարդ են թաղում,
Մենք էլ նոր ենք մի բան տեսնում»։

Մայրն ասում է ընթերցման հետ.
«Սխալվում ես, չորսը մեռան,
Ինչ թաղեցին քո հայրիկին
Մեր այս դամբանատան դռան»։

Հորանջում է աղջիկը մեծ—
«Ցես չեմ ուզում մեռնել սոված,
Հարուստ կոմսի մոտ կգնամ,
Որ վրաս է սիրահարված»։

«Պանդոկում կա յերեք վորսորդ—
Վորդու ծիծաղն է բարձրանում—
Փող են կտրում և գաղտնիքն այդ
Սիրով են ինձ սովրեցնում»։

Մայրը նետում է սուրբ գիրքը
Վորդու դեմքին թույլ, դժգունակ,
«Ուզում ես դու, այ անիծյալ,
Դառնալ ստոր մի ավազակ»։

Պատուհանն է մեկը ծեծում,
Յեվ նշան է անում ձեռքով,
Մեռած հայրն է կանգնել դրսում
Քարոզիչի սև զգեստով։

31

Մի վատ, մի վատ յեղանակ,
Յերբ անձրև է, ձյուն, քամի,
Նստած լուսամուտի մոտ՝
Դիտում եմ մութը դեմի։

Փայլփլում է մի ճրագ,
Դանդաղ առաջ է անցնում,
Այդ մի մայր է լապտերով
Լուռ թափառում փողոցում։

Կարծում եմ յես գնեց նա՝
Ալյուր, և ձու, և կարագ,
Վոր մեծ աղջկա համար
Պատրաստի նա կարկանդակ։

Տանը՝ աթոռին թիկնած,
Աչքերն անթարթ՝ կրակին,
Գանգուրներն են ծածանվում
Նրա գեղեցիկ դեմքին։

32

Կարծում են թախծում եմ ես
Սիրո վշտով դառնագին,
Կարծում եմ ես էլ այդպես
Հար և նման ամենքին։

Մանկիկ, խոշոր աչքերով,
Միշտ էլ ասել եմ ես քեզ,
Որ քեզ սիրում եմ անչափ
Սիրտս սիրով քո հրկեզ։

Միայն խոսել եմ մենակ
Սենյակի մեջ ես այդպես,
Ցավ, ախ, լռել եմ ես միշտ,
Հանդիպել եմ յերբ որ քեզ։

Չար վոգիներն այդ պահին
Իմ բերանն եյին փակում,
Ցավ նրանք են պատճառը,
Որ ինձ թշվառ եմ զգում։

33

Մատները քո ճերմակ շուշան.
Համբույրեյի մի անդամ գեթ,
Ցավ սեղմեյի նրանց սրտիս,
Ու մարեյի լուռ լացի հետ։

Աչքերը քո ջինջ մանուշակ
Տեսնում եմ ես գիշեր-ցերեկ.
Տանջում է—ինչ իմաստ ունեն
Առեղծվածներն այս կապուտակ։

34

Չարտահայտվե՞ց արդյոք քեզ մոտ
Քո սիրահար սրտի մասին,
Հայացքներդ աչքերի մեջ
Փոխադարձ սեր չկարդացին։

Չիմացա՞ր դու աչքերից ներս
Թափանցել մինչ հոգին անհուն,
Բայց չէ՞ որ դու ավանակ չես,
Բարեկա՛մս, այդ բաներում։

35

Սիրում էինք իրար, բա՜յց ոչ մեկը
Ասել չէր ուզում դիմացինին.
Նայում էինք իրար թշնամաբար,
Բայց և սիրուց այդ հալվում էինք։

Վերջը բաժանվեցինք, տեսանք իրար
Միայն երբեմն երազի մեջ։
Նրանք վաղուց արդեն մեռած էին,
Եվ չըգիտեյին այդ մինչև վերջ։

36

Իմ վշտերը պատմում եյի յերբ վոր ձեզ,
Լուռ հորանջում, չեյիք լսում ինձ կարծես.
Ցերբ նրանցով իմ տաղերը հյուսեցի,
Ձեզնից բարձր գովասանքներ լսեցի։

37

Սատանային կանչեցի յես
Ցեվ զարմանքով տեսա նրան,
Վոչ կաղ եր, վոչ տգեղերես՝
Սիրելի մարդ եր աննման։
Լավ տարիքում ահա մի մարդ,
Նիրթ, վայելուչ ու խելացի,
Սիրում է իբրև դիպլոմատ՝
Պետություն ու յեկեղեցի։
Զարմանալի չէ, քիչ դժգույն.
Հեգել ու սանսկրիտ է կարդում,
Սիրած պոետին՝ Ֆուկեյին,
Բայց էլ նա չի քննադատում.
Թողել է նա այդ գործը հիմի
Իրա տատիկ Հեկատեյին։
Փաստաբանական ձգտումն իմ
Դրվատում եր նա անդադար,
Ասում եր թե՝ արժեք չունի
Բարեկամ լինելս իր համար։
«Չէ՞նք հանդիպել, հարցրեց,—արդյոք
Դեսպանատանն սպանական»։
Ցերբ դիտեցի՝ տեսա աղոտ,
Նրա դեմքին մի՜ հին ծանոթ։

38

Մարդ, մի ծաղրիր սատանային,
Կյանքի ուղին չէ՞ որ կարճ է,
Չէ՞ որ ահեղ դատաստանը
Ամբոխի սին ցնորքը չէ։

Մարդ, վճարիր պարտքերը քո.
Կյանքի ուղին դեռ յերկար է,
Յեվ դեռ պետք է պարտքեր անես,
Շատ անգամ ես ինչպես արել։

39

Արևելքի սուրբ մոգերը յերեք
Ամեն քաղաքում հարցում են անում.
«Ով բարի մարդիկ, դեպի Բեթղեհեմ,
Ասացեք, ճամբան ինչպես է տանում»

Վոչ ծեր, վոչ մանուկ չեյին իմանում,
Ու առաջ անցան մոգերը նորից.
Հետևում եյին վոսկե մի աստղի,
Վոր լույս եր տալիս նրանց խնդալից։

Աստղը Հովսեփի տան վրա կանգնեց,
Ու այնտեղ նրանք ահա ներս մտան։
Հորթն եր բառաչում, մանուկն աղմկում,
Յեվ յերգում եյին մոգերն սրբազան։

40

Մանկին, մանուկ էյինք մենք,
Ցերկու մանուկ զվարթուն,
Սողում էյինք հաճնոցը,
Մնում հարդի տակ թագուն։

Կանչում էյինք—«կուկլիկու»,
Մարդիկ չէյին ճանաչում,
Նրանք կարծում էյին թե
Այդ աքլորներն են կանչում։

Արկղները մեր բակի
Դարսում էյինք մեզ համար,
Բնակվում էյինք այնտեղ
Ու տուն դարձնում մեզ հարմար։

Հարևանի ծեր կատուն
Հաճախ գալիս էր այցի,
Նրան մեծարում էյինք,
Գովում մեկ-մեկ՝ առանձին։

Հարցնում էյինք սիրալի
Առողջությունը նրա,
Հետո նույն հարցերն թափում
Այլ կատուների վրա։

Նստում խոսում էյինք միշտ
Ծերունների պես խելոք,
Ու տրտնջում թե լավ էր
Ամեն ինչը մեր օրոք։

Թե աշխարհում էլ չկա
Վստահություն, սեր, հավատ,
Թե թանգացել է սուրճը,
Պակաս է փողն անընդհատ։

Անցել են մեր խաղերը
Ցեվ սահում են անընդհատ—
Փող, սեր, աշխարհ, ժամանակ,
Վստահություն ու հավատ։

41

Սիրտս նկուն է, կարոտով լի
Մտաբերում եմ օրերը հին,
Յերբ աշխարհը դեռ բնակելի,
Ու մարդիկ հանգիստ ապրում էին։

Այժմ ամեն ինչ կարծես խառնած,
Նեղություն, կարիք, զրկանք այնքան,
Արդեն մեռել է վերում աստված
Ներքևում մեռած է սատանան։

Ամեն ինչ փտած ու տխրաբեր,
Վողորմելի յե, սառն ու խառնակ,
Յեվ չնչին սերը թե չլիներ,
Կդառնար կյանքը՝ անբովանդակ։

42

Դուրս է գալիս մթին ամպի
Քողի միջով լուսինն ինչպես,
Մութ անցյալից նայում է դուրս
Այդպես պատկեր մի լուսերես։

Նստած բոլորն նավում էին
Հռենոսով դեպի ներքև.
Կանաչ ափերն ամառնային
Վերջալույսի լույսն էր ներկել։

Զքնաղ մի տիկնոջ վոտքի մոտ
Նստած էի լուռ ու խոհուն,
Իր սիրելի, դժգույն դեմքին
Արևի վոսկին էր խաղում։

Վիների թինդ ու մանկանց յերգ.
Ի՜նչ կյանք գվարթ ու խնդագին,
Յերկինքն յեղավ լուրթ ավելի,
Ավելի լայն յեղավ հոգին։

Ձգվում էին հեքյաթի պես
Լեռ ու դղյակ, մարգեր, անտառ—
Տեսա՝ վողջը փայլում էին
Սիրուն տիկնոջ աչքերում վառ։

43

Յերազիս մեջ իմ սիրելին
Կին եր յերկչոտ ու վշտահար,
Ծաղկած մարմինն իր յերբեմնի
Դալկացած եր, հյուծված, նիհար։

Մի յերեխա՝ գրկին նրա,
Մի ուրիշի թևից բռնած,
Հագուստի ու դեմքի վրա՝
Աղքատություն, վիշտ եր սառած։

Դողդոջ քայլում եր շուկայում.
Պատահում է այնտեղ նա ինձ,
Նկատում է, հետո նրան
Ասում եմ յես մեղմ, վշտալից։

«Արի, տունս գնանք ինձ հետ,
Դու հիվանդ ես, դժգույն, նիհար,
Յես քրտնաջան աշխատանքով
Այլուստ կբերեմ քեզ համար։

Կխնամեմ մանուկներիդ,
Վոր շրջում են քեզ հետ ահա,
Քեզ ամենքից առաջ սակայն,
Դժբախտ ու խեղճ իմ յերեխա։

Յես չեմ պատմի ամենևին,
Վոր սիրել եմ յերբեմն քեզ,
Թե մահանաս, ապա շիրմիդ
Լաց կլինեմ կարոտակեզ»։

44

„Ինչ շահ, անգին իմ բարեկամ,
Կրկնել հաճախ քո յերգը հին,
Ուզում ես միշտ լինել թուխսկան
Նստած սիրո հին ձվերին։

Ավա՜ղ, դարձյալ հին պատմություն.
Կեղևից ձագերն յելնում,
Ծվծվում են ու թռչկոտում—
Դու փակում ես նրանց գրքում»։

45

Անհամբեր մի լինեք, երբ դուք
Նորագույն իմ երգերի մեջ
Հնչյուններից իմ հին վշտի
Մի քանիսը գտնեք անշեջ։

Սպասեցեք, կմարի այն,
Արձագանքը իմ վշտերի,
Յեվ սրտից իմ կբողբոջի
Նոր գարունը իմ երգերի։

46

Ժամանակ է արդ, որ խելքի գամ՝
Հիմարությունից լինեմ ազատ,
Քեզ հետ, յես իբրև կատակերգակ,
Կատակերգություն խաղացի շատ։

Կուլիսներ եյին ձևավորված
Ռոմանտիկական բարձր ոճով,
Զգեստն ասպետի փայլում եր վառ,
Յես ապրում եյի նուրբ հույզերով։

Յեվ այժմ ահա մաքրում եմ ինձ,
Թողնում եմ ամեն անմտություն,
Յեվ ինձ թշվառ եմ զգում, քանի
Խաղում եմ նման թատերգություն։

Ասված, կատակով. անգիտությամբ
Ասացի վողջը՝ ինչ զգացի,
Մահվան հետ կրծքում իմ՝ մահացող
Սուսերամարտիկի դեր խաղացի։

47

Վիսվամիտրա թագավորը
Զունի հանգիստ ու դադար,
Նա ուզում է Վաշիստայի
Կովը խլել անարդար։

Ո՜վ թագավոր Վիսվամիտրա,
Ինչ եշ ես, վոր անդադար
Ցեվ կռվում ես և՛ տուժում ես՝
Այն էլ մի կովի համար։

48

Սիրտ իմ, սիրտ իմ, մի վշտանա
Ցեվ բախտը քո՝ հլու կրիր,
Ինչ ձմեռը քեզնից տարավ,
Նոր գարունը յետ կբերի։

Վորքան շատ է մնացել քեզ,
Աշխարհն ինչքան սիրուն է դեռ,
Ցեվ, ինչ վոր քեզ դուր գա, սիրտ իմ,
Դու կարող ես վողջը սիրել…

49

Դու մի ծաղկի յես նման,
Զքնաղ, մաքուր այնպես,
Սիրտս թախիծն է սողում,
Յերբ յես նայում եմ քեզ։

Թվում է թե պիտի որհնեմ
Ձեռքս գլխիդ դրած—
Այդպես մաքուր, գեղեցիկ
Պահպանե քեզ աստված։

50

Մահ կլիներ այդ քեզ, մանկիկ,
Յեվ ինձ ջանք եմ պատճառում յես,
Վոր սիրելի սիրտդ սիրով
Յերբեք ինձ համար չըվառես։

Բայց և այնպես տխրում եմ յես,
Վոր հաջողվում է այդ դյուրին.
Մտածում եմ յերբեմն՝ եթե
Յերանի թե, սիրես դու ինձ։

51

Յերբ պառկում եմ յես անկողնում,
Շուրջս գիշեր ու բարձեր,
Ծածանվում է իմ դեմ քաղցր
Ու սիրելի մի պատկեր։

Յերբ վոր նինջը քնքուշ ու լուռ
Աչքս փակում է հազիվ,
Արդ՝ պատկերը մեղմ թափանցում,
Գալիս է իմ յերազին։

Յերազի հետ առավոտյան
Անհետ չի կորչում յերբեք,
Պահում եմ յես իմ սրտի մեջ
Նրան ամբողջ մի ցերեկ։

52

Աղջիկ, շուրթերդ ալ ու վառ.
Աչքերդ ջինջ ու հստակ,
Փոքրիկ աղջիկ, քեզ անդադար
Հիշում եմ յես շարունակ։

Ձմռան գիշերն այսօր յերկար
Քեզ մոտ լինել կուզեյի,
Նստել, խոսել առանց դադար,
Քո սենյակում մտերիմ։

Շրթունքներիս սեղմել ամուր
Ձեռքդ փոքրիկ ու ճերմակ,
Արցունքներով թրջել փափուկ,
Փոքրիկ ձեռքդ սպիտակ։

53

Դրսում թող վոր ձյունը տեղա,
Թող փոթորկի, թող կարկուտ գա.
Պատուհանս լվա, ծեծի,
Յերբեք, յերբեք յես չեմ թախծի.
Զի կրծքիս տակ վորպես գարուն
Սիրելուս պատկերն եմ կրում։

54

Աղոթում են Մադոննային,
Կամ Պողոսին, կամ Պետրոսին,
Աղոթել եմ ուզում յես լոկ
Քեզ, միայն քեզ, իմ արևին։

Տուր ինձ համբույր, տուր ինձ բերկրանք,
Յեղիր գթոտ, յեղիր անչար,
Աղջիկների մեջ՝ վառ արև,
Արևի տակ՝ աղջիկ պայծառ։

55

Չմատնե՞ց քեզ դեմքս դժգույն
Իմ սիրո վիշտը անափ,
Ուզում ես վոր բերանս անի
Մուրացիկի խոստովանք։

Ո՛, հպարտ է բերանը այս,
Գիտե համբույրը, լոկ կատակ,
Հեգնի գուցե, իսկ մինչդեռ ես
Մահանում եմ վշտի տակ։

56

Սիրահար ես, բարեկա՛մ,
Նոր ցավեր են տանջում քեզ.
Գլուխդ մութ է վորքան,
Սիրտդ այնքան լույս է, տես.

Սիրահար ես, բարեկամ,
Խոստովանել չես ուզում,
Բաճկոնիդ տակ տեսնում եմ,
Սրտիդ բոցը հրկիզում։

Ուզում եյի յես քեզ մոտ
Մնալ, հանգչել քո կողքին,
Հեռանայիր պիտի դու,
Գործ ունեյիր անհագին։

Ասում եյի՝ հոգիս վողջ
Անձնատուր է հիմա քեզ.
Ծիծաղում եյիր առողջ,
Հեգնում ծնկի գալու պես։

Շատացրիր սիրո վառ՝
Իմ թախիծը ավելի,
Համբույրն անգամ գլացար
Վերջում, մնաս բարևին։

Չեմ սպանի ինքս ինձ,
Վատանա գործս վորքան,
Այդ բոլորը, սիրելիս,
Պատահել է մի անգամ։

Ծափյուղյա յեն ու կախարդուն
Աչքերդ քաղցր ու սիրելի,
Յերանելի բախտ, ո՛, այն մարդուն,
Ում վողջույն են նրանք տալիս։

Սիրտդ նման ադամանդի,
Վոր ազնիվ լույս է արձակում,
Յերանելի բախտ, ո՛, այն մարդուն,
Վորի համար սիրտդ է վառվում։

Շուրթերը քո սուտակափայլ,
Չկա, սիրունը ավելի,
Յերանելի բախտ, ո՛, մարդուն այն,
Ում համբույր են նրանք տալիս։

Ո՛, գտնեյի, ճանաչեյի
Յես այդ մարդուն իր բախտի մեջ,
Մի անտառում, կանաչով լի՝
Բախտը նրա կունենար վերջ։

59

Սիրտըդ գըրավելու համար
Սիրո խոսքեր ասի փուչ.
Յեվ իմ թևերի մեջ շվար,
Կատակը իմ դառավ լուրջ։

Այժմ յեթե լքես դու ինձ
Իրավացի կատակով,
Չարք կըլինեն ինձ մերձակից,
Կսպանեմ ինձ լուրջ մտքով։

60

Կյանքն ու աշխարհը շատ ծակեր ունին.
Ուզում եմ դիմել գերման գիտունին,
Նա գիտե կյանքը կապակցել, գիտեմ,
Յեվ ստեղծել մի խելացի սիստեմ՝
Կառնի իր շորն ու գիշերագտակ
Յեվ կկարկատի տիզերքը ծակ։

61

Գլուխ եմ կոտրել յերկար, յերկար,
Մտածել, կշռել գիշեր-ցերեկ,
Սակայն սիրելի աչքերդ վառ
Յեզրակացության տվին ինձ յելք։

Այժմ այնտեղ եմ, ուր պերճորեն
Աչերդ են փայլում քաղցր ու խոհուն,
Վոր քեզ սիրեյի պլատոնորեն՝
Այդ բնավ, բնավ չեյի խորհում։

62

Դուք ունեք մի հյուր այս յերեկո
Յեվ լույսերով է տունը լեցուն,
Լուսամուտի մոտ պայծառ, վերում,
Մի ստվեր է լուռ այնտեղ շարժվում։

Դու ինձ չես նայում, մթության մեջ
Ներքևում մենակ կանգնած եմ յես,
Բայց ավելի քիչ կարող ես դու
Նայել իմ խավար սրտից ներս։

Իմ խավար սիրտը սիրում է քեզ,
Նա սիրում է քեզ և խոր„ակվում,
Նա տառապում է, արյունոտում,
Բայց դու այդ բնավ չես նկատում։

61

Գլուխս եմ կոտրել յերկար, յերկար,
Մտածել, կշռել գիշեր-ցերեկ,
Սակայն սիրելի աչքերդ վառ
Յեզրակացության տվին ինձ յելք։

Այժմ այնտեղ եմ, ուր պերճորեն
Աչերդ են փայլում քաղցր ու խոհուն,
Վոր քեզ սիրեյի պիտի նորեն՝
Այդ բնավ, բնավ չեյի խորհում։

62

Դուք ունեք մի հյուր այս յերեկո
Ցեվ լույսերով է տունը լեցուն,
Լուսամուտի մոտ պայծառ, վերում,
Մի ստվեր է լուռ այնտեղ շարժվում։

Դու ինձ չես նայում, մթության մեջ
Ներքևում մենակ կանգնած եմ յես,
Բայց ավելի քիչ կարող ես դու
Նայել իմ խավար սրտից ներս։

Իմ խավար սիրտը սիրում է քեզ,
Նա սիրում է քեզ և խոր„ակվում,
Նա տառապում է, արյունոտում,
Բայց դու այդ բնավ չես նկատում։

63

Կուզենայի, վոր լցվեյին
Վշտերս վողջ մեն մի բառում,
Կհանձնեյի այդ հովերին,
Կտանեյին նրանք հեռու։

Կբերեն այն քեզ, սիրուհի,
Վշտով լեցուն իմ խոսքը լուռ,
Կլսես այն ամեն պահի,
Կլսես այն դու ամենուր։

Յեվ գիշերվա նիրհից պահին,
Աչքերդ յերբ փակես հազիվ,
Կհալածի քեզ խոսքը իմ,
Մինչև խորքը քո յերազի։

64

Ունես մարգարիտ, ադամանդներ,
Ամենը՝ ինչ վոր մարդն է ըղձում,
Ունես ամենքից սիրուն աչքեր—
Իմ սիրելի, ել ինչ ես ուզում։

Աչքերի մասին քո գեղեցիկ
Հավիտյան ասող յերգեր բազում
Քեզ համար ինքս ստեղծեցի—
Իմ սիրելի, ել ինչ ես ուզում։

Յեվ աչիկներով քո գեղանի
Շատ ես տանջել ինձ, իմ սիրասուն,
Յեվ կործանել ես դու ինձ հիմի,
Իմ սիրելի, ել ինչ ես ուզում։

65

Ով որ սիրում է առաջին անգամ
Թեկուզ անհաջող, նա աստված է մի,
Բայց ով որ յերկրորդ անգամ է սիրում
Անհաջող սիրով, մի տխմար է նա։

Յես այդպիսի մի տխմար, սիրում եմ
Դարձյալ առանց մի փոխադարձ սիրո,
Ծիծաղում են աստղ, արև ու լուսին,
Յեվ յես նրանց հետ— ու մահանում եմ։

66

Ինձ խորհուրդներ, խրատ տվին,
Պատիվներ տվին լի ու լի,
Կամեցան ինձ պաշտպան լինել,
Ասացին՝ համբերեմ ելի։

Բայց յես՝ օգնությամբ այդ բոլոր
Կսատկեյի քաղցից մի օր,
Յեթե կտրիճ մի մարդ չգար,
Չխնամեր ինձ քաջարար։

Կտրիճ, յերբեք չեմ մոռանա,
Սնունդ է գտնում ինձ համար։
Ա՜խ, համբուրել չեմ կմանա,
Զի յես եմ այդ մարդը ճարտար։

67

Պատանուն այս շատ սիրելի,
Հարգես վորքան, քի՞չ է ելի,
Պատմում է ինձ հաճախ վոսարե,
Հըռենոսի ընտիր գինի։

Հագուստը կոկ ու սադափան,
Իսկ փողկապը՝ ավելի քան,
Հարցնում է ինձ—լա՞վ եմ արդյոք,
Այսպես աժեն պատավոտյան։

Գովում է իմ համբավը անմար,
Ազնվություն, խելք ու հանճար,
Գործունյա է, յեռանդագին
Ինձ միշտ ծառայելու համար։

Հավաքույթում իրիկնային,
Ներշնչման վառ հուրը դեմքին,
Կարդում է նա կանանց առջև
Իմ յերգերը աստվածային։

Ո՜, վորքան է ուրախալի
Գտնել այսպես մի պատանի,
Յերբ կորչում են մեր որերում
Լավագույնները ավելի։

68

Յերազիս մեջ աստվածն եմ յես,
Նստել եմ վերը յերկինքում,
Հրեշտակները շուրջս նստել,
Ցավ իմ յերգերն են գովերգում։

Մի քանի գուլդենով ուտում
Կարկանդակներ, քաղցրավենի,
Հետն էլ խմում եմ կարդինալ,
Վոչ մի պարտք էլ չունեմ հիմի։

Բայց ձանձրույթը տանջում է ինձ,
Յերկրում լինել կուզենայի,
Չլինեյի յեթե աստված,
Յես սատանա կդառնայի։

«Բարձրահասակ Գաբրել հրեշտա՛կ,
Ճամբա ընկիր, գնա փութկոտ,
Պիտի քաղցր իմ բարեկամ,
Ցեվգենիին դու բերես ինձ մոտ։

Նրան մի փնտռիր ժողովում,
Փնտռիր գինու բաժակի մոտ,
Վոչ էլ Հեդվիկի տաճարում,
Փնտրիր որիորդ Մայերի մոտ»։

Տարածում է թևերն իր զույգ
Հրեշտակն այն, իջնում է ցած,
Բերում է վեր բարեկամիս,
Հիմար տղին, թևից բռնած։

«Բարի աստվածն եմ ես, տղա.
Վարում եմ վողջ յերկիրը ես,
Վոր ես մեծ բան պիտի դառնաս
Չե՞ վոր միշտ էլ ասել եմ քեզ։

Իմ հըրաշքներն ամենորյա
Հիացընեն քեզ պետք է վոր,
Ուզում եմ հաճույքիդ համար
Դարձնել Բեռլինը բախտավոր։

Ցուրաքանչյուր քար փողոցի
Այժմ պետք է ճեղքվի, ճաքի,
Ցեվ նրանցից ամեն մեկը
Մի թարմ վոստրե պարունակի։

Կիտրոնի հյութ առատորեն,
Վորպես անձրև տեղա, հոսի,
Ցեվ փողոցի առուներում
Ընտիր գինի Հըռենոսի։

Բեռլինցիներն ուրախ են ինչ,
Արդեն գընում են լափելու,
Դատաստանական ատյանի
Պարոններն են առուներում։

Պոետները ուրախ են ինչ
Փարթամ խնջույքից այսպիսի,
Լեյտենանտներ, դրոշակիրներ—
Քարերն են լիզում փողոցի։

Լեյտենանտներ, դրոշակիրներ—
Նրանք խելոք են ավելի,
Մտածում են՝ միշտ չի լինի
Նման հրաշք, ինչպես հիմի»։

69

Ձեզ թողի հուլիսին այն փառավոր,
Ցեվ հունվարին գտա կրկին,
Արդ, դուք նստած եյիք շոգի մեջ այն,
Ու զով եք այժմ, նույնիսկ ցրտին։

Կանջատվեմ ես շուտով, կդառնամ յետ.
Կլինեք վոչ տաք և վոչ էլ սառ,
Ու ձեր դամբաններով կտանեմ ես
Իմ սիրտն էլ և խեղճ և ցրտահար։

70

Բաժանված եմ շուրթերից քո, հալածված
Քո գեղեցիկ բազուկներից ինձ գրկող,
Մի որ ես մոտդ մնալ կուզեյի,
Փեսացուդ, յերբ յեկավ իրա նժույգով։

Մանկիկ, այսպես կյանքը թախիծ է հավետ,
Ցեվ հավիտյան հրաժեշտ է, անջատում,
Սիրտդ պահել չէ՞ր կարող սիրտն իմ իր մեջ,
Աչքդ պահել չէ՞ր կարող ինձ հայացքում։

71

Գնում եյինք մութ կառքի մեջ
Գիշերն ամբողջ մենք միայնակ,
Հանգչում եյինք իրար կրծքի,
Ու ծիծաղում, անում կատակ։

Առավոտը յերբ լուսացավ
Ո՜, ինչ զարմանք, հենց մեր կառքում,
Մանկիկ, նստած եր՜ Ամուրը՝
Ճամբորդը կույր, մեր արանքում։

72

Աստված գիտե աղջիկն անմիտ
Մընացել է վորտե՞ղ, ուր,
Անխծելով՝ անձրևի տակ
Թափառում եմ ամենուր։

Մի պանդոկից յես հեռու
Մի այլ պանդոկ եմ վազում,
Յեվ ամե՜ն մի ծառայողի
Հարցնում, դիմում եմ իզուր։

Յեվ ահա նա լուսամուտից
Նշան է անում, խնդում,
Ի՞նչ գիտնայի, աղջի՛կ, վոր դու
Ապրում ես ճոխ պալատում։

73

Մթին տեսիլների նման
Կանգնած է շարքը տըների,
Վերարկույիս մեջ փաթաթված
Լուռ առաջ եմ քայլում հիմի։

Աշտարակը յեկեղեցու
Ժամի տասներկուսն է հնչում,
Իր բույրերով, համբույրներով
Իմ սիրելին ինձ է կանչում։

Ուղեկցում է լուսինը ինձ,
Սփռում է իմ ճամբին լույսեր,
Սիրածիս տան մոտ եմ ահա,
Ուրախ կանչում եմ դեպի վեր.

«Գոհ եմ քեզնից, հին բարեկամ,
Վոր թափում ես լույսերդ լի,
Այժմ պիտի թողնեմ յես քեզ,
Լուսավոր է աշխարհն հիմի։

Յերբ գտնես դու մի սիրահար,
Վոր վողբում է վիշտն իր մենակ,
Սփոփիր դո՛ւ, ինչպես վոր ինձ
Սփոփել ես մի ժամանակ»։

74

Յերբ վոր իմ կինը դառնաս դու,
Կլինես շատ նախանձելի,
Կապրես կյանքում ժամանց, խնդում,
Ուրախությամբ, հաճույքով լի։

Թե հայհոյես, թե աղմկես
Համբերությամբ կտանեմ յես,
Կբաժանվեմ սակայն քեզնից,
Իմ տաղերը թե չգովես։

75

Ձյունի նման ուսիդ ճերմակ
Իմ գլուխը հենեցի յես
Յեվ կարող եմ լսել թագուն
Քո սրտի մեջ ինչ ձգտում ես։

Հուսարները փող են հնչում
Ու ձիերով մտնում քաղաք,
Առավոտյան կթողնի ինձ
Իմ սիրելին, սրտի կրակ։

Թե վոր վաղը թողնես պիտի,
Այսոր սակայն դեռ իմն ես դու,
Ուզում եմ յես յերջանկանալ
Քո գեղեցիկ, չքնաղ գրկում։

76

Հուսարները բլի՝ փող են հնչում,
Քաղաքից գնում ձիեր նստած,
Գալիս եմ ահա, իմ սիրելի,
Քեզ փունջ եմ բերում վարդից հյուսած։

Յեվ ինչ վայրենի խառնակություն,
Քաղաքացիներ, զորականներ,
Կային շատերը, վոր նույնիսկ քո
Սրտիդ մեջ եյին օթևանել։

77

Տարիներում յես իմ ջահել
Բավական դառն վիշտ եմ կրել
Սիրո բոցից անհուն, անտակ.
Սակայն փայտը, ախ, շատ է թանգ,
Յեվ կրակը մարելու յե,
Ma foi, այդ վորքան լավ է։

Սիրո՛ւն, խորհիր դու այս մասին,
Թող քո լացը դատարկ ու սին,
Յեվ Թախիծը անմիտ սիրո,
Յեթե քո մեջ կյանք կա իրոք,
Արդ, մոռացիր քո սերը հին
Ma foi, իմ բազուկներին։

78

Թշնամի՞ ես դարձել իրոք,
Փոխվե՞լ ես դու արդյոք իսպառ,
Վողջ աշխարհին գանգատ կանեմ,
Վոր ինձ հետ դու վարվել ես չար։

Ո՛վ ապերախտ շրթունքներ դուք,
Վոնց կարող եք վատաբանել
Մի մարդու, վոր այն որերում
Մեծ սիրով է Ձեզ համբուրել։

79

Նույն աչքերն են դարձյալ, վոր ինձ
Վողջունում էյին սիրալի,
Նույն շուրթերը՝ վորոնք կյանքիս
Ա՛խ, քաղցրություն էյին տալիս։

Յեվ յերբեմնի ձայնն է նույնպես,
Վոր լսել եմ սիրով կյանքում,
Միայն, միայն նույնը չեմ յես,
Յես փոխված եմ յետ դարձել տուն։

Ճերմակ, սիրուն թևերն իրա
Գրկում են ինձ պինդ, սիրալի,
Յես ընկած եմ կրծքին նրա
Թմրած մտքով, տաղտուկով լի։

80

Քիչ անգամ եք հասկացել ինձ,
Քիչ անգամ եմ հասկացել ձեզ.
Բայց յերբ իրար ցեխում գտանք՝
Արդ, հասկացանք անմիջապես։

81

Յերբ յես յերգել սկսեցի,
Ներքինիներն արին գանգատ.
Տրտնջացին ու ասացին,
Վոր կոպիտ եմ յերգում յես շատ։

Յեվ քնքշորեն բաձրացրին
Նրանք փոքրիկ ձայներն իրենց,
Գեղգեղանքները հնչեցին
Մաքուր ու նուրբ բյուրեղ ինչպես։

Յերգեցին սեր, սիրո գեղում,
Սիրո կարոտ. բոլոր կանայք
Լողում եյին հորդ արցունքում
Այդ արվեստի վայելքի տակ։

82

Սալամանքի բարձունքներում
Օդը մեղմ է, հոգեպարար,
Իմ սիրելի Դոննայի հետ
Շրջում եմ իրիկունն ամառ։

Գեղեցկուհու նուրբ իրանին
Փաթաթվել եմ իմ բազուկով,
Նրա կրծքի ծփանքն հպարտ
Զգում յերջանիկ իմ մատով։

Թմբինների միջով սակայն
Տարածվում է մի շշնջյուն,
Մութ ջաղացի առուն ցածում
Չար յերազներ է մրմնջում։

«Ա՜խ, սինյորա — ինձ կաքսորեն,
Գուշակում է սիրտս հիմի,
Սալամանքի բարձունքներում
Մենք այլևս չենք զբոսնի»։

83

Կից ապրում է դոն Հենրիկոն,
Վոր գեղեցիկ են անվանում․
Մեր սենյակները հարևան
Բարակ մի պատ է բաժանում։

Տիկինները Սալամանքի
Վառվում են, յերբ փողոցներում
Խթաններով, բեխերն ոլորած
Շների հետ անց է կենում։

Բայց իրիկվա լուռ ժամերին
Նստում է նա տանը մենակ,
Հոգում քաղցր վառ յերազներ,
Ու գիթառը ձեռների տակ։

Խըփում է թրթռուն լարերին,
Յերգել է սկսում կարծես,
Ա՜խ, մռռոցն ու տնկտնկոցն՝ ինձ
Տանջում է սիրտ խառնոցի պես։

84

Հազիվ տեսանք իրար և քո աչքերում վառ,
Ու ձայնից քո՝ տեսա ինձ սիրում ես էլի,
Թե չլիներ կանգնած այնտեղ մայրիկը չար,
Կարծում եմ յես իսկույն մենք կհամբուրվեյինք։

Քաղաքն առավոտյան կթողնեմ յես կրկին,
Յեվ կշտապեմ նախկին իմ ընթացքով ահա,
Վերից կնայի ինձ խարտյաշ իմ սիրելին,
Սիրո վողջույն կուղղեմ պատուհանին նրա։

85

Լեռների վրա արևն է յելնում,
Թնդում է հեռվում հոտը գառների,
Սիրելի՛, իմ գա՛ռ, իմ արև՛, խնդում,
Քեզ մեկ էլ սիրով տեսնել կուզեյի։

Զննող հայացքով նայում եմ յես վեր—
Բարի մնաս, սե՛ր, գնում եմ քեզնից.
Վոչ մի վարագույր չի շարժվում այնտեղ,
Նա քնած է դեռ—յերազում է ինձ։

86

Շուկայի մեջտեղ, Հալլեյում
Յերկու մեծ առյուծ է կանգնել.
Ա՜յ առյուծի հանդգնություն,
Բեղ ինչպես են սանձահարել։

Շուկայի մեջտեղ Հալլեյում,
Ահա կանգնած է մի հսկա.
Ունի մի սուր, բայց չի շարժում,
Քարացել է սարսափից նա։

Շուկայի մեջտեղ, Հալլեյում,
Կանգնած է մեծ յեկեղեցի,
Ուր աղոթքի տեղեր ունեն՝
Ուսանողներն ու տեղացիք։

87

Իրիկունն է ամռան՝ աղոտ
Ծածկում կանաչ անտառ ու մարգ,
Վոսկի լուսինն է շողշողում
Լուրթ յերկինքում, անուշահոտ։

Ծղրիդն յերգում է առվի մոտ,
Ջրում շարժվում է ինչ վոր բան,
Յեվ անցորդը լռության մեջ
Լսում է շունչ ու ջրի ձայն։

Այնտեղ, առվի մեջ միայնակ
Լողանում է էլֆը սիրուն,
Թեն ու ծոծրակը սպիտակ
Անու՜շ փայլում են լուսնի տակ։

86

Շուկայի մեջտեղ, Հալլեյում
Յերկու մեծ առյուծ է կանգնել.
Ա՜, առյուծի հանդգնություն,
Քեզ ինչպես են սանձահարել։

Շուկայի մեջտեղ Հալլեյում,
Ահա կանգնած է մի հսկա.
Ունի մի սուր, բայց չի շարժում,
Քարացել է սարսափից նա։

Շուկայի մեջտեղ, Հալլեյում,
Կանգնած է մեծ յեկեղեցի,
Ուր աղոթքի տեղեր ունեն՝
Ուսանողներն ու տեղացիք։

87

Իրիկունն է ամռան՝ աղոտ
Ծածկում կանաչ անտառ ու մարգ,
Ոսկի լուսինն է շողշողում
Լուրթ յերկնքում, անուշահոտ։

Ծղրիդն յերգում է առվի մոտ,
Ջրում շարժվում է ինչ վոր բան,
Յեվ անցորդը լռության մեջ
Լսում է շունչ ու ջրի ձայն։

Այնտեղ, առվի մեջ միայնակ
Լողանում է էլֆը սիրուն,
Թևն ու ծոծրակը սպիտակ
Անուշ՜ փայլում են լուսնի տակ։

88

Գիշեր՝ ոտար ճամբաններում,
Հիվանդ սիրտ, անդամներ հոգնած,
Ա՜խ, օրհնության պես է թափվում
Քաղցր լուսին, քո լույսը ցած.

Քո շողերով, քաղցր լուսին,
Գիշերային ահն ես վանում,
Եվ հալվում են տանջանքներն իմ
Եվ աչքերս են ցողակալում.

89

Մահը՝ այդ ցուրտ գիշեր է մի,
Կյանքը՝ խեղդող ու տոթ ցերեկ,
Մութն ընկնում է, քունս է գալի․
Դարձըրեց որն ինձ հոգնաբեկ.

Իմ սընարին բսնում է ծառ,
Սոխակն այնտեղ յերգ է ասում.
Յերգում է նա իր սերը վառ՝
Նույնիսկ լսում եմ յերազում.

90

"Ասա՛, ո՞ւր է քո սիրելին,
Վորին յերգում եյիր այնպես,
Յերբ բոցերը կախարդական
Մտնում եյին սրտիցդ ներս»։

Ա՜խ, հանգել են բոցերը այն,
Յեվ պղտոր է սիրտս, սառած,
Ու գրքույկն այս սափոր է մի՝
Սիրուս աճյունն այնտեղ դրած։

ԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՄԹՆՇԱՂ

Մայիսն յեկավ լույսերով իր վոսկեղեն՝
Իր բույրերով ու հովերով մետաքսե,
Յեվ ծաղկունքով ճերմակ ժպտում է սիրով,
Վողջունում է մանուշակի աչքերով,
Յեվ փռում է կանաչ գորգը ծաղկալի՝
Հյուսված արփու ճաճանչներով ու ցողով,
Մոտ է կանչում զավակներին մարդկային։
Բութ ժողովուրդն լսում է կոչն առաջին,
Տղամարդիկ հագած նանկինյան տաբատ,
Յեվ բաճկոններ՝ կոճակներով պսպղուն,
Կանայք անմեղ ու սպիտակ զգեստներ,
Ջահելները՝ իրենց բեխերն վոլորած,
Աղջիկները ծածանելով կուրծքն իրենց,
Յեվ քաղաքի պոետները՝ զրպանում
Թուղթ ու մատիտ, լոռնետ առած,— հրճվանքով
Խայտաբղետ բազմությունը դուրս յելնում,
Տարածվում է դալարագեղ մարգերում.
Յեվ հրճվում է՝ ծառերն աճում են ինչպես,
Ու խաղում է ծաղիկների հետ գույն-գույն,
Ականջում է թռչունների խմբերգին.
Ուրախության աղմուկն հասնում է յերկինք։

Յեվ իմ դուռը յերեք անգամ բախեց նա—
«Յես մայիսն եմ, դժգույն, յերազող տղա,
Յեկ, ուզում եմ, վոր համբուրեմ քեզ հիմա»։
Յես իմ դուռը պահեցի փակ ու ասի՝

Իզուր ես ինձ հրապուրում, դու չար հյուր,
Յես խորանկես գիտել եմ քեզ, աշխարհի
Կառուցվածքն եմ թափանցել յես խոր ու խոր,
Հեռացել է ինձնից ամեն խնդություն,
Յեվ հավիտյան տանջանքով է սիրտս լի.
Յես դիտում եմ տների ու սրտերի
Բարե կարծր կեղևներից ու տեսնում
Յերկուսում ել թշվառություն, կեղծիք, սուտ,
Ու դեմքերին շատ չար մտքեր եմ կարդում.
Յեվ ամոթխած կույսի շիկնած այտերին
Գաղտնի կիրքն է ցանկությամբ լի թրթռում,
Վոգևորված հպարտ պատանու գլխին
Խեղկատակի ծիծաղելի մի գլխարկ,
Ծաղրադեմքեր և ստվերներ հիվանդոտ
Տեսնում եմ այս յերկրի վրա—չգիտեմ
Գժանո՞ց թե հիվանդանոց է արդյոք.
Թափանցում եմ յես հիմքերը հին յերկրի,
Վոր յեղել է իբր թե նա բյուրեղյա—
Նույն սարսափն է, վոր մայիսը կանաչով
Աշխատում է ծածկել իզուր. Յեվ ահա
Մեռելները, դագաղների մեջ նեղլիկ,
Ձեռներն խաչած ու աչքերը կիսաբաց,
Դեմքերն ճերմակ ու սպիտակ խալաթում,
Յեվ շուրթերի միջով վորդերն են սողում.
Տեսնում եմ յես՝ իր հոր շիրիմի վրա՝
Սիրուհու հետ վորդին նստած ժամանցի,
Ծաղր են յերգում սոխակները չորս կողմից,
Ժպտում են հեզ ծաղիկները խորամանկ,
Ու շարժվում է մեռած հայրը դամբանում,
Մեր մայր յերկիրն է ցավագնած ցնցըվում.
Ո՜, խեղճ յերկիր, ծանոթ եմ քո ցավերին,
Յես տեսնում եմ կրծքիդ մեջ բոցն է յեռում,
Արյունում են յերակներդ բյուրաբյուր,
Յեվ տեսնում եմ քո բացված վերքը ինչպես

Դուրս է ժայթքում բոց, ծուխ, արյուն ուժգնորեն,
Յեվ քո հպարտ զավակներն եմ տեսնում յես,
Հին սերնդին, վոր մութ վիհերից յելնում
Յեվ բորբ ջահերն իրենց ձեռքին ճոճելով
Իրենց յերկաթ աստիճաններն են դնում,
Նետվում դեպի ամրությունները յերկնքի—
Նրանց հետքով սև թզուկներ են յելնում,
Վոսկյա աստղերն են շառաչով փշրվում.
Պատռում են լիրբ ձեռներով վոսկեղեն
Վարագույրը աստվածային խորանի,
Ու յերկյուղած հրեշտակները խմբերով
Յերեսն ի վար թավալվում են վողբալով.
Յեվ իր գահին նստած աստվածը դժգույն
Թագն է պոկում գլխից, մազերը փետում,
Յեվ ամբոխը մոտ է խուժում ավելի.
Հսկաները իրենց ջահերն են նետում
Տարածության մեջ ընդարձակ՝ յերկնքի.
Թզուկները մտրակներով բոցեղեն
Հրեշտակների բարակ մեջքերն են ծեծում,
Վորոնք ծվում, գալարվում են տանջանքից,
Յեվ մազերից բռնած նրանց դուրս գցում.
Իմ սեփական հրեշտակն էլ է այնտեղ,
Շիկագանգուր, դիմագծերով թովիչ,
Բերանի շուրջ՝ հավերժական սերն իրա,
Յերջանկությամբ լի աչքերով իր կապույտ.
Յեվ սոսկալի մի սև ճիվաղ հատակից
Հափշտակում է հրեշտակը իմ գունատ,
Թագուն զննում ազնիվ անդամներն ահա,
Յեվ քնքշությամբ գիրկն է առնում նա նրան—
Տիեզերքով անցնում է մի մեծ վորոտ,
Խորտակվում են սյուներ, յերկինք ու յերկիր.
Յեվ իշխում է գիշերը հին վերստին.

ՌԱՏԿԼԻՖ

Ինձ մի յերկիր բերեց աստվածն յերազի—
«Բարով յեկար»—ուռենիները տխուր
Նշան տվին յերկար կանաչ թևերով,
Ծաղիկները խելոք քրոջ աչքերով լուռ դիտեցին,
Թռչունների յերգը հնչեց մտերիմ,
Յեվ շների հաչոցն անգամ ինձ ծանոթ,
Ձայներ, դեմքեր իրենց վողջույնը տվին
Բարեկամի վորպես, և ուր ամեն բան
Տարորինակ ոտար թվաց ինձ այնքան։
Մի, գեղջկորեն սքնած, տան դեմ կանգնեցի,
Իմ կրծքի մեջ՝ հուզում, գլուխս հանգիստ,
Թափ տվեցի հանդստությամբ գորշ փոշին
Ճամփորդական հագուստներիս վրայից.
Յեվ սուր հնչեց զանգը ու դուռը բացվեց։

Տղամարդիկ կային, կանայք, ծանոթներ,
Ու բոլորի վրա իջել եր թախիծ
Յեվ վեհերոտ անձկություն մի Շփոթված՝
Նայեցին ինձ ցավակցությամբ համարյա,
Այնպես, վոր իմ հոգին ուժգին սարսռաց,
Վոնց մարդ ոտար նախազգացում ունենա.
Տեր·Մարգարտին ճանաչեցի յես իսկույն,
Յեվ գննեցի նրան, բայց նա չխոսեց.
«Ո՞ւր ե Մարիան»—հարցրի, դարձյալ չխոսեց.
Մեղմիկ բռնեց նա իմ ձեռքից, ինձ տարավ
Սենյակների միջով յերկար, լուսավոր

Ու վերջապես տարավ խավար մի սենյակ
Յեվ շուռ տալով դեմքը նա ցույց տվեց ինձ
Մի կերպարանք, վոր նստած եր բազմոցին.
«Դուք Մարիա՞ն եք»—հարցրի. և ինձ ներքնապես
Զարմանք պատեց, վոր հաստատ եմ խոսում յես։
Յեվ մի քարե ու անկենդան ձայն հնչեց.
«Այո, այդպես են անվանում ինձ մարդիկ»։
Հատու մի ցավ սառեցրեց ինձ այնտեղ,
Վորովհետև այդ ձայնը խոր, ցրտաշունչ,
Յերբեմնի թով, քաղցր ձայնն եր Մարիայի,
Յեվ այդ կինը գունատ, լիլա հագուստով,
Անհոգ հագած, կուրծքը նվազ, յերերուն,
Յեվ աչքերը ապակու պես կարծրացած,
Ճերմակ դեմքի մկանները՝ թույլ կաշի—
Ա՜խ, այդ կինը գեղեցիկ ու սիրելի,
Ծաղկած, քնքուշ Մարիան եր յերբեմնի։
«Վաղուց ե, վոր ճամփորդության մեջ եք դուք»
Ասաց բարձր մտերմությամբ սառ, տհաճ—
«Այնպես հյուծված չեք, սիրելի բարեկամ,
Ձեր պիրկ ազդրերն ու սրունքները կարծես
Ցույց են տալիս, վոր դուք առողջ եք հիմա»։
Ու մի դեղին ժպիտ դողաց բերանին։
Յեվ շփոթված ասացի յես Մարիային.
«Ինձ ասացին, ամուսնացել եք արդեն».
«Ավա՜ղ, այո—ասաց սառը ժպիտով—
Մի ձեռնափայտ ունեմ պատած կաշիով,
Վոր ամուսին ե հորջորջվում, բայց փայտը՝
Փայտ ե»—ասաց անհաճելի ծիծաղով,
Այնպես, վոր սառն յերկյուղ անցավ իմ հոգով.
Յեվ կասկածը ինձ համակեց—արդյոք այս
Մարիայի սուրբ շուրթերն են ծաղկավառ.
Բայց նա յելավ ու աթոռից շտապով
Քաշմիրն առավ ու փաթաթեց իր վզով,
Թևիցս կախ՝ տարավ ինձ նա բաց դռնով,
Տարավ դաշտի մացառներով, թուփերով։

Արևի բոլորագունդն էր ճոճվում արդեն ցած,
Ու բոցավառ ծիրանիով իր փայլուն
Լուսավորում՝ ծառեր, ծաղկունք ու գետակ,
Որ հոսում էր այնտեղ, հեռվում վեհությամբ,
«Տեսնո՞ւմ եք մեծ վոսկյա աչքը լուրթ ջրում
Որ լողում է»—ասաց Մարիան հապշտապ.
«Սո՛ւս, խեղճ եակ»—ասացի յես ու տեսա
Մթնշաղում հեքյաթական մի շարժում.
Տեսիլներ էյին բարձրանում դաշտերից,
Գրկախառնվում ճերմակ, փափուկ թևերով,
Մանուշակներն դիտում էյին տենչավառ,
Կախվում էյին բաժակները շուշանի,
Վարդերն այրվում էյին կրքի բոցերով,
Մեխակների տենչեր՝ շնչով բռնկել,
Ծաղիկները հարբում էյին բույրերով,
Թափում էյին բոլորն ուրախ արցունքներ,
Ու բոլորը ցնծում էյին—«սեր, սեր, սեր»։
Թիթեռները թռվռում էյին, վոսկյա
Բզեզները յերգում յերգերն էլֆերի,
Իրիկնային հովը էր շրշում, ու կաղնին
Խշխշում էր, սոխակն հալվում էր յերգով։
Ու այդ բոլոր խշշոցի ու յերգի մեջ,
Թևիցս կախ, թիթեղյա, սառը ձայնով,
Շաղակրատում էր այդ կինը թառամած.
«Գիշերվա ձեր գործը գիտեմ դղյակում.
Ցերկար ստվերն այդ եակ է մի բարի,
Ով կամենա՝ նրան վողջույն է տալիս.
Լուրթ հագածը հրեշտակ է. կարմիրը՝
Փայլուն սրով, թշնամիդ է վոխերիմ»։
Ու այլ անկապ, զարմանալի շատ խոսքեր
Շաղակրատեց նա մի շնչով ու նստեց
Հոգնած, ինձ հետ նստարանի մի մամռոտ,
Որ դրված էր մի հին կաղնի ծառի մոտ։

Ու իրար հետ այնտեղ նստեցինք տրտում,
Նայեցինք մեր ու տխրեցինք ավելի,
Կաղնու խշշոցն ինչպես մահվան հառաչներ,
Խոր թախիծով այնտեղ սոխակն էր յերգում,
Բայց ալ մի լույս տերևների արանքից
Լուսավորեց Մարիայի դեմքը ճերմակ,
Ու դուրս հանեց բոցը կարծր աչքերի,
Ու հին քաղցր ձայնով խոսեց նա էլի.
«Ի՞նչ գիտեյիր, վոր յես թշվառ եմ այդքան,
Անցյալում քո յերգերում այդ կարդացի»։

Կուրծքս սարսուռ պատեց ու յես սարսեցի
Գալիք տեսնող խենթությունից սեփական,
Ուղեղովս մութ ցնցումները անցան
Ու սարսափից անմիջապես արթնացա։

Դ Ո Ն Ն Ա   Կ Լ Ա Ր Ա

Յերեկոյան պարտեզի մեջ
Ալգատի դուստրն է զբոսնում,
Խինդը փողի, թմբուկների
Մեծ դղյակից ցած է իջնում։

«Ձանձրալի յեն պարերը ինձ,
Յեվ խոսքերը շողոքորթող,
Ասպետները, վոր զվարթուն՝
Ինձ արևի պես են գտնում։

Անտանելի յե ամեն բան,
Այն օրից, յերբ լուսնի լույսով
Ասպետը այն, վինը վորի
Ինձ դուրս բերեց պատուհանին։

Յերբ կանգնեց նա նուրբ ու արի,
Փայլուն աչքերն սուր նայեցին
Ազնվագույն դեմքից նրա,
Նման եր ճիշտ սուրբ Գեորգին»։

Այս եր խորհում դոննա Կլարան
Յեվ լուռ նայում եր նա գետնին,
Յերբ վեր նայեց—դեմը ոտար
Ու գեղեցիկ մի ասպետ կար։

Ու ձեռք ձեռքի, սիրաշշուկ,
Զբոսնում են լուսնի լույսով,
Հովն է շոյում նրանց սիրով
Վարդերն են ժպտում հեքյաթով.

Վարդերն են ժպտում հեքյաթով,
Վառվում սիրո պատգամ ինչպես.
— Սակայն ասա, իմ սիրուհի,
Դեմքդ ինչո՞ւ շառագունեց։

— Մոծակները խայթեցին ինձ,
Նրանք այնքան են ատելի
Ամառն օրին, վոհմակն ինչպես
Յերկարաքիթ հրյաների։

— Ի՞նչ մոծակներ ու հրյաներ,—
Ասպետն ասաց փաղաքշաբար,—
Նշենուց թափվում են ճերմակ
Ծաղկաթերթերը անհամար։

Հազարավոր ճերմակ ծաղկունք
Իրենց բույրերը թափեցին,
Բայց ասա դու, իմ սիրուհի,
Արդյոք սրտանց սիրո՞ւմ ես ինձ։

— Սիրում եմ քեզ, իմ սիրելի,
Թող փրկիչը լինի վկա,
Վոր հրյաները անիծյալ
Նենգ դավերով սպանեցին։

— Ի՞նչ հրյաներ ու ինչ փրկիչ,—
Ասպետն ասաց փաղաքշաբար,—
Տես, ծփում են յերազի պես
Շուշանները լուսաշաղախ։

Շուշանները լուսաշաղախ
Աստղերին են նայում, դեպ վեր —
Սակայն ասա, իմ սիրուհի,
Արդյոք սուտ յերգում չե՞ս տվել

— Կեղծիք չունեմ, իմ սիրելի.
Ինչպես չունեմ կրծքի մեջ իմ
Արյան կաթիլը մավրերի
Յեվ գազրելի հրյաների.

— Ի՞նչ մավրեր ու ինչ հրյաներ,—
Ասպետն ասաց մտերմաբար,—
Յեվ Ալգատի դստեր տարավ
Դեպ մրտենու մի տաղավար.

Սիրո ընքուշ նուրբ ցանցերով
Պատեց դստերը Ալգատի,
Քիչ խոսքով, շատ համբույրներով
Նրանց սրտերը հորդեցին.

Հալվող քաղցր հարմոներգի պես
Սոխակն է յերգում սիրելի,
Դեռնին վարդերը կրակի
Թռչում են պարը ջահերի.

Տաղավարում լուռ է լինում.
Լսվում է լոկ կարծես թաքուն
Խոհուն մրտենների շշուկ,
Ծաղիկների շնչառությունն.

Բայց գիլ փողեր ու թմբուկներ
Վորոտացին դղյակից այն
Յեվ Կլարան արթնանալով՝
Իր ասպետի գրկից յելավ.

— Տես, կանչում են ինձ, սիրելի,—
Անջատվելուց առաջ սակայն
Պիտի ասես անունը քո,
Վոր թաքցրիր յերկար այնքան.

Յեվ ասպետը խինդածիծաղ
Դոննայի մատներն համբուրեց,
Յեվ շուրթերն ու ճակատն, ապա
Վերջիվերջո՝ այսպես խոսեց.

— Յես, սինյորա՛, ձեր սիրելին
Վորդին եմ շատ գովաբանված
Մեծ որենսգետ Ռաբբունիի,
Սարագոսցի Իսրայելի.

ԱԼՄԱՆԶՈՐ

1

Կորդովայի մայր տաճարում
Սյուներ հազար յերեք հարյուր,
Հազար յերեք հարյուր սյուներ
Մեծ գմբեթն են ահա պահում։

Յեվ սյուներին, և գմբեթին,
Յեվ պատերին վերից մինչ վար,
Սուրբ Ղորանի արաբական
Դարձվածքներն են ծաղկանկար։

Ի փառս իրենց մեծ ալլահի
Մավր արքաներն են շինել այն,
Մութ հոսանքում ժամանակի
Շատ բաներ են փոխվել սակայն։

Աշտարակից, ուր պահակը
Աղոթքի յեր հրավիրում,
Քրիստոնյա ժամի զանգն է
Այժմ թախծոտ զիլ ղողանջում։

Սանդուղքին, ուր մարգարեյի
Սրբազան խոսքն էյին յերգում,
Տագ տերտերներն են ցույց տալիս
Հրաշքն անհամ պատարագում։

Յեվ գալարվում են յերփներանգ
Խամճիկների ճիշտ դեմ ու դեմ
Յեվ ծուխ, և յերգ յերկնաառաք
Մոմերի ցոլքը ապշադեմ։

Կորդովայի մայր տաճարում
Ալմանզոր Բեն Աբդուլլահը
Կանգնած՝ սյուներն է լուռ դիտում
Յեվ լուռ խոսքեր է մրմնջում։

«Ո՞վ դուք սյուներ զորեղ, հսկա,
Զարդարված ալլահի փառքին,
Պիտի լինեք հլու՝ անարգ
Քրիստոնյա ժողովրդին։

Հարմարվում եք ժամանակին,
Համբերությամբ բեռը կրում.
Անշուշտ, պիտի թույլն ավելի
Հեշտությամբ էլ համակերպվի»։

Ալմանզոր Բեն Աբդուլլահը
Զվարթ՝ գլուխն է խոնարհում
Դեպի մկրտության քարը՝
Կորդովայի մայր տաճարում։

2

Մայր տաճարից յելավ շտապ,
Արշավեց սև ձիով հեռու,
Գանգուրները ու գլխարկի
Փետուրներն են ծփում հովում։

Ճամբին, դեպի Ալքոլեա,
Գվադալքվիվիրի ափով,
Նշենիքն են ծաղկում ճերմակ,
Նարինջներն են բուրում վոսկյա։

Արշավում է ասպետն ուրախ,
Սուլում, յերգում, ժպտում է նա,
Յեվ թռչուններն են ձայնակցում,
Յեվ գետակի ջուրը նրան։

Ալքոլեյայի դղյակում՝
Կլարա դը-Ալվարեսն է.
Նավարայում հայրն է կռվում,
Աղջիկն ուրախ է անհոգում։

Յեվ լսում է Ալմանզորը
Թմբուկների, փողերի ձայն,
Յեվ խիտ ծառերի արանքում
Դղյակի լույսերն են փայլում։

Պարում են այդ դղյակի մեջ
Զուգված տասներկու տիկիններ,
Զուգված տասներկու ասպետներ՝
Լավագույնը՝ Ալմանզորն եր։

Զվարթ, վոգով թեավորված
Դահլիճի մեջ ճախրում է նա,
Գիտե բոլոր տիկիններին
Խոսքեր ասել փաղաքշական։

Ձեռներն սիրուն Իզաբելլի
Համբուրում է, տեղից ցատկում,
Յեվ նստում է Ելվիրի դեմ
Զվարթ՝ նրա դեմքն է դիտում։

Լեոնորից հարցնում է նա
Դուր գալիս է այսոր նրան,
Ցույց է տալիս խաչերն վոսկյա
Կարված վերարկույի վրա։

Համոզում է տիկիններին,
Վոր սրտումն է նրանց կրում,
Յերդվում է նա—«Քրիստոս վկա»։
Յերսուն անգամ այդ իրիկուն։

3

Ալքոլեյայի դղյակում
Էլ չի լսվում խինդ ու նվագ.
Պարոն, տիկին անհայտացած,
Յեվ հանգած են լույսերն ահա։

Դահլիճի մեջ ահա միայն
Ալմանզորն ու դոննա Կլարան.
Վերջին լապտերն է, վոր մենակ
Լույս է փռում նրանց վրա։

Բազմոցին է նստել դաման,
Իսկ ասպետը մի աթոռի
Յեվ հանգչում է քնաթաթախ
Գլուխն իր սիրած ծնկներին։

Վոսկե սրվակով վարդաջուր
Ուշադիր ցանում է դաժան
Ալմանզորի գլխին գանգուր,
Ցեվ հառաչում է նա ահա։

Նուրբ շուրթերով քաղցր համբույր
Ուշադիր թողնում է դաժան
Ալմանզորի գլխին գանգուր —
Ցեվ ճակատն է ամպում նրա։

Զինջ աչքերից արցունքը հուր
Ուշադիր թափում է դաժան
Ալմանզորի գլխին գանգուր —
Ցեվ ցնցվում են շուրթերն ահա։

Ցեվ թվում է նրան՝ կանգնած
Գլուխը կոր, արտասվալի,
Կորդովայի մայր տաճարում,
Ունկնդիր շատ մութ ձայների։

Լսում է նա՝ սյուներն հսկա
Մրմնջում են ու մոլեգնում,
Չեն ցանկանում էլ համբերել,
Տատանվում են ու յերերում։

Խորտակվում են սյուներ, գմբեթ,
Տերտեր, ամբոխ սարսափահար
Ու վողբում են այնտեղ ահա
Աստվածները քրիստոնյա։

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՔԵՎԼԱՐ

1

Պատուհանին մայրն է կանգնած,
Վորդին պառկած անկողնում.
— Վեր կենալ չե՞ս ուզում, Վիլհելմ,
Տես ինչ թափոր է գնում։

— Այնպես հիվանդ եմ յես, մայրիկ.
Վոչ տեսնում եմ, վոչ լսում,
Խոհս մեռնող Գրետխենն է,
Ցեվ այդ իմ սիրտն է մաշում։

— Վեր կաց գնանք դեպի Քեվլար,
Վերցրու գիրք ու վարդարան,
Կբժշկի տիրամայրը
Հիվանդ սիրտդ անպայման։

Խաչվառներն են փայլում ժամի,
Ժամի յերգեր են յերգում,
Հռենոսի վրա շինված
Քյոլնից թափորն է անցնում։

Մայրն հետևում է բազմությամ,
Տանում վորդուն դեպի նա,
Ու յերգում են նրանք խմբում,
«Օրհնյալ ես դու, Մարիա»։

2

Քեվլաարում այսօր Տիրուհին
Լավագույն շորն է հագել,
Այսօր նա շատ գործեր ունի,
Շատ հիվանդներ են եկել։

Ընծայում են հիվանդ մարդիկ
Նրան զոհի նվերներ,
Նվիրում են նրան անվերջ
Մոմեղեն ոտ ու ձեռներ։

Ով մի մոմե ձեռք նվիրի —
Ձեռքի վերքերն են բուժվում,
Ով մի մոմե ոտք նվիրի
Ոտքը առողջ է զգում։

Փայտով եկած շատ շատերը
Հիմա պարում են յարին,
Նույնիսկ ջութակ է նվագում,
Ով վերք ուներ մատներին։

Մայրը առավ վառած մի մոմ,
Մի սիրտ շինեց նրանից,
«Տիրամորը տար սուր ու նա
Սրտին քո բուժում կանի»։

Հառաչելով սիրտը վերցրեց.
Կանգնեց սուրբ պատկերի մոտ,
Արցունքներն են հոսում աչքից,
Սրտից խոսքերը վշտոտ։

«Դու, Տիրամայր փառավորյալ,
Աստծու ազնիվ աղախին,
Դու, Թագուհին սուրբ երկնքի,
Տեղյակ եղիր իմ վշտին։

Բնակվում եմ ես իմ մոր հետ
Քյոլն քաղաքում, Տիրուհի,
Քաղաքում, որ հարյուրավոր
Մատուռներ ու ժամ ունի։

Բնակվում էր և մեր կողքին
Գրետխենը, մեռավ որ,
Մարիա, բերի քեզ մոմե սիրտ,
Բուժիր սիրտս վիրավոր։

Բուժիր իմ սիրտը վշտահար,
Գիշեր-ցերեկ ես ահա
Պիտի երգեմ, աղոթեմ քեզ —
«Օրհնյալ լինես դու, Մարիա»։

3

Հիվանդ որդին և մայրն իրա
Լուռ քնած են սենյակում.
Տիրամայրը եկավ ահա
Սենյակ մտավ անծպտուն։

Նա հիվանդի վրա թեքվեց
Բոլորովին մեղմ, կամաց,
Ձեռքը դրեց նրա սրտին,
Քաղցր ժպտաց ու գնաց։

Մայրը տեսնում է յերազում
Շատ ավելի ուրիշ բան,
Նա արթնացավ ու շները
Հաչում եյին բարձրաձայն։

Այնտեղ անշարժ ընկած ահա
Արդեն մեռած էր վորդին,
Ու խաղում էր դեմքին գունատ
Առավոտվա վառ արփին։

Մայրը ծալեց իր ձեռքերը,
Չգիտեր ինչ աներ նա,
Ու յերկյուղած յերգեց կամաց—
Որհնյալ լինես դու, Մարիա»...

ՀԱՐՑ ԼԵՌՆԵՐՈՒՄ

ՀԱՐՑ ԼԵՌՆԵՐՈՒՄ

ՆԱԽԵՐԳ

Սև բաճկոններ, նուրբ գուլպաներ
Ցեվ թևնոցներ սիպ-սպիտակ,
Անուշ խոսքեր ու գրկանքներ,—
Ունենային սիրտ, միտ, սրանք։

Կրծքի տակ սիրտ, սրտի մեջ սեր,
Ջերմ սեր լիներ, անկեղծ, ազնիվ.
Ա՜խ, մահ է ինձ յերգը տաղտուկ
Սիրո միշտ կեղծ վշտի մասին։

Ուզում եմ յես լեռներն յելնել,
Ուր հյուղեր կան համեստ, անմեղ,
Ուր մարդ արձակ շունչ է քաշում,
Ազատ հոգին է խաղում այնտեղ։

Ուզում եմ յես լեռներն յելնել,
Ուր յեղևնի ծառեր կան սեղ,
Հպարտ ամպն է ուր վորոտում,
Հնչում թռչնի, առվի համերգ։

Մնաք բարով, պերճ դահլիճներ,
Վողորկ սրտով մարդիկ փարթամ,
Ուզում եմ յես լեռներն յելնել,
Վոր ձեզ վերից նայեմ, ժպտամ։

ՀԱՐԴԵՆԲԵՐԳԻ ՎՐԱ

Կրկին զարթնեք, հին յերազներ,
Բացվի՛ր ազատ, իմ սրտի դուռ,—
Յերգի հրճվանք, վճիտ արցունք
Ցայտում են դուրս այնպես մաքուր։

Կուզեմ շրջել յես յեղենի
Ծառերի մեջ, ուր կարկաչուն
Աղբյուրներ կան, յեղջերուներ,
Ուր սարյակն իր յերգն է կանչում։

Ուզում եմ յես լեռներն յելնել,
Ժայռեր ուր կան սրակատար,
Գորշ խցյակներ գղյակների՝
Վաղորդյանի լույսերում վառ։

Այնտեղ նստած՝ լուռ կանչեմ
Ժամանակներն հին ու անցած,
Սերունդները ծաղկած շքեղ,
Պերճություններն անհետացած։

Խոտն է ծածկում ասպարեզն այն,
Ուր մրցել է հերոս մի մարդ
Ու հաղթելով շատ քաջերի՝
Մրցանակ է տարել հպարտ։

Բաղեղված է պատշգամն այն,
Կանգնել է ուր չքնաղ մի կին
Ու աչքերով հաղթել հպարտ
Մրցության մեջ այն հաղթողին։

Ա՜խ, հաղթողին, հաղթողուհուն
Մահվան ձեռքն է հաղթել հիմա.
Այն ասպետն, ա՜խ, չար գերանդու,
Մեզ ամենքիս բերում է մահ։

ԼԵՌՆԱՅԻՆ ՀՈՎՎԵՐԳՈՒԹՅՈՒՆ

1

Լեռան վրա կանգնած է ծեր
Հանքափորի մի հին տնակ՝
Սոսափյունի տակ յեղևնու,
Վոսկյա լուսնի լույսերի տակ։

Այդ հյուղակում դրված է հին
Գեղաքանդակ մի թիկնաթոռ,
Բախտ ունի՝ ով նստի վրան,
Ու յես եմ մարդն այդ բախտավոր։

Նստած է մոտս մանկուհին՝
Թևերը իմ գրկին հենած,
Աչքերն՝ յերկու փոքրիկ աստղեր,
Ու բերանն է վարդ նորաբաց։

Յեվ աստղերից այդ բիլ, կապույտ
Յերկինքն է ինձ նայում հիմա,
Զարաճճին մատն իր շուշան
Դնում է վարդ բերնի վրա։

«Մայրիկը, վո՛չ, մեզ չի տեսնում,
Նստած մանում է ճախարակ,
Յեվ հայրիկը՝ ձեռին կիթառ՝
Յերգում է հին մի յեղանակ»,

Յեվ խուլ, մեղմիկ շշնջյունով
Խոսում է այդ փոքրիկն անբիծ.
Ու գաղտնիքներ շատ կարևոր
Քաղցր ձայնով հայտնում է ինձ։

«Իմ մորաքրոջ մահից հետո
Ել չենք կարող գնալ, ավաղ.
Մենք դեպի Շյուցընհոֆ Գոսլար,
Վոր գեղեցիկ է ու չքնաղ։

Այստեղ ապրում ենք մեկուսի,
Մենակ՝ լեռան գլխին այս ցուրտ,
Ձմեռը մենք ամբողջովին
Թաղվում ենք խոր ձյունի ծոցում։

Աղջիկ եմ յես այնքան յերկչոտ,
Սարսափում եմ, մանուկի պես,
Լեռնային չար վոգիներից,
Վոր գիշերով այցում են մեզ»։

Ու լռում է աղջիկն հանկարծ՝
Վախեցած իր խոսքից, կարծես,
Յեվ իր յերկու թարթիչներով
Ծածկում աչքերն՝ աստղերի պես։

Տառաչում է դուրսն յեղևնին,
Ճախարակն է բզզում բարակ,
Յեվ կիթառն է անվերջ հնչում,
Մրմնջում հին մի յեղանակ։

Մի վախենա, չքնաղ մանկիկ,
Վոգիներից այն չար ու խիստ.
Գիշեր-ցերեկ, սիրուն մանկիկ,
Հրեշտակներն են քեզ հսկում միշտ։

2

Յեղևնին իր մորչ մատներով
Լուսամուտն է բախում կամաց,
Լուսնի ցոլքը մեզ լնելով
Գաղտագողի՝ լուռ ներս սողաց։

Հայրն ու մայրը ննջարանում
Մրափում են, մտնում խոր քուն,
Բայց յերկուսս սիրով խոսում
Ու պահում ենք միմյանց արթուն։

«Վոր դու հաճախ ես աղոթել,
Խիստ դժվար է հավատալ այդ.
Շարժումը քո շրթունքների
Շատ հեռու յե աղոթքից, շատ։

Վախ է ազդում ինձ շարունակ
Քո շուրթերի շարժումը չար,
Փարատում է վախս, սակայն,
Քո աչքերի փայլը պայծառ։

Կասկածում եմ նույնպես, թե դու
Խորին հավատ ունես կյանքում.
Հավատո՞ւմ ես հայր աստծուն,
Անմահ վորդուն և սուրբ հոգուն»։

Ա՜խ, իմ մանկիկ, իմ մոր գրկում
Ցես հավատում էյի, վոր հայր
Աստվածն է միշտ կառավարում
Իր բարձունքից՝ աշխարհն անծայր։

Ստեղծել է աշխարհն այս ճոխ
Ցեվ գեղեցիկ բոլոր մարդկանց.
Ստեղծել արև, լուսին, աստղեր,
Ու սահմանել նրանց ընթացքը։

Ցերբ մեծացա յես ավելի
Ու խորացավ միտքս արթուն,
Այդ ժամանակ, սիրուն մանկիկ,
Հավատացի նույնպես վորդուն.

Վորդուն, վոր մեզ սիրեց, սիրո
Ուղին մեկնեց մարդկանց առաջ,
Ցեվ ի տրիտուր այդ ամենի,
Ինչպես հարկն է, բարձրացավ խաչ։

Հիմա յերբ յես մեծ եմ արդեն՝
Շատ կարդացած, փորձված կյանքում,
Լիքն է հոգիս, ամբողջ սրտով
Հավատում եմ և սուրբ հոգուն։

Կատարեց նա հրաշքը մեծ,
Կատարում է մեծն ավելի,—
Բռնությունը նա խորտակեց,
Ստրկության լուծն անհելի։

Ապաքինում է ամեն վերք,
Իրավունքը հին նորոգում, —
Մարդիկ ծնված են հավասար՝
Ի ծնե ազնիվ՝ իրենց կյանքում։

Վանում է նա մշուշը չար,
Կասկածանքը մութ ու դաժան,
Վոր խռովում է սեր ու խինդ
Գիշեր-ցերեկ միշտ, հարաժամ։

Հազարավոր սպառազեն
Ասպետներ է ընտրել հլու
Սուրբ հոգին՝ և քաջալերել
Իր մեծ կամքը կատարելու։

Նրանց սրերն են շողշողում,
Դրոշները՝ շրշում անմահ,
Ուզո՞ւմ ես դու տեսնել, մանկիկ,
Մի այդպիսի ասպետ հիմա՝

Ուրեմն ինձ նայիր, մանկիկ,
Համբուրիր ինձ, նայիր անվախ,
Մի ասպետ եմ յես էլ ահա,
Հոգու ասպետ՝ սրտով խիզախ։։

3

Թաղնվում է լուսինը լուռ
Մի յեղևնի ծառի հետև,
Եվ սենյակում լապտերը մեր
Աղոտում է հետզհետե։

Բայց իմ կապույտ աստղերը դեռ
Ցոլցլում են պայծառ ու ջինջ.
Բոցկլտում են վարդերը հիր,
Ու խոսում է աղջիկն աննինջ։

«Դիվուկների ցեղը թզուկ
Գողանում է հացը մեր թանգ,
Երեկոյան՝ մնգուկը լի,
Առավոտյանն՝ ամբողջ դատարկ։

Թզուկները ամեն գիշեր,
Միշտ մեր կաթի սերն են ուտում
Ու ամանը թողնում են բաց,
Վոր մնացածն ուտի կատուն։

Եվ մի կախարդ կին է կատուն,
Վոր փոթորկին, գիշերն, արագ
Մագլցում է լեռներն ի վեր,
Ուր կա փլված մի աշտարակ։

Մի ժամանակ վերևն՝ ուրախ
Մի դղյակ է յեղել շքեղ,
Եվ տիկիններ ու ասպետներ
Որորվել են, պարել այնտեղ։

Բայց հետո մի կախարդ պառավ
Այդ դղյակն է անիծել.
Ու աշտարակն հիմա ավեր
Վայող բուին է բույն դարձել։

Բայց, ասում եր իմ մորաքույրն,
Եթե ասվի ճիշտ խոսք մի նոր
Մութ գիշերով ու ճիշտ ժամին՝
Ապարանքի տեղում մի որ,—

Փլատակներն իսկույն և յեթ
Կփոխարկվեն պերճ դղյակի,
Ու կպարեն այնտեղ կրկին
Մարդիկ ուրախ, ասպետ ու կին։

Եվ ով այդ խոսքն արտասանի,
Կպատկանի դղյակն իրեն,
Եվ թմբուկով ու շեփորով
Նրա փառքը կմեծարեն»։

Ու ծաղկում են պերճ պատկերներ
Իմ մանկուհու բերանում վարդ,
Նրանց վրա աչքերն իրենց
Աստղի լույսն են թափում զվարթ։

Փաթաթում է աղջիկն իր ձույլ
Վոսկի վարսերն իմ ձեռներին,
Խաղում է իմ մատների հետ,
Համբուրում ինձ, ժպտում լռին։

Ու սենյակում լուռ՝ ամեն իր
Ինձ նայում է մտերմի պես,
Պահարանն ու սեղանն արդեն
Հին ծանոթ են ինձ հետ, կարծես։

Ժամացույցն է լուրջ զրուցում,
Ու կիթառը հին՝ իր անվերջ
Հնամենի յերգն է հնչում,
Ու նստած եմ յերազի մեջ։

Հիմա՛ յե ճիշտ ժամն՝ իսկական,
Իսկական տեղն այս է ահա,
Իմ շուրթերից դուրս է սահում
Այն ճշմարիտ խոսքը հիմա։

Այգն է բացվում, տես, իմ մանկիկ,
Կես գիշերն է սարսում արդեն.
Շաչում են բարձր առու և ծառ,
Սկսում է լեռը զարթնել։

Կիթառի ձայն. Թզուկի յերգ
Դղրդում են ծերպերի մեջ,
Ու փռվում է, ինչպես գարուն,
Ծաղիկների անտառ մի պերճ։

Տերևներով հեքյաթային
Ծաղիկները կախարդական
Բուրումնավետ ու յերփներանգ
Հուզումնալից, հարատատան։

Վայրի վարդեր կարմիր-կարմիր
Դուրս են ժայթքում բոցի նման.
Շուշաններն են սլաքվում վեր,
Կարծես յերկինք պիտ սլանան։

Արևի պես աստղերը մեծ
Տենչի բոցով նայում են ցած
Ու լեցնում են շողերն իրենց
Շուշանների բաժակը բաց։

Բայց մենք ինքներս, անգին մանուկ,
Շատ ավելի փոխված ենք արդ,
Ջահերի փայլ, վոսկի, մետաքս
Շողում են մեր շուրջը զվարթ։

Դո՛ւ, դու յեղար իշխանուհի,
Այս հյուղակը դարձավ դղյակ,
Այստեղ ցնծում են ու պարում
Այն ասպետներն ու այն տիկնայք։

Բայց յես, յես եմ շահել և՛ քեզ,
Յեվ դղյակ, և՛ ասպետներ, արդ
Դղրդում են թմբուկ, շեփոր,
Պանծացնում կյանքս յերիտասարդ։

ՀՈՎԻՎ ՏՂԱՆ

Թագավոր է հովիվ տղան,
Նրան կանաչ բլուրն է գահ,
Մեծ արևն է նրա գլխին
Արքայական թագը վոսկյա։

Վոչխարները՝ ժապավենով
Կեղծավորներ են բրդառատ,
Ու հորթերն են ազատանի,
Վոր շրջում են սեգ ու հպարտ։

Արտիստներ են նոխազ ու այծ,
Թռչունները սրնգահար,
Կովերն իրենց զանգակներով
Համերգում են նրա համար։

Ձայնակցում են այդ համերգին
Այնպես հնչուն ու դուրեկան
Փրփրած ջրվեժն ու յեղնիկն,—
Մինչ ննջում է դաշտի արքան։

Քնի պահին կառավարում,
Հսկում է շունը նախարար,
Վորի ահեղ մռլտոցին
Արձագանգում են ձոր ու սար։

«Շատ դժվար է կառավարել,—
Քրթմնջում է արքան քնկոտ,—
Կուզեյի յես տանը լինել,
Այս պահին՝ իմ թագուհու մոտ։

Իմ թագուհու գրկի մեջ թող
Հանգչեր գլուխն իմ թագակիր,
Նրա անհուն աչքերի մեջ
Պետությունս է անծայրածիր»։

ԲՐՈԿԵՆԻ ՎՐԱ

Արևելքն է շառագունում
Արեգակի լույսերով պերճ,
Գագաթները հեռուների
Լողանում են մշուշի մեջ։

Հսկայի վոտ ունենայի՝
Կսուրայի հողմի նման
Այդ լեռների կատարներով
Դեպի տունն իմ անգին մանկան։

Կքաշեյի իսկույն մի կողմ
Վարագույրներն իր անկողնի՝
Համբուրելու նրա ճակատն
Ու սուտակներն իր բերանի։

Յեվ կասեյի մեղմիկ ձայնով
Ականջներին նրա շուշան,—
«Յերազիր, վոր սիրում ենք մենք
Ու կմնանք միշտ անբաժան»։

ԻԼԶԵ

Իշխանուհի Իլզեն եմ յես
Յեվ ապրում եմ Իլզենշտայնում.
Իմ դղյակը յեկ, տանեմ քեզ,
Ուր մարդիկ են յերջանկանում։

Յես կթրջեմ գլուխ ու վարս
Կոհակներով մաքրամաքուր,
Դու հոգս ու ցավ կմոռանաս,
Իմ բարեկամ, հիվանդ, տխուր։

Կգրկեմ քեզ բազուկներով,
Կրծքի վրա իմ սպիտակ
Դու կհանգչես՝ յերազելով
Հեքյաթային հաճույք ու կյանք։

Կհամբուրեմ յես քեզ այնքան,
Համբուրել եմ ինչպես հաճախ
Հայնրիխ կայսերն իմ սիրական,
Վոր մեռած է հիմա, ավաղ։

Մեռածն է միշտ մնում մեռած
Յեվ ապրողն է միայն ապրում.
Յես՝ գեղեցիկ, ծաղկավորված,
Ժպտուն իմ սիրտն է սարսռում.

ԲՐՈԿԵՆԻ ՎՐԱ

Արևելքն է շառագունում
Արեգակի լույսերով պերճ,
Գագաթները հեռուների
Լողանում են մշուշի մեջ։

Հսկայի վոտ ունենայի՝
Կսուրայի հողմի նման
Այդ լեռների կատարներով
Դեպի տունն իմ անգին մանկան։

Կքաշեյի իսկույն մի կողմ
Վարագույրներն իր անկողնի՝
Համբուրելու նրա ճակատն
Ու սուտակներն իր բերանի։

Յեվ կասեյի մեղմիկ ձայնով
Ականջներին նրա շուշան,—
«Յերազիր, վոր սիրում ենք մենք
Ու կմնանք միշտ անբաժան»։

ԻԼԶԵ

Իշխանուհի Իլզեն եմ յես
Յեվ ապրում եմ Իլզենշտայնում.
Իմ դղյակը յեկ, տանեմ քեզ,
Ուր մարդիկ են յերջանկանում։

Յես կթրջեմ գլուխ ու վարս
Կոհակներով մաքրամաքուր,
Դու հոգս ու ցավ կմոռանաս,
Իմ բարեկամ, հիվանդ, տխուր։

Կգրկեմ քեզ բազուկներով,
Կրծքի վրա իմ սպիտակ
Դու կհանգչես՝ յերազելով
Հեքյաթային հաճույք ու կյանք։

Կհամբուրեմ յես քեզ այնքան,
Համբուրել եմ ինչպես հաճախ
Հայնրիխ կայսերն իմ սիրական,
Վոր մեռած է հիմա, ավա՜ղ։

Մեռածն է միշտ մնում մեռած
Յեվ ապրողն է միայն ապրում.
Յես՝ գեղեցիկ, ծաղկավորված,
Ժպտուն իմ սիրտն է սարսռում.

Իմ բյուրեղյա դղյակը յեկ,
Խոլ պարում են այնտեղ, ցածում,
Ազնիվ կանայք, ասպետներ սեգ,
Ու սպասավոր խումբն է ցնծում։

Մետաքս շորերն անուշ շրշում,
Խթաններ են զնգում արագ,
Թզուկները փող են փչում,
Զարկում թմբուկ, նվագում ջութակ։

Քեզ կըսեղմեմ կրծքիս վրա,
Ինչպես Հայնրիխին գրկեցի,—
Յերբ թմբուկը հնչեց, նրա
Ականջները պինդ փակեցի։

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԾՈՎ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԾՈՎ

ԱՌԱՋԻՆ ՇԱՐՔ

1

ԹԱԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Դուք, յերգեր, իմ բարի յերգեր,
Վեր կացեք, հագեք զրահ,
Հնչեցրեք փող ու շեփոր,
Ցեվ բարձրացրեք վահանի վրա
Այս պարմանուհուն,
Վոր հիմա, վորպես թագուհի,
Իմ սրտին պետք ե իշխե։

Վողջույն քեզ, ով իմ թագուհի.
Արևից յես կպոկեմ
Ճառագայթներ վոսկեշող
Ցեվ կհյուսեմ շքեղ թագ
Քո անզին գլխի համար։

Ցերկնի մետաքսյա ծփուն կապույտից,
Ուր շողշողում են բյուր ադամանդներ,
Կտոր կձևեմ
Քո դշխոյական ուսերի համար,
Վորպես վերարկու թագադրության։

Քեզ պալատական շքախումբ կտամ
Շքեղ սոնետներ,
Հպարտ տերցիններ, խոհեմ ստանցներ.
Սրամտությունս՝ քեզ սուրհանդակ,
Յերևակայությունս՝ խեղկատակ.
Վորպես մունետիկ,—ժպտուն արտասուք գինանշանում,—
Թող քեզ ծառայի ահա հումորս։

Բայց յես, թագուհի,
Ինքս քո առջև լուռ ծունկի յեկած,
Թավշյա և կարմիր մի բարձի վրա,
Խոր մեծարանքով կմատուցեմ քեզ
Բանականության մնացորդը այն,
Վոր կարեկցաբար դեռ թողել եր ինձ
Նախորդ թագուհին սրտիս պետության։

2

ՅԵՐԵԿՈՅԱՆ ՄԹՆՇԱՂ

Մեղմ դժգունած ծովի ափին
Նստած եյի յես մտախոհ, միայնակ.
Խոնարհվում եր արևը ցած և նետում
Բոցակարմիր ցոլքեր ջրի յերեսին։
Յեվ սպիտակ կոհակները հեռավոր՝
Մղված ահեղ հորձանքով՝
Շաչում եյին փրփրադեզ և ափերին մոտենում,
Մերթ մանչում տարօրեն, մերթ հեծեծում, մերթ սուլում,
Մերթ քրքջում, քրթմնջում, մերթ հառաչում, շառաչում
Յեվ մերթ-ընդ մերթ օրորի յերգ մրմնջում։
Ինձ թվում եր՝ լսում եմ պատմություններ մոռացված,
Հին հեքյաթներ սիրելի,
Վոր մանկությանս օրերին
Ընկերներս են ինձ պատմել.
Ամեն ամառ իրիկուն
Յերբ տան դրան առջևի վերելակի քարերին
Նստում եյինք, լուռ ու հեզ
Սրտատրոփ և սպասող աչքերով՝
Պատմություններ լսելու,—
Մինչ աղջիկներն պարմանի
Նստում եյին պատուհանի առջև լուռ
Թագարներին այնքան մոտ՝
Ու լուսնի տակ փայլփլում,
Շողում եյին վարդ դեմքեր։

ՄԱՅՐԱՄՈՒՏ

Բոցակարմիր արևն իջնում
Ու սուզվում է սարսռահույզ
Արծաթափայլ ովկիանոսում.
Յեթերային պատկերներ,բաց վարդագույն,
Ծածանվում են յետևից։ Իսկ դեմից
Աշնանային մութ ամպերի քողերից,
Տխուր, մահվան դժգունությամբ
Դուրս է գալիս լուսինը
Յեվ յետևից անթիվ կայծեր.—
Փայլփլում են աստղերն հեռու մշուշում։

Փայլում էյին յերբեմն անհուն յերկնքում
Ամուսնական միությամբ
Լուսինն իբրև աստվածուհի, արևն՝ աստված,
Յեվ նրանց շուրջ վխտում էյին աստղերը,
Փոքր ու անմեղ մանուկներ։

Չար լեզուներ սերմանեցին պառակտում,
Յեվ բաժանվեց թշնամացած
Ամուսնական զույգն այդ բարձր, լուսավոր։

Հիմա, ցերեկն, առանձին ու պերճ փառքով
Արև աստվածն անցնում է մեր յերկնքից,
Իր պերճության համար
Պաշտված, փառաբանված
Յերջանիկ ու հպարտ մարդկանց ամբոխից։

Իսկ գիշերով
Լուսինն է վեր թափառում,
Խեղճ այդ՝ մայրը,
Իր վորբացած զավակներով-աստղերով։
Փայլում է նա լուռ թախծությամբ,
Ու սիրահար կույսեր, քնքուշ քերթողներ
Նրան յերգեր ու արցունքներ են ձոնում։

Դալուկ լուսինն իր կանացի էյությամբ
Դեռ սիրում է իր առնազեղ ամուսնուն։
Յերեկոյան, դողդոջուն ու դալկադեմ
Նա ամպերի տակից նայում է ցավով
Բաժանվողի, հեռացողի յետևից.
Յեվ ուզում է կանչել յերկչոտ «Յետ դարձիր,
Յերեխաներն ուզում են քեզ, յետ դարձիր»։
Բայց արևը, գոռոզ աստվածն,
Այլայլվում է և բորբոքվում դրանից,
Շառագունում է կրկնակի
Բարկությունից ու վշտից
Ու անողոք շտապում է դեպի վար,
Դեպի ջրե անկողինը ցուրտ,--այրի։

Չար լեզուներն ահա այսպես
Բերին կորուստ,վիշտ ու ցավ
Նույնիսկ աստված, հավերժական այդ զույգին։
Յեվ աստվածներն այդպես թշվառ յերկնքում
Թափառում են, տառապում,
Անցնում անվերջ, հավերժական ճանապարհ
Ու չեն կարող մահ գտնել,
Յեվ տանում են իրենց հետ
Թշվառությունն իրենց շքեղ, լուսավոր։

Սակայն յես, մարդս,
Յես հողեղեն և իմ մահով բախտավոր,
Չեմ տրտնջա շատ յերկար։

4

ԳԻՇԵՐԸ ԾՈՎԱՓԻՆ

Գիշերն անաստղ ու ցուրտ է,
Հորանջում է ծովը.
Ցեվ ծովի վրա հարթ, յերեսն ի վայր
Պառկած է անձև հյուսիսի քամին
Ցեվ խորհրդավոր, հեծող խուլ ձայնով,
Ինչպես մի համառ խուժդուժ շատախոս,
Շաղակրատում է ջրի հետ,
Պատմում է այնքան անխմաստ հին պատմություններ.
Խոլ-խոլ հեքյաթներ սպանիչ քմայքով,
Նորվեգիական հին-հին զրույցներ,
Մերթընդմերթ հեռվից ծիծաղում, յերգում
Հին կախարդական յերգերն Եդդայի,
Նույնպես Ռունայի վեպերը պատմում
Այնպիսի զոռոզ, կախարդիչ ուժով,
Վոր ծովի ճերմակ յերեխաները
Ցատկում են, ցնծում
Ամբարտավան և արբած։

Մինչ այդ տափարակ ափին,
Կոհակներով թրջված ավազի վրա
Քայլում է մի մարդ, մի ոտարական,
Վորի սիրտը հովից-ծովից վայրի յե։
Ուր վոտ է կոխում՝
Ցայտում են կայծեր և խեցիներ փշրվում.

Նա փաթաթվում է գորշ վերարկույով
Ցեվ քայլում արագ գիշերվա միջով,
Առաջնորդում է նրան փոքրիկ մի լույս,
Վոր շողշողում է այնքան հաճելի
Հեռվից, ձկնորսի մենավոր հյուղից։

Հայրն ու յեղբայրը ծովի վրա յեն,
Ու մնացել եր այնտեղ մեն-մենակ,
Մեն-մենակ հյուղում ձկնորսի դուստրը,
Լույս-չքնաղագեղ ձկնորսի դուստրը։
Կրակի առջև
Ականջ է դնում ջրի կաթսայի
Խորհրդավոր, կախարդական ձայներին
Ցեվ ճարճատուն խռիվը նետում է կրակ,
Ու փչում է նա.
Շողշողուն կարմիր լույսերը
Կախարդիչ սիրով արտացոլվում են
Նրա ծաղիկ դեմքին,
Քնքուշ և ճերմակ նրա ուսերին,
Վոր հուզիչ ձևով նայում են
Նրա կոշտ ու գորշ շապկի բացվածքից,
Նրա հոգատար փոքրիկ ձեռքերին,
Վոր շրջազգեստը պահում են ամուր
Նուրբ ազդրերի շուրջ։

Ցեվ հանկարծ բացվում է դուռը
Ցեվ ներս է մտնում այն գիշերային ոտարականը,
Ու վստահ սիրով՝ ազահ նայում է
Սպիտակ, քնքուշ աղջկա վրա,
Վոր սարսափահար վոտքի յե կանգնել,
Ինչպես վախեցած մի քնքուշ շուշան։
Ժպտուն նետելով իր վերարկուն ցած
Ցեկվորն ասում է.

«Տեսնում ես, մանկիկ, յես խոսքիս տերն եմ,
Ահա յես յեկա և ինձ հետ յեկան
Հին օրերը, յերբ աստվածները յերկնքի
Իջնում եյին վար, դստրիկների մոտ,
Գրկում մարդկային այդ դստրիկներին,
Ու սիրում եյին ահա նրանցից
Գավազանակիր բազում արքաներ,
Յեվ հերոսներ ու հրաշքներն աշխարհի.
Սակայն, իմ մանկիկ, շատ մի զարմանա
Աստվածությանս վրա.
Յես քեզ խնդրում եմ թեյ յեփես, ռոմով,
Բանզի ցուրտ է դուրս,
Յեվ գիշերային այս դաժան ցրտին
Մրսում ենք և մենք՝ հավերժ աստվածներս,
Յեվ աստվածային հարբուխ կստանանք
Ու անմահ մի հազ»։

5

ՊՈՍԵՅԴՈՆ

Արևի շողերը խաղում եյին
Հեռու մշտադալար ծովի վրա,
Նավակայանում փայլում եր նավը,
Վոր իմ հայրենիքն ինձ պիտի տաներ,
Բայց նպաստավոր քամի դեռ չկար,
Ու յես դեռ նստած եյի սպիտակ ավազակույտին,
Ծովափին՝ մենակ
Յեվ կարդում եյի Վոդիսևսի յերգը.
Հին և հավերժ նոր յերգը,
Վորի ծով թերթերից
Խնդությամբ իմ դեմ բարձրացան
Շունչը աստվածների,
Մարդկային լուսավառ գարունը
Յեվ՝ շքեղ յերկինքը Հելլադայի։

Իմ ազնիվ սիրտը հավատարիմ ուղեկցեց
Լայերտի վորդուն, մոլորության ու վշտի մեջ,
Դառն ու վշտացած նստեց նրա հետ
Այնքան զուրեկան կրակի առաջ,
Ուր թագուհիները ծիրանի եյին հյուսում,—
Յեվ ոգնեց նրան ստել և կյանքն ազատել
Հսկաների քարանձավներից և հավերժահարսների գրկանքներից.
Հետևեց նրան քիմմերյան գիշերին,
Փոթորկի և նավաբեկության մեջ՝

Կրելով նրա հետ անասելի թշվառություն։
Հառաչելով ասացի «ով չա՛ր Պոսեյդոն,
Սարսափելի յե․քո ցասումը,
Ցավ յես յերկյուղ եմ կրում
Իմ այս ուղևորության համար»։

Յերբ յես ասացի իմ այս խոսքերը,
Ծովը փրփրեց իսկույն
Ու սպիտակ ալիքներից բարձրացավ
Ծովի աստծու յեղեգնապսակ գլուխը
Ցավ հեգնանքով կոչեց ինձ.
«Մի վախենա, պոետիկ,
Յես չեմ ուզում փանգել յերբեք
Քո խեղճ նավակը,
Վոչել անհարկել թանկագին կյանքդ՝
Վտանգավոր ճոճումով,
Քանզի, պոետիկ, ինձ չես զայրացրել,
Դու չես կործանել վոչ մի աշտարակ
Պրիամոսի սրբազան ամրոցի,
Ցավ վոչ մի մազ դու չես խանձել
Իմ Պոլիֆեմ վորդու թարթիչներից,
Ցավ քեզ բնավ իր խորհրդով չի պաշտպանել
Իմաստության աստվածուհին, Աթենաս Պալլասը»։

Այդպես ասաց Պոսեյդոնը
Ցավ խորասուզվեց ծովում.
Ցավ մեծ ծովագնացի կատակի վրա
Ջրի տակը ծիծաղեցին
Ամֆիտրետը, անճոռնի ձուկ-կինը,
Ցավ Ներևսի հիմար աղջիկները։

6

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետզհետե մթնում եր յերեկոն,
Ամեհի գոռում եր ծովը.
Ցավ յես ափին նստած՝ դիտում եյի
Սպիտակ պարը ալիքների,
Իմ կուրծքն ուռչում եր, ինչպես ծովը,
Ու յես զգացի քո կարոտն անհուն։

Ո դու, պաշտելի պատկեր,
Ամեն տեղ ես դու՝ իմ շրջապատում,
Ամեն տեղ ինձ ես կանչում,
Ամեն, ամեն տեղ,—
Քամու ձայնի մեջ, ծովի շառաչում
Ցավ իմ, սեփական կրծքի հառաչում։

Թեթև յեղեգնով գրեցի յես ավազի վրա՝
«Ագնեսա՛, սիրում եմ յես քեզ»,
Բայց չար ալիքները խուժեցին
Իմ քաղցր խոստովանության վրա
Ցավ ջնջեցին այն։

Դյուրաբեկ յեղեգն, քայքայվող ավազ,
Մշտահոս ջուր, ձեզ այլևս չեմ վստահում յես։
Ցերկինքը մթնում է, սիրտս մոլեգնում.
Ցավ կարող ձեռքով յես Նորվեգիայի անտառներից

Կարմրատահանեմ ամենասեգ յեղևնին,
Կըթաթախեմ այն
Ետնայի հրավառ կոկորդն և այսպես
Կգրեմ յերկնքի մթին ծածկույթի վրա, —
«Ագնեսա, սիրում եմ յես քեզ»։

Ամեն գիշեր, այնուհետև, կվառվի
Այնտեղ, վերը, հավերժական իմ հրե տողը,
Ու բոլոր սերունդները գալիք
Հրճվանքով կկարդան իմ յերկնային խոսքը՝
«Ագնեսա, սիրում եմ յես քեզ»։

7

ԳԻՇԵՐԸ ՆԱՎԱԽՈՒՑՈՒՄ

Ծովը ունի մարգարիտներ,
Յեվ յերկինքն՝ իր աստղերը.
Բայց իմ սիրտը, բայց իմ սիրտը,
Իմ սիրտն ունի իր սերը։

Մեծ է ծովը, յերկինքը՝ մեծ.
Բայց սիրտս՝ մեծ ավելի,
Մարգարիտից, աստղից՝ շքեղ
Իմ սերն է վառ շողշողում։

Յերիտասարդ, ծաղկած աղջիկ,
Իմ մեծ սրտին մոտ արի,
Իմ մեծ սիրտը, ծով ու յերկինք
Նվաղում են մեծ սիրուց։

Յես յերկնքի կապույտ քողին,
Ուր աստղերն են շողշողում,
Կուզեյի իմ շուրթերն հպել,
Հպել և լալ անձկագին։

Այն աստղերը իմ սիրուհու
Աչքերն են, որ բյուրաձև
Փայլփլում են անհուն սիրով
Մեծ յերկնքի կապույտում։

Դեպի անհուն կապույտ յերկնի,
Ուր աչքերն են սիրունհուս,
Իմ թևերն եմ յես կարկառում
Ցեվ պաղատում յերկյուղած.

«Անգին աչքեր, գթության լույս
Ցերջանկացրեք իմ հոգին,
Թող յես մեռնեմ և ձեռք բերեմ
Ձեզ ձեր ամբողջ յերկնքով»։

Ցեվ յերկնքից ընկնում են ցած
Վոսկի կայծեր սարսուռով,
Ցեվ իմ հոգին մութի միջով
Սլանում ե շատ հեռու։

Ո՛, յերկնքի չքնաղ աչքեր,
Արտասվեցեք հոգուս մեջ,
Վոր աստղերի այդ արցունքով
Հորդ վարարի իմ հոգին։

Որորում են ալիքներն ինձ,
Անուրջներն են որորում,
Պառկած եմ լուռ իմ խցի մեջ,
Մութ մի անկյուն, անկողնում։

Լուսամուտից դիտում եմ յես
Աստղերը բարձր ու պայծառ,
Աչքերն անուշ և սիրելի
Անհուն սիրվող սիրելուս։

Աչքերն այդ քաղցր ու սիրելի
Հսկում են վեր, յերկնքում,
Փայլփլում են, նշան անում
Ինձ այդ կապույտ անհունից։

Ցես դիտում եմ յերկինքը բիլ,
Ժամեր, ժամեր յերջանիկ,
Մինչև ճերմակ մի քող, մշուշ
Անգին աչքերն ե ծածկում։

* * *

Նավի պատերին, կողին,
Վորին հենել եմ գլուխս յերազուն,
Փշրվում են ահեղ ալիքները,
Նրանք շաչում են կատաղի
Ցեվ մրմնջում ականջիս.—

«Ով դու, անմիտ մարդ,
Քո թևերը կարճ են և յերկինքը՝ հեռու,
Ցեվ աստղերն են այնտեղ շատ ամուր գամված
Վոսկե գամերով.
Իզուր ես նրանց ձգտում, իզուր հառաչում,
Ավելի լավ ե՝ հանգիստ քնես դու»։

* * *

Ցերազում տեսա ընդարձակ մի դաշտ
Ամա, լուռ, ծածկված սպիտակ ձյունով.
Սպիտակ ձյունի տակ պառկած եյի յես,
Մեն մենակ պառկած, մահվան ցուրտ քնով։

Վերից, յերկնքից նայում եյին վար՝
Իմ գերեզմանին աչքերն աստղերի
Ու փայլում եյին հաղթությամբ պայծառ,
Հանգիստ խնդությամբ, բայց և սիրով լի։

8

ՓՈԹՈՐԻԿ

Մոլեգնում է մրրիկը
Յեվ մտրակում ալիքները կատաղի։
Յեվ ալիքները գայրագին փրփրում,
Ծառանում են, ծփում են ու կուտակվում
Յեվ լեռնանում սալխտակ։
Մագլցում է նավը ջրի լեռներով
Յեվ բարձրանում կատարին,
Ապա հանկարծ ընկնում է վայր
Ալիքների սև, հորանջող անդունդը։

Ով ծով,
Մա՛յր փրփրածին գեղեցկության,
Մեծ մայր սիրո, խնայի՛ր ինձ,
Արդեն ճախրում է, դիակի հոտ առած,
Վերը, ճերմակ, կախարդական ուրուրը
Յեվ սրում է կայմի վրա կտուցը
Լցված տենչով՝ հոշոտելու այն սիրտը,
Վոր քո դստեր փառքն է միայն հնչեցնում,
Յեվ վորին քո չարաճճի թոռնուհին
Դարձրել է խաղալիք։

Ձո՛ւր պաղատանք ու խնդիր.
Կորչում է իմ կոչը շաչող փոթորկում
Խոլ հողմերի գոռոցի մեջ ռազմատենչ։

Ծովը շաչում, ճարճատում է և վոռնում,
Խոլ ձայների գժանոց է կարծես թե,
Յեվ մեջընդմեջ յես լսում եմ պարզորոշ
Տավիղի ձայն դյութական,
Յերգ՝ լի բուռն տենչանքով,
Յերգ՝ հոգեմաշ և միշտ սրտեր բզկտող,
Ու յես ահա ճանաչում եմ այդ ձայնը։

Հեռվում, ժայռոտ ափին Սկովտական,
Ուր գորշ, փոքրիկ դղյակն է վեր բարձրանում
Ծովի վրա գազազած,
Այնտեղ, լուսամուտի առաջ, տեսնում եմ
Կանգնած է մի գեղեցկուհի, հիվանդ կին,
Թափանցիկ է և մարմարի պես դժգույն,
Նվագում է նա տավիղը և յերգում,
Քամին նրա խոպոպիկներն է խառնում
Յեվ տանում է նրա յերգն ու նվագը
Հեռո՜ւ, հեռո՜ւ ծովի վրա ալեկոծ։

9

ԾՈՎԻ ՀԱՆԳԻՍՏԸ

Հանգիստ Արևն իր լույսերը
Նետում է ցած ջրի վրա.
Նամը ակոս է ձգում կանաչ՝
Գոհարներում ալեծածան։

Նավակն ընկած է ղեկի մոտ
Փորի վրա, նիրհում է նա.
Կպրոտ նավաստին կայմի մոտ
Հին առագաստն է կարկատում.

Նրա կեղտոտ այտերն այնպես
Կարմրել են, ու շուրթերը
Դողդողում են, և ցավագին
Նայում են լուռ աչքերը մեծ։

Նավապետը նրա առջև
Կանգնած՝ գոռում է, հայհոյում.
«Դու, սրիկա՛, գողացել ես
Տակառից մի տարեխ, տարել»։

Հանգստությունն Ալիքներից
Ցելնում է մի խելոք ձկնիկ,
Տաքանում է արևի տակ,
Զվարթ պոչիկն օրորելով։

Սակայն ուրուրն արագ թափով
Հարձակվում է նրա վրա,
Ու կտուցով վորսը առած
Դեպի կապույտն է սավառնում։

10

ԾՈՎԱՅԻՆ ՏԵՍԻԼ

Տախտակամածի յեզրին յես պառկած
Նայում եյի լուռ, յերազկոտ՝
Հայելու պես վճիտ ջրին.
Նայում եյի, հետզհետե խոր նայում
Մինչև ծովի հատակը։
Նախ անորոշ, մշուշապատ
Հետզհետե, սակայն, վորոշ գույներով
Ցերևացին աշտարակներ, գմբեթներ,
Ցեվ ապա լույսի պես պարզ մի ամբողջ քաղաք
Հին նիդերլանդական,
Լի կենդանի մարդկանցով։

Շրջահայաց մարդիկ՝ այրեր՝ սև հագած,
Ճերմակ շքեղ փողկապներով, պատվո շղթաներով,
Ցերկար սրերով, յերկար դեմքերով,
Անցնում են յեռուն հրապարակից
Դեպի քաղաքապետության տունը,
Ուր կայսերի արձանները
Պահակ են կանգնած գավազանով և սրով։
Վոչ շատ հեռու, տների մի շարքի առաջ,
Ուր փայլում են լուսամուտներ,
Ցեվ կան խուզված թմբիներ,
Զբոսնում են մետաքս հագած աղջիկներ,
Նուրբ մարմիններ, ծաղիկ դեմքեր՝

Համեստորեն յերերված սև գլխարկներով
Յեվ դուրս ընկած վոսկեգանգուր մազերով։
Պատանիներ գույնզգույն, սպանիական հագուստով,
Գոռոզաբար անցնում են և աչքով անում։
Տարիքավոր կանայք
Սև, հնաձև հագուստով,
Յերգարաններ, վարդարաններ ձեռքերին,
Շտապում են ծանրաքայլ
Դեպի մեծ մայր տաճարը՝
Զանգակների ղողանջի
Յեվ յերգեհոնի մրմունջների տակ։

Ինձ էլ դյութում է հեռավոր ձայների
Կախարդական յերկյուղը.
Անվերջ տենչանք, խոր թախիծ
Սողոսկում են իմ սիրտը,
Հազիվ բուժված իմ սիրտը.
Ինձ թվում է թե իմ սրտի վերքերը
Համբուրում են ջերմ սիրելի շրթունքներ
Յեվ արնոտում են նորից։
Տաք ու կարմիր կաթիլներ
Դանդաղորեն վար են ծորում,
Ընկնում մի հին շենքի վրա, ներքևում,
Խոր, ընդծովյա քաղաքում,
Մի բրգաձև տան վրա,
Վոր անմարդ է, թախծալի։
Միայն ցածի պատուհանում
Մի աղջիկ է լուռ նստած,
Յեվ գլուխը թևին հենած,
Ինչպես մի խեղճ ու մոռացած վորբ մանուկ.
Ճանաչում եմ քեզ, մոռացված խեղճ մանուկ։

Յեվ այդպես խոր, ծովի տակը,
Պահվել էյիր ինձանից՝
Դու մանկան պես քմահաճ,
Յեվ այլևս չես կարող վեր բարձրանալ.
Նստած էյիր անհայտ՝ օտար մարդկանց մեջ,
Յերկար-յերկար ժամանակ.
Մինչ յես, հոգիս լի թախծությամբ,
Յերկրի վրա քեզ եմ փնտրում,
Քեզ՝ մշտապես իմ սիրած,
Վաղուց կորած,
Յեվ վերջապես գտնված։

Յես քեզ գտա, ահա դիտում եմ նորից
Քաղցր դեմքդ,
Հավատարիմ ու խելացի աչքերդ.
Քո սիրելի ծիծաղը,
Յեվ այլևս քեզանից չեմ բաժանվի
Ու գալիս եմ ցած քեզ մոտ,
Թևերս ահա տարածած՝
Նետվելու յեմ քո կրծքին։

Բայց ճիշտ պահին
Վոտս բռնեց նավապետը
Յեվ ինձ քաշեց նավի յեզրից
Յեվ կոչեց սուր ծիծաղելով դժկամած,—
«Դոկտոր, ինչ է, սատանան է մեջդ մտել»։

11

ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ

Կեցցե՛ր դու ծովի քո խորության մեջ.
Խելագար յերազ.
Դու, վոր յերբեմն՝ բազում գիշերներ՝
Հեզծ յերջանկությամբ տանջել ես սիրտս,
Իբրև ծովային ուրվական՝ հիմա,
Նույնիսկ այս պայծառ օրն, ինձ տանջում ես.
Կեցցե՛ր ներքևում ընդմիշտ,
Յեվ յես կնետեմ ներքև
Իմ մեղքերն ու իմ տանջանքներն ամբողջ,
Յեվ խեղկատակի գլխարկն հիմարության,
Վոր վաղուց գլխիս վրա զնգում է,
Յեվ սառն ու վողորկ շապիկը օձի
Կեղծավորության,
Վոր շատ ժամանակ պատել է հոգիս,
Անառողջ հոգիս,
Աստվածուրաց և հրեշտակուրաց
Հույժ դժբախտ հոգիս.
Ե հե՛յ, հե՛յ, փչում է ահա քամին.
Առագաստները շտապ պարզեցեք.
Նրանք փողփողում են և ուռչում.
Աղետավոր և լուռ մակերեսով
Սուրում է նավը.
Յեվ հրճվում է իմ ազատված հոգին.

12

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

Զենիթում կանգնած եր արևը,
Ճերմակ ամպերով պատած՝
Լուռ եր ծովը.
Յես պառկած եյի նավի ղեկի մոտ՝
Մտածկոտ, յերազուն և կիսարթուն.
Յեվ անուրջի մեջ տեսա Քրիստոսին,
Աշխարհի փրկչին՝
Փողփողուն ճերմակ հագուստով.
Շրջում եր նա ահեղ մեծությամբ
Ցամաքի և ծովի վրա.
Նրա գլուխը հասնում եր յերկինք,
Յեվ տարածել եր ձեռներն օրհնությամբ
Ցամաքի և ծովի վրա.
Յեվ իր կրծքում իբրև սիրտ
Նա արևն ուներ,
Բոցակարմիր արևը.
Յեվ բոցակարմիր այդ արև սիրտը
Իր գթության ճառագայթները,
Իր սիրելի, յերջանկացնող,
Լուսավորող և ջերմացնող լույսը
Թափում եր յերկրի և ծովի վրա.

Զանգակների ղողանջները հնչում,
Յեվ քաշում եյին, ինչպես կարապ՝
Սահող նավը ժապավենով վարդագույն.

Քաշում եյին հանդիսավոր դեպի ափ,
Ուր ապրում են մարդիկ, շքեղ
Բարձրակառույց քաղաքում։

Ո՛վ հրաշալի խաղաղություն,
Որքան լուռ էր քաղաքը,
Որքան հանդիստ՝ խուլ աղմուկը
Շաղակրատ և հեղձուցիչ արհեստների։
Մաքուր, հնչեղ փողոցներով
Շրջում եյին մարդիկ, ճերմակ հագնված,
Ու ձեռներին արմավենու ոստիկներ։
Նրանք միմյանց հանդիպելիս
Նայում եյին մտերմաբար, քնքշորեն
Յեվ անձնվեր անհուն սիրով
Իրար ճակատ համբուրում.
Հառում եյին աչքերն իրենց դեպի վեր.
Դեպի փրկչի արև սիրտը,
Որ իր գվարթ, քավիչ կարմիր արյունը
Ծորում եր վար.
Յեվ նրանք յերջանկացած ասում եյին գոհությամբ
«Փա՛ռք քեզ, Հիսուս-Քրիստոս»։

Այս տեսիլը յեթե ինքդ ստեղծեյիր,
Ի՞նչ կտայիր դրա համար,
Ո՛վ պարոն,
Դու, որ գլխով ու ոտներով շատ թույլ ես
Յեվ հավատքով քո՝ ուժեղ։
Դու յերրորդությունը հարգում ես պարզամտությամբ,
Յեվ ամեն օր համբուրում ես բարերարուհուդ
Շնիկը, խաչն ու թաթերը,
Յեվ կեղծավորությամբ
Դարձել ես դու պալատական խորհրդական, արդարության
խորհրդական

Յեվ վերջապես պետական խորհրդական՝
Այն բարեպաշտ քաղաքում,
Ուր ծաղկում են ավազը և հավատքը,
Յեվ սրբազան Շպրեյի ջուրը
Մաքրում է հոգիներն և մուգ թեյը պարզեցնում։
Այս տեսիլը յեթե ինքդ ստեղծեյիր,
Սիրելիս,
Բարձր տեղեր կտանեյիր վաճառքի.
Քո կիսաբաց աչքերով փափուկ դեմքը
Կլուծվեր յերկյուղածությամբ խոնարհության մեջ.
Յեվ նորին պայծառություն տիրուհին
Բերկրալից ու տեսլացած,
Հափշտակված,
Քեզ հետ ծունր կդներ և կաղոթեր,
Նրա աչքերն յերջանկությամբ փայլելով
Կխոստանային քեզ ռոճիկի հավելում՝
Պրուսական հարյուր տալեր.
Յեվ դու ձեռքերդ ծալած՝ կթոթովեյիր
«Փա՛ռք քեզ, Հիսուս-Քրիստոս»։

ՅԵՐԿՐՈՐԴ ՇԱՐՔ

1

ՎՈՂՋՈՒՅՆ ԾՈՎԻՆ

Թալատտա, Թալատտա...
Վողջույն քեզ, ծով հավերժական,
Վողջույն քեզ, ծով, բյուրապատիկ,
Ցնծուն սրտից.
Վողջունեցին յերբեմն ինչպես հունական բյուր
Սրտերն կռվող փրկանքի դեմ,
Հայրենաբաղձ․ հույն սրտերը հոչակավոր։

Ալիքները ծփում էյին,
Ծփում էյին ու մռնչում,
Արևն շռայլ ցած եր թափում
Իր խաղացող լույսերն վարդի,
Յեվ ահարեկ ճայերն հեռու էյին թռչում
Բարձրաղաղակ,
Դոփում էյին նժույգները. վահանները շաչում էյին,
Յեվ լսվում եր հեռվում իբրև հաղթական կոչ —
Թալատտա, Թալատտա...

Վողջույն քեզ, ծով հավերժական,
Հայրենական բարբառի պես շշնջում են ջրերը քո,
Իմ մանկության յերազներն են կարծես շողում
Ալիքներիդ վրա ծփուն,
Յեվ պատմում ե հիշողությունս ինձ կրկին —
Բոլոր շքեղ իմ խաղալիքների մասին,
Յեվ ծննդյան բոլոր պայծառ նվերների,
Բոլոր կարմիր իմ բուստածառերի մասին,

Յեվ իմ վոսկյա ձկնիկների, մարգրիտների, խեցիների,
Վոր պահում ես խորհրդավոր
Ներքևում ջինջ ու բյուրեղյա քո տանդ մեջ։

Ո՜, վորքան եմ ոտարության մեջ տանջվել յես
Մի թառամած ծաղկի նման,
Բուսարանի մի թիթեղյա տուփում ընկած՝
Իմ կրծքի մեջ սիրտս եր այդպես։
Նստած էյի կարծես թե յես ձմեռն յերկար,
Իբրև հիվանդ ու հիվանդի սենյակում մութ,
Այժմ թողնում եմ այն հանկարծ,
Շլացուցիչ դեմս ե շողում
Արեգակով զարթած գարունը զմրուխտյա,
Ու ծառերի ծաղիկներն են շրշում ճերմակ,
Մատաղ ծաղկունքն են նայում ինձ՝
Բուրումնալից իրենց աչքերով գույնզգույն,
Վողջը բուրում, և շշնջում, և ժպտում ե,
Յեվ յերկնքում թռչուններն են ահա յերգում —
Թալատտա, Թալատտա..

Դու քաջ ու նահանջող իմ սիրտ,
Վորքան հաճախ, ու դառնությամբ հաճախ այնքան,
Քեզ նեղեցին բարբարոս կանայքն հյուսիսի,
Խոշոր հաղթական աչքերով,
Այրող սլաքներ նետեցին,
Ու խոսքերի սուր թրերով
Ուզում էյին կուրծքս պատռել,
Բևեռագիր նամակներով միշտ ջախջախում էյին նրանք
Իմ ուղեղը խեղճ ու թմրած.
Վահանս զուր էյի պահում,
Սլաքները սուլում էյին ու հարվածները ճարճատում,
Յեվ հյուսիսի վայրագ կանայք
Մինչև ծովը քշեցին ինձ,
Յեվ շունչ առած, ազատ, ծովն եմ վողջունում յես,
Սիրելի ծովն ազատարար.
Թալատտա, Թալատտա...

2

ՓՈԹՈՐԻԿԸ

Խեղդիչ կերպով փոթորիկն է կախվել ծովում.
Ամպերի սև պատի միջից
Փայլատակում է կայծակը սլաքավոր
Շուտ փայլելով, չքանալով
Ինչպես կատակ մի գլուխից Կրոնիոնի։
Յեվ մոլեգնած ու ալեծուփ ջրի վրա
Վորոտներն են շաչում հեռվում,
Նժույգներն են ցատկում ճերմակ ալիքների,
Վորոնց ինքը Բորեասն է սիրել անձամբ
Երիխտոնի հրապուրիչ զամբիկների հետ միասին։
Յեվ թռչկոտում են ահարեկ հավքերն ծովի,
Վոնց Ստիքսի վրա ստվեր—դիակները,
Վորոնց Քարոնն ինքը մերժեց գիշերային իր մակույկից։

Խեղճ, ուրախ նավ,
Վտանգավոր պար ես պարում դու գնալով.
Եոլոսն ուղարկում է նրան յերաժիշտներին իր կոյտառ,
Վորոնք հնչում են մոլեգին ուրախ շուրջպար.
Մեկը սուլում, մյուսը փչում,
Արձակում է յերրորդը խուլ ու բամբ ձայներ,
Յեվ ղեկի մոտ նավարարը կանգնած շվար
Նայում է միշտ կողմնացույցին,
Այդ դողդոջուն հոգուն նավի,
Յեվ յերկինք է պարզում ձեռներն աղերսագին.
«Ո՛, փրկիր ինձ, Կաստոր, ով դու հեծյալ հերոս,
Յեվ դու կռփամարտ Պոլիդեք»։

3

ՆԱՎԱԲԵԿՅԱԼԸ

Յեվ հույսեր և սեր—վողջը խորտակված.
Յեվ յես նման հիմի մի դիակի,
Վորին վորոտալով ծովը դուրս է նետել,
Ընկել եմ ափին,
Ամայի ու լերկ խոնավ ափին։
Իմ առաջ ծփում է անապատը ջրի,
Իմ յետև՝ թախիծ, թշվառություն,
Ինձ վրա՝ ամպերը, և գորշ, և անձև
Աղջիկները ոդի,
Վորոնք մշուշյա սափորներով իրենց
Ջուր են քաշում ծովից,
Յեվ տանջանքով քաշում, քաշում են նրանք
Ու ծովը թափում նորից.
Մի տաղտկությամբ լի ու բիրտ զբաղմունք,
Յեվ, ինչպես կյանքն իմ, անարդյունք։

Ալիքներն աղմկում, ճչում են ճայերը,
Ու ներշնչում են ինձ հուշերս հին,
Մոռացված յերազներ, հանգած պատկերներ
Քաղցր ու տանջալի, յելնում են վեր։

Մի կին է ապրում հյուսիսում,
Սիրուն կին, գեղեցիկ արքայորեն,
Նոճու պես հասակը նրբին
Պարուրում է տարփանքոտ մի զգեստ,

Ու թուխ զանգուրները նրա
Ցերանելի գիշերվա նման
Հյուսապսակ գլխից թափվելով
Ողակում են յերազուն թովչությամբ
Նրա դեմքը և քաղցր, և գունատ։
Ցեվ քաղցր դեմքից դժգունակ
Փայլում է մի աչք մեծ, զորեղ,
Վորպես սև, մի սև արեգակ։

Ով դու սև արեգակ, ինչ հաճախ
Խմել եմ յես քեզնից հափշտակված
Խենթ վոգևորության այրող բոցեր,
Կանգնել դեմդ դողդոջ հուրով հարբած.
Ապա քո հպարտ շուրթերի շուրջ
Ծածկվել է քաղցր աղաչու մի ժպիտ։
Ցեվ հպարտ շուրթերդ շնչել են խոսքեր—
Քաղցր՝ ինչպես լույսը լուսնի,
Քնքուշ՝ ինչպես վարդի բույր.
Ցեվ վերանում եր իմ հոգին,
Ցեվ թռչում եր ինչպես արծիվ, դեպի վեր, դեպի յերկինք։

Լռեցեք, ալիքներ ու ճայեր.
Բոլորը անցան, հույս, յերջանկություն,
Ցեվ հույսեր, և սեր. գետնին եմ ընկած,
Ցես՝ նավաբեկ մի մարդ,
Ցեվ բոցավառ դեմքս թաղում եմ այստեղ՝
Ավազի մեջ թաց...

4

ԱՐԵՎԱՄՈՒՏԸ

Արևը չքնաղ
Իջել է հանդիստ վար՝ խորքը ծովի,
Մութ գիշերն արդեն գունավորել է
Ջրերը ծփուն.
Բայց վերջալույսը
Նրանից իր վոսկի լույսերն է սփռում.
Ցեվ կոհակների ուժը մռնչուն
Ափերն է մղում ալիքներն ճերմակ,
Վորոնք գվարթուն, ցատկում են արագ,
Ինչպես բրդառատ գառների մի հոտ,
Վոր հովիվը յերգով ամեն իրիկուն
Քշում է դեպ տուն։

«Ո՜, արեգակը սիրուն է ինչքան»
Ասաց ինձ յերկար լռությունից հետո բարեկամը իմ,
Վոր զբոսնում եր ինձ հետ ծովափին.
Ցեվ կես կատակով ու կես թախծով
Համոզում եր ինձ, թե արեգակը կին է գեղեցիկ,
Վորը զառամյալ աստծու հետ ծովի
Ամուսնացել է ակամայից։
Թափառում է նա ցերեկով ուրախ,
Բարձր յերկնքում,
Հագած ծիրանի ադամանդափայլ.
Ամեն տեղ սիրո և հիացմունքի առարկան է նա,

Աշխարհի բոլոր արարածների,
Աշխարհի բոլոր արարածներին խինդ է տալիս նա
Հայացքի լույսով, ջերմությամբ իրա.
Իսկ յերեկոյան ստիպված է նա
Կրկին անափոփ յետ վերադառնալ
Խոնավ տունն իրա, դեպի զառամյալ
Իրա ամուսնու բազուկներն ամա.

«Հավատա»—հարեց իմ բարեկամը
Յեվ ծիծաղեց նա, հառաչեց, ապա կրկին ծիծաղեց—
Այնտեղ, ներքևում վարում են նրանք ամենաքնքուշ
Ամուսնական կյանք, քնում կամ վիճում,
Այնպես վոր ծովը յեռում է վերում.
Յեվ ծովայինը այդ ալիքների աղմուկների մեջ լսում է՝
Ինչպես հանդիմանում է ծերուկն իր կնոջ.
«Դու տիեզերքի բոլորակ պոռնիկ,
Ծառագայթատիփ,
Բացավառված ես ամբողջ որը դու ուրիշի համար,
Իսկ գիշերն ինձ մոտ սառն ես ու հոգնած»,
Յեվ անարգանքից հետո այսպիսի,
Հասկանալի յե հպարտ արևը թափում է դառը
Արցունքի հեղեղ և լողում է իր թշվառությունը.
Վողբում է այնպես, վոր աստվածն ծովի
Հանկարծ հուսահատ անկողնից ցատկում
Յեվ արագ ծովի յերեսն է յելնում,
Վոր զգաստություն ու օդ ձեռք բերի.

Յեվ անցած գիշեր տեսա յես այդպես,
Մինչ կուրծքը ծովից դուրս եր յեկել նա,
Դեղին ավիլից մի թիկնոց հագած,
Շուշանի ճերմակ գիշերագատակ,
Դեմքը թորշոմած.

Ե

ԾՈՎԱՀԱՐՍԵՐԻ ՅԵՐԳԸ

Իրիկվա դեմ դժգունում է ծովն ավելի,
Յեվ մեն մենակ իր հոգու հետ
Նստած է լերկ ափին մի մարդ,
Յեվ մահվան պես սառն հայացքով նայում է վեր,
Դեպի հեռու, մահվան պես սառն կամարն յերկնի,
Դեպի հեռու ծովը ծփուն—
Յեվ տարածուն ծովի վրա
Վորպես ոգե նավարկողներ հառաչներն են ձգվում նրա,
Ու յետ դառնում տխուր-տրտում.
Փակված եյին գտել նրանք սիրտն այն,
Ուր վոր խարսխվելու եյին ձգտում.
Յեվ հառաչում է նա այնպես, վոր ճայերը
Ահով իրենց ալագայլին բնիկներից
Նրա շուրջն են ճախրում խմբով.
Յեվ ասում է նա ծիծաղով.

«Ով սևավոր, դուք թռչուններ,
Ճերմակաթև, ծովի վրա ճախրող ճայեր,
Կես կտուցով ծովի աղի ջուր խմողներ,
Ձկնաձեթով, դուք, ով փոկի միս լափողներ,
Դառն է ձեր կյանքն այնպես, ինչպես անունը ձեր.
Բայց բախտավոր յես, քաղցը եմ վայելում լոկ,
Ճաշակում եմ միայն քաղցր բույրը վարդի,
Լուսնի լույսով սնված, սոխակի նուրբ հարսի,

Վայելում եմ քաղցր ավելի՝ խմորեղեն
Սերուցքով լի,
Ճաշակում եմ և ամենքից քաղցրը՝
Սերը և փոխադարձ քաղցրը սերը։
«Սիրում է ինձ, սիրում է ինձ կույսը սիրուն,
Այժմ կանգնած է նա իր տան վերնահարկում,
Եվ նայում է մթության մեջ դեպի փողոց,
Եվ ականջում, տենչում է ինձ—անտարակույս.
Իզուր է նա նայում չորս կողմ և հառաչում,
Եվ հառաչով իջնում է նա դեպի պարտեզ,
Շրջում քաղցր բույրերի ու լույսերի մեջ,
Ծաղիկների հետ է խոսում, պատմում նրանց
Թե ինչպես յես սիրելի յեմ,
Ու սիրարժան—անտարակույս։
Հետո քնած, անկողնի մեջ յերազում է
Պատկերացնում յերանությամբ իմ կերպարանքը թանգագին,
Մինչև իսկ վաղ առավոտյան նախաճաշին
Թարմ թխվածքի վրա փայլուն
Տեսնում է իմ դեմքը ժպտուն
Եվ ուտում է նա այդ սիրուց —անտարակույս։

Այսպես փքվում, պարծենում է.
Մինչ այդ ճայերն արձակում են կռինչ ու ճիչ,
Վորպես հեգնող, սառը քրքիջ։
Մայրամուտի մշուշները յելնում են վեր,
Մանուշակագույն ամպերից խորհրդավոր
Դուրս է նայում խոտի պես դեղին լուսնկան,
Մռնչալով բարձրանում են ալիքները հուզված ծովի
Եվ բարձրացող հուզված ծովից
Թախծոտ, ինչպես հողմի հոսանքը շշնջուն,
Խուլ հնչում է ծովահարսերի յերգն անուշ
Ջրի սիրուն ու կարեկից աղջիկների։
Ամենքից շատ լսելի յե քաղցրը ձայնը
Փելսի այն արծաթավուն ամուսինի.
Հառաչում են, յերգում նրանք։

«Ով պարծենկոտ, հիմար, հիմար,
Դու վշտահար,
Սպանված են վողջ հույսերդ,
Ցանցառ մանուկները սրտից,
Եվ, ա՛խ, սիրտդ Նիոբի պես
Քարացել է արդեն թախծից,
Եվ գլխիդ մեջ սկսվում է գիշերը մութ,
Եվ նրա մեջ ցնցվում են սուր կայծակները խելագարի,
Եվ պարծենում ես դու ցավից,
Ո՜վ պարծենկոտ, հիմար, հիմար,
Դու համառ ես, ինչպես պապդ,
Տիտանը մեծ, վորը կրակը յերկնային
Աստվածներից գողանալով տվեց մարդկանց.
Եվ անգղներից չարչարված, գամված ամուր բիրտ ժայռերին.
Հոխորտում էր Ոլիմպի դեմ, հոխորտում էր ու հառաչում,
Այնպես, վոր մենք լսում էյինք խոր ծովի մեջ,
Եվ մոտ էյինք գալիս նրան մխիթարիչ մեր յերգերով։
Ո՜վ պարծենկոտ, հիմար, հիմար,
Դու ավելի անճար ես դեռ,
Ու խելացի կլիներ, թե հարգեյիր դու աստվածներին,
Եվ կրեյիր համբերությամբ թշվառության ծանրը բեռը,
Եվ կրեյիր համբերությամբ այնքան յերկար, այնքան յերկար,
Մինչև Ատլասն ինքը իրա համբերությունը կորցնե,
Ծանր աշխարհն իր ուսերից վար շպրտե
Հավերժական գիշերը մութ»։

Այսպես հնչեց ծովահարսերի յերգն անուշ,
Ջրի սիրուն ու կարեկից աղջիկների.
Մինչ բարձրաձայն ալիքները սթափեցրին այնտեղ նրան,
Ամպերի տակ մտավ լուսինը շողշողուն,
Եվ հորանջեց գիշերն ահա.
Ու յես յերկար նստած մթնում լալիս էյի

6

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԱՍՏՎԱԾՆԵՐԸ

Պայծառ լուսընկա՛, քո լույսերի մեջ
Հասուն վոսկու պես ծովն ե շողշողում.
Կարծես վաղորդյան իր գրավչությամբ
Հեռու ափերին ընկած ե որվա պայծառությունը։
Յեվ բաց կապուտակ անամպ յերկնքում ծածանվում են լուռ
Ամպերը ճերմակ, վորպես
Լուսավոր մարմարից կերտած
Հսկա պատկերներ մեծ աստվածների։

Վոչ, վոչ, ամպեր չեն.
Նրանք Հելլասի աստվածներն են այն,
Վորոնք խնդությամբ յերբեմն իշխել են այդ յերկրի վրա.
Բայց այժմ նկուն և մեռած,
Վորպես հսկա ուրուներ անցնում են ահա
Կես գիշերային մթին յերկնքով։
Զարմացած, շշմած և տաարոտի լուռ դիտում եմ յես
Ոգեղեն ու մեծ այդ պանթեոնին,
Լուռ, հանդիսավոր այդ հսկայական
Կերպարանքներին։
Այն գեղինն ահա Կրոնիոնն ե, յերկնքի արքան,
Ձյունի պես ճերմակ գանգուրներ ունի.
Այն փառապանծը, գանգուրներ ցնցող Վոլիմպոսն ե,
Մարած կայծակը բռնած իր ձեռքում.
Դեմքին թախիծ կա ու դժբախտություն,
Յեվ միշտ իր նախկին հպարտությունը։

Լավ ժամանակ եր, ով Զևս,
Յերբ վոր դու յերկնային կերպով հրճվում եյիր միշտ.
Պատանիներով, նիմֆաներով քո, հեկատոմբներով,
Բայց աստվածներն էլ չեն կառավարում հավիտենապես։
Նորերն հներին միշտ խորտակում են,
Ինչպես վոր ինքդ յերբեմն ընկճեցիր
Ալեոր հորդ, և տիտանային մորեղբայրներիդ։

Ո՛վ դու հայրասպան Յուպիտեր,
Անգամ ճանաչեցի քեզ, քեզ՝ գոռոզ Հերա,
Հակառակ քո վողջ նախանձոտ վախին,
Ուրիշը շահեց քո գավազանը,
Յեվ այժմ դու չես յերկնի թագուհին.
Յեվ քո մեծ աչքը սառել ե,
Յեվ քո թևերդ շուշան անուժ են հիմա,
Յեվ քո վրեժը չի հասնի յերբեք
Կույս աստվածածնին
Յեվ հրաշագործ վորդուն աստուծո։
Քեզ ճանաչեցի, Աթենաս Պալլաս,
Վահանով և քո իմաստությամբ դու չկարողացա՞ր
Արգելել մահը աստվածների.
Քեզ ես տեսա, ով Աֆրոդիտե,
Յերբեմնի վոսկյա, այժմ արծաթյա,
Թեպետ պճնում ե քեզ միշտ գոտին հրապույրը դեռ,
Բայց ահ եմ զգում քո գեղեցկությունից.
Յեվ թե քո բարի մարմինն ուզեր ինձ՝ բախտ տալ
Ինչպես վոր այլ հերոսների,
Յես այդ յերկյուղից կմահանայի։
Վորպես դիերի աստվածուհի յես ներկայանում ինձ
Վինուս Լիբիտինա,
Չի նայում էլ քեզ այնտեղ
Արեսն ահեղի,
Տխուր ե նայում Ֆեբ Ապոլոնը—
Յերիտասարդը։ Լռել ե նրա քնարը,
Վորը մեծ աստվածների խրախճանքներին հնչել ե զվարթ,

Բայց ել ավելի տխուր է նայում Հեփեստոսն ահա.
Արդարև կաղն այդ այլևս յերբեք
Ել չի ընկնելու գիրկը Հերայի,
Յեվ խնջույքի մեջ չի մատուցելու
Նեկտարն անմահական։ Վաղուց է մարել
Քրքիջը անմար՝ այդ աստվածների։

Աստվածներ, բնավ չեմ սիրել յես ձեզ,
Վորովհետև ինձ անհաճելի յեն հույները բոլոր,
Յեվ ատելի յեն հռոմեացիք։
Բայց սուրբ գթությամբ, կարեկցությամբ դառն
Լցվում է սիրտս,
Յերբ նայում եմ ձեզ այժմ, վերևում,
Լքված աստվածներ,
Մեռած, գիշերով շրջող ստվերներ,
Մշուշի պես թույլ, վորոնց զեփյուռն է հալածում անգամ.
Յեվ յերբ խորհում եմ, թե ինչպես յերկչոտ ու ոդային են
Աստվածները այն, վոր ձեզ հաղթեցին,
Նոր իշխողները, աստվածներն տխուր,
Չարախինդ, խոնարհ, վոչխարի մորթով,
Ո՜, այն ժամանակ պաշարում է ինձ թախծալից մի քեն,
Ուզում եմ փշրել տաճարները նոր,
Կռվել ձեզ համար, ով հին աստվածներ,
Ձեզ և ձեր բարի ու ամբրոսական իրավունքների.
Ուզում եմ ձեր վեհ, նորից կառուցված
Զոհի ծուխով լի խորանների դեմ
Չոքել, աղոթել,
Յեվ աղաչանքով ձեռներս պարզել,
Վորովհետև դուք, միշտ, հին աստվածներ,
Առաջ, մարդկային կռիվների մեջ
Անցել եք հաճախ կողմը հաղթողի.
Մարդը ավելի վեհանձ է, քան դուք
Յեվ աստվածների կռիվների մեջ արդանցնում եմ յես
Ձեր կողմը, ով դուք պարտված աստվածներ։

Այսպես խոսեցի և նկատելի կարմրեցին վերում
Կերպարանքները դժգույն ամպերի,
Ու նայեցին ինձ մեռնողների պես,
Ցավից այլակերպ և անհայտացան.
Լուսինը նույնպես մտավ ամպի տակ,
Վորը ավելի սևացավ կարծես,
Մոլեգնորեն բարձրացավ ծովը,
Հաղթականորեն յերկինք դուրս յեկան
Աստղերն մշտավառ։

7

ՀԱՐՑԵՐ

Ծովափին, գիշերով, մոլեգնած ծովափին.
Կանգնած է պատանի մի մարդ.
Կուրծքը լի վշտերով. գլխի մեջ կասկածներ,
Հարցնում է Թախիծով ալիքներին.

Ո՜, դուք լուծեցեք առեղծվածը կյանքի,
Առեղծվածը հին, տանջալից —
Ցեվ վորի վրա շատ գլուխներ են հոգնել
Հիերոգլիֆյան գտակներով,
Գլուխներ չալմայով ու սև խաչգտակով,
Գլուխներ կեղծամով և հազար-հազար այլ
Քրտնաթոր. մարդկային գլուխներ խեղճ.—
Ասացեք, թե մարդը ինչ է նշանակում,
Վորտեղից է յեկել, գնում է ուր,
Ու այնտեղ վոսկեղեն աստղերի վրա ով է բնակվում.
Ալիքներն մշտական մրմունջն են մրմնջում,
Ամպերը թռչում են ու փչում է քամին,
Աստղերը փայլում են սառնությամբ, անտարբեր
Հիմարն ըսպասում է պատասխանի.

8

ՍՖԻՆՔՍ

Արևմուտքից սավառնում է մի թռչուն,
Գնում է դեպի արևելք,
Արևելյան այգիների հայրենիքը,
Ուր համեմներն են աճում ու բուրում.
Արմավներն են մրմնջում, աղբյուրներն են զով սփռում,
Ցեվ յերգելով թռչում է հրաշալի մի թռչուն.

«Կույսը սիրում է նրան, կույսը սիրում է նրան,
Ցեվ կրում է պատկերը փոքրիկ սրտի մեջ իրա,
Կրում է նա քաղցրությամբ ու թագուն.
Ցեվ ինքն էլ այդ չգիտե.
Բայց յերազում կանգնած է կույսի դեմ,
Կույսը խնդում ու լալիս է, համբուրում է ձեռները,
Ցեվ կանչում է անունը.
Ցեվ կանչելով զարթնում է, ընկնում է կույսն ահարեկ,
Ցեվ զարմացած շփում է իր գեղեցիկ աչքերը—
Կույսը սիրում է նրան, կույսը սիրում է նրան»։

Կայմին հենված, վերևում, ծածկի տակ,
Կանգնեցի յես. լսեցի յերգը թռչնի.
Արծաթարաշ ձիերի պես սև-կանաչ
Ցատկում եյին ալիքները փրփրարաշ,
Կարապների խմբերի պես նավելով անցնում եյին
Առագաստները հելգոլանդցիների՝

Նավակները քաշարի՝ ջինջ Հյուսիսային ծովի.
Վերևում իմ հավերժական կապույտում
Ծփում էյին ամպերը,
Ցիվ շողում եր հավերժական արևը,
Ցերկնի վարդը հրափայլ,
Վոր հրճվանքով ցոլանում եր ծովի մեջ,
Ցիվ իմ սիրտը և յերկինքը և ծովը
Արձագանգում են ահա—
«Կույսը սիրում է նրան, կույսը սիրում է նրան»։

ԾՈՎԱԽՏ

Հետկեսորյա ամպերը գորշ
Ընկղմվում են խոր ծովի մեջ,
Վոր նրանց դեմ բարձրանում է մռայլաբար
Ու մեջընդմեջ նավն է սահում։

Ցես ծովախտով հիվանդ՝ նստած դեռ կայմի մոտ,
Դիտողություններ եմ անում յես իմ մասին,
Հին մոխրագույն դիտողություն,
Վորն արել է հայր Ղովտն արդեն,
Ցերբ վայելեց շատ բարիքներ,
Ու հետո չար, վատ վիճակի հանդիպեց նա։
Մտածում եմ յերբեմն յես հին պատմությունների մասին,
Թե ինչպես այն խաչակիրներն հին որերի,
Փոթորկալի ծովագընացության պահին,
Համբուրում էյին յերկյուղած սուրբ պատկերը կույս Մարիամի։
Ինչպես ասպետները հիվանդ, այսպիսի մի տագնապի մեջ
Իրենց տիկնոջ ձեռնոցն առնում,
Շրթունքներին էյին սեղմում, մխիթարվում։
Բայց յես նստած ծամում եմ դեռ տաղտկությամբ լի,
Մի հին տառեխ—ագի մխիթարիչը այդ
Իմ նեղության ու տխրության։

Մինչ այդ նավը մաքառում է
Ալիքների հետ կատաղի,
Պատերազմի նժույգի պես մերթ կանգնում է
Իր յետևի մասի վրա, ճարճատում է ղեկը նրա,
Մերթ ընկնում է նա գլխիվայր,
Ջրի անդունդը վոռնացող,
Ապա կրկին, ինչպես անհոգ սիրուց հոգնած,
Մտածում է պառկել
Հսկա ալիքների մռայլ կրծքին,
Վոր մոտենում է կատաղի մռնչոցով.
Յեվ հանկարծ մի հորդ, ամեհի ծովաջրվեժ
Ճերմակ գանգուրներով հոսում,
Ծածկում է ինձ փրփուրի մեջ։
Ա՜խ, ծփանքն այս, տատանումը, օրորումը
Անտանելի յե ինձ համար,
Իմ աչքերը դուրս են գնում ու վորոնում
Գերմանական ափը. ավաղ, ջուր է միայն,
Ջուր է դարձյալ, յերերուն ջուր։

Ինչպես ձմրան ճամփորդն հոգնած յերեկոյան
Յերազում է մի բաժակ թեյ, մտերիմ, տաք,
Գերմանական իմ հայրենիք,
Քո կարոտն է իմ կրծքի տակ։
Թող քացը քո հողը ծածկվի
Խենթությունով, հուսարներով, վատ յերգերով
Յեվ անիմաստ տրակտատով,
Վագրաձիերդ թող սնվեն
Վատ վարդերով՝ ուղտափշերի փոխարեն,
Թող քո ազնիվ կապիկներ
Սին արդ ու զարդով պարծենան,
Յեվ համարեն իրենց լավ, քան
Բոլոր ստոր, դանդաղաշարժ անասուններն յեղջյուրավոր,
Թող խխունջի ժողովը քո
Համարի ինքն իրեն անմահ,

Վորովհետև սողալով է առաջ գնում,
Թող ամեն որ ձայն հավաքի—
Պանրի վորդին արդյոք պանիր պատկանում է,
Յեվ դեռ յերկար խորհրդակցի—
Արդյոք ինչպես ազնվացնել վոչխարները յեգիպտական,
Վոր լավանա բուրդը նրանց,
Ու հովիվը կարողանա խուզել ինչպես
Բոլորն առանց, տարբերության։
Հիմարությունն ու անարդարությունը խոր
Ամբողջովին, ով Գերմանիա, քեզ ծածկեն թող,
Այնուհանդերձ տենչում եմ քեզ,
Վորովհետև ելք կայուն դու ցամաք ես։

10

ՆԱՎԱՀԱՆԳՍՏՈՒՄ

Բախտավոր է մարդն այն, վոր նավահանգիստ է հասել
Յեվ իր յետևն է թողել ծով ու փոթորիկ այնքան,
Յեվ այժմ տաք ու հանգիստ
Նստած է նա Բռեմենի ներքնահարկի գինետան։

Աշխարհն ինչպես մտերիմ և սրտագին է ցոլում
Հռոմեական բաժակում,
Միկրոկոսմոսը ինչպես արևոտ վար է հոսում
Պապակ սիրտը։
Ամեն բան տեսնում եմ յես բաժակում,
Պատմությունը հին ու նոր ազգերի,
Թուրքեր, հույներ, Հեգել, Գանս,
Յեվ անտառներ կիտրոնի, պահակների զորահանդես,
Բեռլին, Շիլդա, և Տունիս, և Համբուրգ,
Ամենքից առաջ սակայն պատկերը իմ սիրուհու,
Հրեշտակային գլուխը՝ Հռենոսի վառ գինու
Վոսկեփրփուր հատակում։

Ո՜, գեղեցիկ ես վորքան, ինչ գեղեցիկ սիրուհի,
Դու նման ես մի վարդի.
Վո՛չ Շիրազի վարդի պես,
Սոխակի հարսը չքնաղ, վոր յերգել է Հաֆըզը,
Վո՛չ Սարոնի վարդի պես՝
Գովաբանված ալ բոսոր մարգարեյի շուրթերով,

Բռեմենի գինետան վարդի պես ես,
Յեվ այդ է ծաղիկների ծաղիկը,
Հընանում է նա վորքան, այնքան ծաղկում է, փթթում,
Նրա բույրը յերկնային յերջանիկ է դարձրել ինձ,
Վոգևորել է ինձ նա, արբեցրել է
Յեվ յեթե մազերից իմ չբռներ
Գինեպանը Բռեմենի՝
Թավալգլոր կընկնեյի։

Հըրաշալի մարդ եր նա, նստում եյինք իրար մոտ,
Խմում, վորպես յեղբայրներ,
Խոսում եյինք մենք բարձր խորհրդավոր բաներից,
Յեվ հառաչում ու ընկնում միմյանց բազուկների մեջ,
Յեվ դարձրեց նա ինձ դեպի սիրո հավատքը վսեմ,
Խմեցի յես վոխերիմ թշնամիներիս կյանքին,
Ներեցի յես բոլոր վատ պոետներին,
Ինչպես վոր պիտի ներեն յերբեմն ինձ.
Բարությունից լաց յեղա, և վերջապես
Բացվեցին ինձ դռները փրկության,
Ու տասներկու առաքյալ, տակառները սրբազան,
Քարոզ եյին կարդում լուռ, վորը հասկանալի յեր
Բոլոր ժողովուրդներին։

Ի՜նչ մարդիկ են, ի՜նչ մարդիկ։
Աննշան են արտաքուստ, ու փայտեղեն հագուստով.
Նրանք ներքուստ ավելի գեղեցիկ են ու պայծառ,
Քան տաճարի ամենայն ղևտացիները հպարտ,
Քան Հերոդես արքայի թիկնապահները բոլոր,
Վոր պճնված են վոսկով ու հագել են ծիրանի.
Յես ասել եմ միշտ էլ այդ—
Վոր վո՛չ հասարակ մարդկանց,
Վո՛չ լավ ընկերության մեջ,
Ապրում եր միշտ շարունակ թագավորը յերկնային։

Փառք, փառք, շնչում են ինչպես
Բեթղեհեմի արմավի ծառերն բոլոր բուրավետ,
Ինչպես բուրում են ահա զմուռսները Հեբրոնի,
Հորդանանը մռնչում ու յերերում է խինդից,
Նույնպես հոգին իմ անմահ յերերում է,
Ու յես էլ դողդողում եմ նրա հետ, ու սանդուխքով
Դեպի վեր, դեպի լույս է դուրս բերում
Հիանալի այն մարդը՝ գինեպանը Բռեմենի։

Քաջ գինեպան Բռեմենի,
Դու տեսնում ես, տների կտուրներին նստած են
Հրեշտակները ահա. նրանք հարբած յերգում են.
Յեվ բորբ արևը վերում
Կարմիր, հարբած քիթ է մի,
Տիեզերական վոգու քիթ,
Յեվ այդ կարմիր քթի շուրջ
Պտտվում է ու դառնում հարբած աշխարհը հիմի։

11

ՎԵՐՋԵՐԳ

Ինչպես դաշտում հասկերն աճում են ցորենի,
Այդպ ս աճում և ծլում են մարդու հոգում
Խոհերն իր։
Բայց խոհերը քնքուշ սիրո աճում,
Ծաղկում են նրանց մեջ ինչպես արտում
Կապույտ, կարմիր ծաղիկները։

Կապույտ ու կարմիր ծաղիկներ.
Տրտնջացող հնձվորը ձեզ դուրս է նետում իբրև անպետք,
Ջախջախում է ձեզ ծաղրելով թակիչն փայտյա,
Անգամ ճամբորդը ընչազուրկ,
Վորին ձեր տեսքը կազդուրում, թարմացնում է,
Թափ է տալիս իր գլուխը,
Յեվ գեղեցիկ մոլախոտ է անվանում ձեզ,
Բայց գեղջկուհին,
Պսակահյուս,
Ձեզ հարգում է, քաղում է նա,
Ու զուգում է ձեզնով իր խոպոպները,
Յեվ շտապում այդպես զուգված պարահանդես,
Ուր հնչում են փողերը և ջութակները,
Յեվ կամ դեպի գիրքը անխոս,
Ուր ավելի սիրելի յե հնչում ձայնն իր սիրահարի,
Քան փողերն ու ջութակները։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատանեկական Տանջանքներ

եջ 8. «Տեսա յերազ մի անսովոր» — գրված է 1816 թվին, ուղղված է Յոզեֆային, դահիճի աղջկան, վորի մասին Հայնեն հիշատակում է իր մեմուարների մեջ։

եջ 12. «Սև փրակով...» — այս վոտանավորը, ինչպես և № 4 «եջ 13» և № 5 «եջ 14» վոտանավորները գրված են 1821 թվին և ուղղված են բանաստեղծի հորեղբոր աղջկան — Ամալիային, վորը նույն թվի օգոստոսի 15-ին ամուսնացավ։

եջ 16. Վերաբերում է դահիճի աղջկան՝ Յոզեֆային։

եջ 18. Յերջանկության կորուստի պատճառը սերն է դեպի մի «վատահամբավ, անպատիվ» մարդու աղջիկը։

եջ 19. Նույնպես վերաբերում է Յոզեֆային։

եջ 21. Նույնպես վերաբերում է Յոզեֆային։

եջ 25. Հայնեն հիշատակում է հերոսները ավազակային հայտնի վեպերի.— «Ռինալդո Ռինալդինի», «Որլանդո Որլանդինի» Խրիստիան Ավգուստ Վուլպիուսի վեպերի անուններն են, «Շին-դերհանո» հերոսն է Իգնաց Ֆերդինանդ Արնոլդի «Շինդերհանես» վեպի, «Կարլ Մոորը» Շիլլերի «Ավազակների» գլխավոր հերոսն է։

եջ 26. Մորտիմերը Շիլլերի «Մարիա Ստյուարտ» վողբերգության գործող անձերից մեկն է։ «Բարեկամ Հայնց»-ը մահվան ժողովրդական անունն է։

եջ 29. Նույնպես վերաբերում է Յոզեֆային։

Յերգեր

եջ 34. Հունական դիցաբանության մեջ հոռերը տարվա ժամանակների աստվածուհիներն էյին։

եջ 37. Ուղղված է Ամալիա Հայնեյին. գրված է 1819 թվին,

յերբ բանաստեղծը Համբուրգում իր գործերը վերջացնելուց հետո վերադարձավ Դյուսելդորֆ, համալսարան մտնելու համար նախապատրաստվելու:

ՌՈՄԱՆՍՆԵՐ

Եջ 49. Գրված ե Դյուսելդորֆում, 1819 թվին, յերբ Հայնեն նախապատրաստվում եր համալսարանի քննություններին, թեպետ և բանաստեղծն հայտարարում ե, թե գրել ե 1815 թվին, իր 16 տարեկան հասակում:

Եջ 61. Միննեզենգեր, գերմանական միջնադարյան սիրո յերգիչ:

Եջ 68, 69. Ուղղված ե Դյուսելդորֆի ոպերայի պրիմադոննա Կարոլինա Շտերնին:—Ռոլանդը, ֆրանսիական ազգային եպոսի հերոսը, վորը Գանելոնի դավաճանությամբ Ռոնցեվալի կիրճում թշնամիների հանկարծական հարձակման յենթարկվելով, սպանվեց:

Եջ 73. Ուղղված ե իշխան Ալեքսանդր ֆոն Վեստինշտայնին, վորի հետ Հայնեն ծանոթություն հաստատեց Բոննում, 1819-20 թվերին:

Եջ 74. Ուղղված ե Հայնեյի բարեկամ Շտրաուբեյին:

ՍՈՆԵՏՆԵՐ

Եջ 75, 77. Ավգուստ Վիլհելմ Շլեգել. գերմանական ռոմանտիկ դպրոցի հիմնադիր. հայտնի քննադատ. Բոննի համալսարանի պրոֆեսոր, դասավանդել ե Հայնեյին և խրախուսել նրա առաջին վոտանավորները:

Եջ 80. Հ. Ստր-ին սկզբնական վերնագիրը յեղել ե հետևյալը. «Հ. Շտրաուբեյին, յերբ յես նրա ժուռնալը՝ հին գերմանական արվեստի վերազարթման համար կարդացի». համեմատիր նախորդ ծանոթությունը, եջ 74:

ՖՐԵՍԿՈ ՍՈՆԵՏՆԵՐ

Եջ 81. Խրիստիան Սեթ. Հայնեյի մտերիմ բարեկամը:

ԼԻՐԻԿԱԿԱՆ ԻՆՏԵՐՄԵՑՑՈ

Այս վերնագիրը տրված ե այն մի խումբ վոտանավորներին, վորոնք նախքան «Յերգերի գրքը»-ի մեջ տեղավորվելը, լույս տեսան «Ալմանզոր» և «Ռատկլիֆ» վողբերգությունների հետ և տեղավորվեցին յերկուսի մեջտեղում:

Եջ 113. Գրված ե 1821 թվին, յերբ Ամալիա Հայնեն ամուսնացավ:

Եջ 114. Գրված 1821 թվին ուղղված Ամալիա Հայնեյին նույն կապակցությամբ:

Եջ 115. Գրված 1821 թվին, ուղղված Ամալիա Հայնեյին նույն կապակցությամբ:

ՎԵՐԱԴԱՐՁ

Եջ 203. Ֆուկե, գերմանական ռոմանտիկ դպրոցի հայտնի բանաստեղծներից մեկը: Հեկատե, սարսափելի տեսիլների աստվածուհին: Այստեղ ակնարկում ե Մյուլների հրատարակած «Հեկատե» ժուռնալը:

Եջ 214. Յերկյուղած ապաշխարող Վաշիստան ուներ մի աստվածային կով, աշխարհային բոլոր բարիքները պարգևելու կարողությամբ օժտված: Հնդկական Վիսվամիտրա թագավորը նախ խնդրանքով և ապա բռնությամբ փորձեց ձեռք բերել այդ կովը, վորի օգնությամբ, սակայն, տերը միշտ դիմադրում և հաղթում եր Վիսվամիտրային:

Եջ 216. Ամենայն հավանականությամբ ուղղված ե Ամալիայի կրտսեր քրոջ՝ Թերեզա Հայնեյին:

Եջ 234. Գրված ե 1826 թ. ուղղված Հայնեյի բարեկամ Ռուդոլֆ Խրիստիանին, վորը, հետո, համաձայն բանաստեղծի կտակի, պիտի լիներ նրա գրվածքների հրատարակիչը: Բայց Խրիստիանն առանց այս պարտականությունը կատարելու՝ մեռավ 1859 թվին:

Եջ 235. Նկատի յե առնված բանաստեղծի բարեկամ՝ լեհացի գրաֆ Յեվգենի ֆոն Բրիցան, վորը կաթոլիկ լինելով հանդերձ՝ Բեռլինի միակ կաթոլիկական Հեդվիգի յեկեղեցին չեր հաճախում:

Եջ 250. «Սալամանքա» անվան տակ թաքնված ե Գյոտտինգենի զբոսավայրը:

Էջ 251 «Սալամանքի» այսինքն Գյոտտինգենի։

Էջ 266. «Դոննա Կլարա» նյութը առնված է մասամբ բանաստեղծի բեռլինյան ապրումներից, բայց մեծ մասամբ Ֆուկեյի (համեմատիր «էջ 203») մի հայտնի ռոմանսից։

Էջ 275. «Ուխտագնացություն դեպի Քեվլար»—այս վոտանավորի առաջին հրատարակությունն ուներ հետևյալ ծանոթությունը.— «Վոտանավորի նյութը իմ սեփականությունը չէ, նա արդյունք է իմ Հռենոսյան հայրենիքից մնացած հիշողությունների։ Յերբ յես դեռ մի փոքր յերեխա եյի և Դյուսելդորֆի ֆրանցիսկյանների վանքում սովորում եյի, իմ կողքին նստում եր մի փոքրիկ յերեխա և հաճախ պատմում եր, թե ինչպես մայրը իրեն հետն առնելով տարել է Քեվլար, մի մոմեյեն վոտ է նվիրել և, թե ինչպես այդպիսով բուժվել է նրա հիվանդ վոտը։ Այդ յերեխային յես հանդիպեցի նորից լիցեյի բարձրագույն դասարանում, ուր նա ինձ հիշեցրեց, ծիծաղելով, իր պատմությունը հրաշքի մասին, և ավելացրեց բավական լրջությամբ, թե կուզեր այս անգամ աստվածամորը մի մոմեղեն սիրտ նվիրաբերել։ Հետո յես իմացա, վոր նա այդ ժամանակ տանջվում եր մի դժբախտ սիրով։ Բայց այնուամենայնիվ յերկար ժամանակ անհետացավ նա իմ տեսողությունից և հիշողությունից։ 1819 թվին, յերբ յես Բոննում ուսանում եյի և մի անգամ Հռենոսի վրա Գոդեսբերգի կողմերն զբոսնում եյի, լսեցի հեռվից Քեվլարի հանրածանոթ յերգերը. նրանցից ամենաընտիրն ուներ այս յերկարաձիգ հանգերգը «Օրհնյալ յես դու, Մարիա», և յերբ թափորը մոտեցավ՝ ուխտավորների մեջ յես նկատեցի իմ դպրոցական ընկերին՝ իր ծերունի մոր հետ։ Մայրն առաջնորդում եր վորդուն, վորը դժգույն եր և հիվանդ տեսք ուներ։

ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀԱՍՌ-АрмССР
им. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ I
ՀԱՅՆՐԻԽ ՀԱՅՆԵ—Ա. Բզնունի VII

Նախերգ... թարգմ. Վ. Նորենց 3

ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ՏԱՆՋԱՆՔՆԵՐ

I Տեսիլներ — թարգմ. Վ. Նորենցի

1. Երազեցի վայրի սիրո 7
2. Տեսա յերազ մի անսովոր 8
3. Սև ֆրակով տեսա (սոնետ) 12
4. Երազում տեսա (սոնետ) 13
5. Ինչու՞ արյունս յեռում է 14
6. Երազիս մեջ 16
7. Արյունոտ ընկեր 19
8. Հրաժեշտ տված 23
9. Քնել էյի անուշ 29
10. Խոսքիս ուժով 31

II Երգեր — թարգմ. Գ. Սարյանի

1. Առավոտյան վեր եմ կենում 33
2. Դես ու դեն եմ ընկնում 34
3. Թափառում էյի 35
4. Ձեռքդ դիր կրծքիս 36
5. Իմ վշտերի սիրուն, օրրան 37
6. Կաց, կաց դաժան 38
7. Լեռ ու դղյակ նայում են 39
8. Սկզբում յես հույսս կտրած 40
9. Նոճիներ, վարդեր 41

III Ռոմանսներ — թարգմ. Վ. Նորենցի

1. Վշտահարը . . . 42
2. Լեռնային ձայն . . . 43
3. Յերկու յեղբայր . . . 44
4. Խեղճ Պետերը . . . 46
5. Յերգ բանտարկյալի . . . 48
6. Գրենադերները . . . 49
7. Սուրհանդակ . . . 51
8. Ուղեկցություն . . . 52
9. Դոն Ռամիրո . . . 53
10. Բալթասար . . . 59
11. Մինեզինգերները . . . 61
12. Պատուհանի մոտ . . . 62
13. Վիրավոր ասպետը . . . 63
14. Նավարկություն . . . 64
15. Զղջման յերգ . . . 65
16. Մի յերգչուհու . . . 68
17. Յերգ դուկատների մասին . . . 70
18. Խոսակցություն Պադերբորնի խոպանում . . . 71
19. Կյանքի վողջույն . . . 73
20. Հիրավի . . . 74

VI Սոնետներ — թարգմ. Վ. Նորենցի

Ա. Սոնետների պսակ Ավ. Շլեգելին

1. Վատթար ճճին . . . 75
2. Կրինոլին հագած . . . 76
3. Դու դոհ չես . . . 77

Բ. Մորս՝ Բ. Հայնեյին

1. Յես սովոր եմ . . . 78
2. Յերբեմն քեզ լքեցի . . . 79

Հ. Ստր.-ին

1. Յերբ յես շտապ . . . 80

Դ. Ֆրեսկո-սոնետներ Խրիստիան Սեթեին

1. Չեմ խնկարկում . . . 81
2. Տո՛ւր, ուզում եմ . . . 82
3. Ծիծաղում եմ . . . 83
4. Իմ ուղեղում կա . . . 84
5. Տխուր, թախծոտ . . . 85
6. Մի տարի առաջ . . . 86
7. Զգույշ յեղիր . . . 87
8. Աղքատությունս . . . 88
9. Կյանքն ինձ համար . . . 89
10. Հաճախ դու ինձ տեսար . . . 90
11. Յես կուզեյի լալ . . . 91

ԼԻՐԻԿԱԿԱՆ ԻՆՏԵՐՄԵՑՑՈ

Նախերգ. — թարգմ. Վ. Նորենցի . . . 94
1. Հրաշագեղ մայիս ամսին. Թարգմանություն Գ. Սարյանի 97
2. Արցունքներից իմ հորդուն . . . » 98
3. Վարդը վառ . . . » 99
4. Յերբ աչքերիդ մեջ . . . » 100
5. Տեսա դեմքդ անուշ . . . » 101
6. Հենիր քո այտը . . . » 102
7. Ցանկանում եմ հոգիս հանդչի . . . » 103
8. Կանգնած անշարժ յերկնքում . . . » 104
9. Յերգի թևով քեզ հեռու . . . » 105
10. Լոտոս ծաղիկն է նեղվում . . . » 106
11. Հռենոսի հոսանքում վառ . . . » 107
12. Չես սիրում ինձ . . . » 108
13. Ո՛, մի յերդվիր . . . » 109
14. Իմ սիրուհու աչիկներին . . . » 110
15. Աշխարհը կույր . . . » 111
16. Հոգյակ, այսոր . . . » 112
17. Կարծես ծնված փրփրից ջրի . . . » 113
18. Սիրտս եկ խորտակվի . . . » 114
19. Այո՛, թշվառ ես դու . . . » 115
20. Նվագում են փող . . . » 116

21. Ահա մոռացար . . . . » 117
22. Ծաղիկները թե իմանային . . . . . » 118
23. Վարդերն ինչո՞ւ յեն գժգունակ . . . . » 119
24. Նրանք գանգատ են արել . . . . . » 120
25. Ծաղկում եր թմբլին . . . . » 121
26. Շատ-շատ ենք սիրել . . . . . . » 122
27. Յեղար ամենքից . . . . » 123
28. Յերկերը ժլատ . . . . » 124
29. Ուշացա յերբ . . . . » 125
30. Աչիկները լուրթ . . . . » 126
31. Աշխարհն այնպես . . . . » 127
32. Իմ սիրելի, յերբ . . . . » 128
33. Կանգնած ե մենակ մի յեղևնի . . . . » 129
34. Լինեյի յես, ախ . . . . » 130
35. Սիրուհիս ինչ հեռացավ . . . . . . » 131
36. Իմ մեծ, իմ մեծ վշտերով . . . . . » 132
37. Ցիլլատերներն հագած . . . . . . » 133
38. Շատ պատկերներ . . . . » 134
39. Սիրում ե ջահելն . . . . » 135
40. Յերբ լսում եմ . . . . » 136
41. Յերազումս . . . . Թարգմանություն Վ. Նորենցի 137
42. Սիրուհիս, յերկուսով . . . . . . » 138
43. Կանչում ե հեքիաթից . . . . . . » 139
44. Յես քեզ եմ սիրել . . . . » 140
45. Ձով պարտիզում . . . . » 141
46. Փայլում եր մթամած . . . . . . » 142
47. Ինձ տանջեցին նրանք . . . . . . » 143
48. Վառված ե բոլր . . . . » 144
49. Յերկու հոգի . . . . » 145
50. Նստած եյին . . . . » 146
51. Թունավորված են . . . . » 147
52. Տեսա յես հին մի յերազ . . . . . » 148
53. Յես կանգնած եմ . . . . » 149
54. Իմ կառքը գնում ե . . . . . . » 150
55. Յերազիս մեջ լացի յես . . . . . » 151
56. Յերազում միշտ տեսնում եմ . . . . . » 152
57. Վոռնում ե դուռ . . . . » 153
58. Քամին ցնցում ե . . . . » 154
59. Մի աստղ ցոլաց . . . . » 155
60. Տարավ Մորփեոսն ինձ . . . . . . » 156
61. Ցուրտ գիշերին . . . . » 157
62. Քառուղու վրա . . . . » 158
63. Ուր ել լինեմ . . . . » 159
64. Մութն եր պատել . . . . » 160
65. Բոլոր հին, չար յերգերը . . . . . » 162

ՎԵՐԱԴԱՐՁ—թարգմ. Գ. Սարյանի

1. Իմ անսահման խավար կյանքում 165
2. Ինչ նշան ե 166
3. Տխուր, տխուր ե 167
4. Շրջում, լալիս եմ 168
5. Գիշերը թեն 169
6. Յերբ ճամբորդելիս 170
7. Ձկնորսատան առաջ 171
8. Ձկնորսի սիրուն աղջիկ 172
9. Բարձրացել ե լուսնկան 173
10. Բազմած լուսինն ամպերին 174
11. Գորշ ամպերի մեջ 175
12. Հողմը վարտիքներ ե հագնում 176
13. Հողմը պարի յերգ ե հնչում 177
14. Տարածվում ե գիշերը 178
15. Առավոտյան, յերբ քո տան 180
16. Հեռվում ծովն իր 181
17. Այնտեղ, բարձր լեռան վրա 182
18. Հորիզոնում, հեռու հեռու 183
19. Վողջույնս քեզ, քաղաք դու 184
20. Այսպես շրջում եմ 185
21. Մտա դարձյալ դահլիճներն 186
22. Փողոցները լուռ 187
23. Ինչպես քնես հանդիստ 188
24. Սենյակի մեջ կույսն ե 189
25. Սուզված խառն յերազներում 190

26. Դժբախտ Ատլասս յես 191
27. Տարիներն են գալիս գնում 192
28. Տեսա յերազում 193
29. Ի՞նչ ե ուզում 194
30. Ամպի տակից 195
31. Մի վատ, մի վատ յեղանակ 197
32. Կարծում են յես թախծում եմ 198
33. Մատները քո ճերմակ շուշան 199
34. Չարտահայտվե՞ց արդյոք 200
35. Սիրում եյին իրար 201
36. Իմ վշտերը պատմում եյի 202
37. Սատանային կանչեցի 203
38. Մարդ, մի ծաղրիր 204
39. Արևելքի սուրբ մոգերը 205
40. Մանկիկ, մանուկ եյինք 206
41. Սիրտս նկուն ե 208
42. Դուրս ե գալիս 209
43. Յերազիս մեջ 210
44. Ի՞նչ շահ անգին 211
45. Անհամբեր մի լինեք 212
46. Ժամանակ ե արդ 213
47. Վիսվամիտրա թագավորը 214
48. Սիրտ իմ, սիրտ իմ 215
49. Դու մի ծաղկի յես նման 216
50. Մահ կլիներ այդ 217
51. Յերբ պառկում եմ 218
52. Աղջիկ, շուրթերդ ալ 219
53. Դրսում թող վոր ձյունը տեղա 220
54. Աղոթում են մադոննային 221
55. Զմատնե՞ց քեզ դեմքս 222
56. Սիրահար ես, բարեկամ 223
57. Ուզում եյի յես քեզ մոտ 224
58. Շափյուղային ու կախարդուն 225
59. Սիրտդ գրավելու համար 226
60. Կյանքն ու աշխարհը 227
61. Գլուխ եմ կոտրել 228
62. Դուք ունեք մի հյուր 229
63. Կուզենայի վոր լցվեյին 230
64. Ունես մարգարիտ 231
65. Ով առաջին անգամ սիրի 232
66. Ինձ խորհուրդներ 233
67. Պատանուն այս 234
68. Յերազիս մեջ 235
69. Ձեզ թողի հուլիսին 237
70. Բաժանված եմ շուրթերից 238
71. Գնում եյինք 239
72. Աստված գիտե 240
73. Մթին տեսիլների նման 241
74. Յերբ վոր իմ կինը դառնաս 242
75. Ձյունի նման ուսիդ 243
76. Հուսարները 244
77. Տարիներում յես եմ 245
78. Թշնամի՞ յես դարձյալ 246
79. Նույն աչքերն են դարձել 247
80. Քիչ անգամ ենք հասկացել 248
81. Յերբ յես յերգել սկսեցի 249
82. Սալամանքի բարձունքներում 250
83. Կից ապրում ե 251
84. Հազիվ տեսանք 252
85. Լեռների վրա 253
86. Շուկայի մեջտեղ 254
87. Իրիկունն ե ամռան 255
88. Գիշեր՝ ոտար 256
89. Մահը՝ այդ ցուրտ 257
90. Ասա, ո՞ւր ե 258
91. Աստվածների մթնշաղը 259
92. Ռատկլիֆ 262
93. Դոննա Կլարա 266
94. Ալմանզոր 270
95. Ուխտագնացություն դեպի Քեվլար 276

ՀԱՐՑ ԼԵՌՆԵՐՈՒՄ — թարգմ. Վ. Նորենցի

1. Նախերգ 283
2. Հարդենբերգի վրա 284
3. Լեռնային հովվերգություն 285
4. Հովիվ տղան 294
5. Բրոկենի վրա 296
6. Իլզե 297

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԾՈՎ

Առաջին շարք. — թարգմ. Վ. Նորենցի

1. Թագադրություն 301
2. Ցերեկոյան աղջամուղջ 303
3. Մայրամուտ 307
4. Գիշերը ծովափին 306
5. Պոսեյդոն 309
6. Խոստովանություն 311
7. Գիշերը նավախցում 313
8 Փոթորիկ 316
9. Ծովի հանդիստը 318
10. Ծովային տեսիլ 319
11. Մաքրություն 322
12. Խաղաղություն 323

Երկրորդ շարք. — թարգմ. Գ. Սարյանի

1. Ողջույն ծովին 326
2. Փոթորիկը 328
3. Նավաբեկյալը 329
4. Արևամուտը 331
5. Ծովահարսերի յերգը 333
6. Հունաստանի աստվածները 336
7. Հարցեր 340
8. Սփինքս 341
9. Ծովախտ 343
10. Նավահանգստում 346
11. Վերջերգ 347

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 349

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եջ	տող վերևից,		Տպված է	Պետք է լինի
13	7-րդ	»	բարբառում	բարբառում
20	6-րդ	»	գլուխն և ձեր	գլուխն և ձեր,
20	7-րդ	»	հանհերձանք	հանդերձանք,
23	8-րդ	»	դեմքեր բարձ-րացան:	մի դեմք բարձրացավ:
25	8-րդ	»	Շինդրեհանո,	Շինդերհանո,
27	4-րդ	»	դատրկին	դատրեկին
52	Վերնագիրը		ղեկցություն	Ուղեկցություն
56	Վերջին տող		շաչու	շաչում:
96	4-րդ	»	տրատու	տրատում՝
121	3-րդ		Թեդ և գրկում	Թեդ եր գրկում
146	Վերջին տող		սիրող	սիրույդ
167	3-րդ		Թմբրին	Թմբիրին
170	Վերնագրի տեղ		—	6
171	25-րդ —	տող	լռում եյին	լսում եյին
194	11-րդ	»	տանջանքն	տանջանքը
276	14-րդ	»	յարին	լարին
301	Նախավերջին	»	խայլփլում,	փայլփլում,
306	6-րդ	»	սիրում եյին	սերում եյին

[illegible]

ՀՀ Ազգային գրադարան
NL0171743

ԳԻՆԸ 10 Ռ.
ԿԱԶՄԸ 2 Ռ.